


6040

Чкаловский

стар. железнодорожный -
- рабочий поселок

7



Р903



6040

№ 39

Բ.Ա.Զ»-ի գրադարան

№ 39

24 JAN 2006

ԱՐԱՄԱՑԻՍ

ՄԻ ՔԱՆԻ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ

ԸՆԴՀԱԾՈՒՄՆԵՐԻՑ

ՄԱՍՆ ԱԽԱՋԻՆ

- I. ԱՄԿԵՐՍՆ
- II. ՎԱՐԱՆԴԱՅ-ԽԱԶԵՆ

ԳՐԱՆԻ Ե 25 ԿՈՊ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ
1907 թ.

6040

19 AUG 2011

No 39

«Յառաջ»-ի գրադարան

Ms. 39

9947.925

64-83

ԱՐԱՄԱՅԻՆ

ՄԻ ՔԱՆԻ ԳԼՈՒԽ

ՀԱՅ-ԹՐՔԱԿԵՆ

ՀՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I. ԱՍԿԵՐԱՆ
II. ՎԱՐԴՈՒՄՆԻՑ-ԽԱՂԵՆ



ԹԻԳԼԻԶ

1907

ՄԻ ՔԱՆԻ ԳԼՈՒԽ
ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻՑ

1905 թուականի փետրուարի 6-ին առաջին անգամ թնդաց երկու ազգերի մէջ վիճ բաց անող հրացանը և Բագուի փողոցները ներկուեցին եղբայրական արիւնով: «Եկյթանը» իւր նպատակն հասել էր, և այնուհետեւ երկու տարի շարունակ, մերթ առկայծելով, մերթ բորբոքւելով՝ վառւում էր կրակը, և հայ ու թուրք հարևանները յարձակումներով ու հակայարձակումներով, մի տեսդոտ, անմիտ եռանդով աշխատում էին ըստ կարելոյն միմեանց շատ վնասել, շատ ոչնչացնել:

Հարիւրաւոր գիւղեր հիմնայատակ կործանուեցին, հազարաւոր դիակներ դաշտերում, թփերի տակ, այս ու այն անկիւններում ընկած՝ նեփուած մնացին. շատ երեսաներ որբացան, շատ արաներ այրի մնացին, շատ կոյսեր բռնարարուեցին, և շատ սըրբութիւններ պղծուեցին....:

Ցովսեցին երկու կողմերն էլ, քայլայուեցին, աւերուեցին և երկու կողմից էլ հաշտուելու, նախկին եղբայրական գրութիւնը հաստատելու աղաղակները թնդացին. բայց գարշելի ձեռքը մեծ վարպետութեամբ էր թափել սպանիչ թոյնը. փոխադարձ անվըստահութիւնը թագաւորեց և թագաւորում է ժողովուրդների մէջ, և նրանք դեռ շարունակում են տնքալ, դեռ շարունակում են դողալ՝ ապագայի մասին դառն մտքեղ տածելով:

Ի՞նչ էր պատճառը այս արհաւիրների....

Դրան պատասխանելը մթքնում, ենք աւելի ձեռնհաս մարդկանց, մանաւանդ որ այժմ դեռ կը քերը չեն հանդարտուած, մըթնոլորտը դեռ լիբն է ելէքտրականոչ թեամբ, վէրքերը շատ են մեծ ու թարմ, և հակառակ կողմերը դեռ աշխատում են միմեանց մեղադրել, միմեանց սկացնել և եթէ կան մաթդիկ, որ հրապարակօրէն աշխատում են երբորդ մատիւներկայութիւնը, նրա վճռական գեր ունենալը ցոյց տալ այդ խնդրում, նրանք, տիրող պայմանների պատճառով, դեռ զգուշաւորութեամբ են մօտենում հարցին:

Տիոգրաֆիя „Երատեմ“.

Տպարան «Եղբայրութիւն».



4016 - 89

Կը գայ, իհարկէ, ժամանակը, երբ կը բացուեն զավտնի պարակները և փաստերը դուրս կը սողան այնտեղից, հրէշտառը եղենի աստառը պարզելու. իսկ ես, իբրև ականատես անցածնացաների, առանց ճշմարտութեանը դաւաճանելու, կ'աշխատեներկայացնել մի-երկու գլուխ հայ-թրքական ընդհարումներից առանց նպատակ ունենալու այս կամ այն կողմի ցաղթութիւնը երգելու, կամ «պարտութիւնը» ծազրելու. Սրանով միայն հայթրքական ընդհարումների մեծ-խելազարութիւնից մի քանի գլուխներ եմ հանում, հում նիւթեր տալու այն ուսումնասիրողներին, որ այդ խնդրով գուցէ զբաղուեն մի ժամանակ.

Ա.

Ա Ս Կ Ե Բ Ա Ն

Խաչէնի ու Վարանդայի կոհակաւոր լեռ ու բլուրները հետըգհետէ ցածրանալով՝ եկել, կարկառ գետի աջ ու ձախ ափերում իրանց յանգման ծայրերն են խթիւ, որոնց պատուանդանները լիզելով կարկառն է հոսում երբեմն անձրւներից ու ձնահարոցից գոյացած հեղեղաներով լիահուն, երբեմն էլ՝ ամարային օրերում հազիւ մինչև սրունքները հասնող ջրերով. Նրա ափերի երկու կողմին վերջաւորուող բլուրների շարունակութիւնն են կազմում Ասկերանի երբեմն հպարտ, այժմ ատամնաթափ մարտկոցները, որ բնական բարձրութիւններին արհեստականօրէն միացած՝ գետի համար միայն մի անցք են թողել 350—400 քայլ տարածութեամբ:

Ղարաբաղի ինքնապաշտպանութեան գործում, մանաւանդ Վարանդայի, Խաչէնի ու մասնաւորապէս Շուշուայ համար՝ Ասկերանը նշանաւոր գեր է խաղացել. նա մի կատարեալ Սախկալթութեան է եղել թուրք հրոսակախմբերի համար հայ-թրքական ընդհարումների սկզբից մինչև վերջը. Դաշնակցութեան փորձուած ուազմիկներն ինքնապաշտպանութեան գործի ծանրութիւնն իրանց վրայ տեսնելուց յետոյ, մեծ ուշադրութիւն դարձրին այդ կէտի վրայ. Փանահ-խանի ձեռակերտը խոշոր ծառայութիւն մատուցեց հայերին. միշտ յարձակումների ենթակայ, բայց միշտ յաղթական՝ Գանլը. Ասկերան անունն ստացաւ թուրքերից:

Բագու-Բալախաննեան գէպքերից յետոյ Ղարաբաղը թէկ խաղութիւն պահպանեց բաւական երկար ժամանակ, սակայն այդ խաղաղութիւնը կատարելապէս մակերեսոյթային էր. Բազուին անմիջապէս արձագանք տուող նախիջևանը, երեանը ու Մինքենդը գրութիւնն աւելի սպառնական, արհաւրալից դարձրին, և Ղարաբաղի թուրքերը, գժբախտաբար չկարողացան խեղդել իրանց մէջ արթնացած արիւն թափելու տեսն ու տարուելով զանազան էմիսարների ու զբգույների քարոզներով, մղաւանջն աւելի ու առելի խեղդիչ դարձրին. Ճանապարհորդ հայերը եւլախից մինչև

Շուշի ամեն տեսակ ստորացուցիչ վիրաբորանքների էին ենթարկւում. սրանց ինքնասիրութիւնը հայհոյւում, ծաղրուում էր այս կամ այն եղանակով և այդ շարունակ 5—6 ամսուայ ընթացքում, երբ Ղարաբաղում դեռ «հաշտութիւն» էր: Թէ թուրքերը որքան էին անձնատուր եղել պրօվակացիային, թէ որքան նրանք անտրամադիր էին դէպի խաղաղութիւնը, դրան ապացոյց կարող է լինել այն դէպքը, երբ նրանք Աղդամ ժամանած խաղաղարար հոգորականների ու պատուաւոր մարդկանց կոչերը լսելուց յետոյ հայ քահանայի մէջըին ձու զարկեցին: Մինչև անգամ գտնուեցին թեթևամիտ, մնապարծ թուրքեր, որ հրապարակով ասուած էին Աղդամում:— մերօնք էլ փոքրիկ ենապոն զարձան Բագւում:

Բոլոր նշանները պարզ ցոյց էին տալիս, որ հայ-թրքական ընդհարումները Ղարաբաղում ևս հնարաւոր են դառնալու, քանի որ շահագրգուռած կողմերի մէջ անվատահութիւնը գնալով՝ գնալով զարգանում է, իսկ չարիքը խեղդելու համար ոչ մի միջոց ձեռք չի առնուում և տեղական իշխանութիւնը մատների արանքով է նայում բոլոր երեսիթներին, երբեմն նոյն իսկ նպաստելով վիճը լայնանալուն, զանազան գատապարտելի միջոցներով: Ուստի Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործիչների, ղեկավարների ցանցով պատեց գաւառները, որովհետեւ պարզում էր, որ հայի գորութեան խընդիրն իսկապէս վատանգուած է Կովկասում. սկսուեց մի տենդային, խելապատռո գործունէութիւն, ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու համար:

Օգոստոսի 8-ին լարուած դրութիւնը պայթեց և թուրքերը կառավարութեան ներկայացուցիչների աչքի առաջ՝ հայ քաղմաթիւ ճանապարհորդների գերեցին Աղդամում, որոնց հետ և տեղումը ընակուող շատ արհեստաւորներ, խանութպաններ ու այնտեղի գործարաններում աշխատող բանուորներ, Ղարաբաղը ցընցուեց. վառօդի հոտն զգացուում էր և Օգոստոսի 16-ին Շուշում թնդացին հրացանները: Կէսօրուալ դէմ սուրհանդակը թուած հասաւ, տեղեկութիւններ բերելով Շուշուց: Հարկաւոր էր անպայման փակել Ասկերանը:

1905 թ. Օգոստոսի 17.

Առաւտեան երեսուն հոգուց բաղկացած մի խմբակ, Դաշնակցութեան ղեկավարներից երկուսի հրամանատարութեամբ,

լոյսը դեռ չբացուած՝ բռնեց Ասկերանը: Բայց որովհետեւ այդ ոյժը շատ քիչ էր երկու կողմերն էլ բռնելու համար, ուստի նրանք ամրացան Վարանդայի կողմն ընկած մարտկոցներում, իսկ երկու սուրհանդակ ուղարկուեց Խաչէն, որպէսզի նրանք էլ շատպես միւս կողմի մարտկոցները գրաւելու:

Լոյսը բոլորովին բացուեց: Սէյլթառուի ուռիների տակ հաւաքուել էին բազմաթիւ թուրք ձիաւորներ, Կէս ժամու չափ չորս կողմերը հետախուզելով, յանկարծ սրանք անկանոն սուր արշաւով թռան դէպի Ասկերան: Հայերը լուռ էին. բայց հէնց որ հակառակորդները մօտեցան այնքան, որ գնդակը կարող էր հասնել ինքնապաշտպանների հրացանները գոռացին երկար շարքով և երկու ուղղութեամբ. թուրքերը մեխուեցին, ապա ձիանց գլուխները շուռ տալով՝ յետ խաղացին:

Զանցաւ քառորդ ժամ և նրանք նորից իրանց սովորական, ոգևորիչ «Եա-Ալին» գոռալով՝ յարձակում գործեցին. բայց տղերքը դիրքից գուրս եկած՝ շղթայաձև դիրք էին բռնել, միմեանցից հեռու-հեռու. արագ հրացանաձգութիւնը զսպեց թուրքերի աշխայժը. սրանք յետ մղուեցին, և մօտակայ ձորակներում ձիերից իջնելով՝ քարեր գրաւեցին: Մի ժամ տեսց կոփւը. բայց թուրքերի մէջ մի տեսակ տարտամութիւն, անվճռականութիւն էր նկատում. կարծես նրանք հէնց էնպէս, անհպատակ հրացան էին արձակում, ոգեսորուած հրացանաձգութիւնից: Մէկ էլ ձի նստեցին ու գրո՞ւ տուրին դէպի Խրամորթ ու Խանաբադ գիւղերը. երկու ժամ էլ այստեղի կոփւը տեսց, բայց ոչ մի արգիւնք: Թուրքերը կորուստներով յետ նահանջեցին: Հայ հրամանատարներից մէկն անցաւ Խաչէն, այնտեղից անցելութիւններ իմանալու, և խմբերն շտապեցնելու դէպի Ասկերան: Նա դեռ չէր վերադարձել, որ թուրքերը ժամը 4-ին մօտերը, աւելի ստուարացած, մօտ 500 հոգի, աւելի խիզախ յարձակմամբ՝ բշեցին դէպի Ասկերան: Հայերը թուրքերի բաջաբար յառաջ խաղալը տեսնելով, իսկոյն գուրս վագեցին դիրքերից, մօտեցան ուղղակի խճուղուն, և դիմագրաւեցին հակառակորդին. հէնց այդ միջոցին էլ Խաչէնու կողմից վրայ հասաւ այստեղ անցած հրամանատարը իւր մի քանի ընկերներով՝ և թուրքերը մնացին երկու կրակի մէջ: Էլ անխորհմութիւն էր նրանց կողմից կոփւը շարունակելը. յետ քաշուեցին բոլորովին և մինչև իրիկուն այլ ևս ոչ-ոք չերեաց: Հայերի ձեռ-

ՔԸՆ այդ օրը 70 ձի ընկաւ սարերից իջնող քոչուորներից:
Օգոստոսի 18.

Լոյսը նոր էր բացւում. Աղդամի, Սէյիթտուի, Մարզլուի, Շէլլուի և այլ կողմերից բազմաթիւ ձիաւորների ծայրը բացուեց. նրանք գալիս էին ու գալիս և վերջը չէր հասնում. եկան, հաւաքուեցին Հարաղաջի մօտ գտնուող Հասան-Աղի քարվանսարացին կպած թրբական հանգստարանն ու մի մեծ շրջան կազմեցին: Քարոզ խօսող կար, թէ ինչ՝ չիմացուեց. միայն միքանի բոպէից յետոյ նրանց մէջ նկատուեց մեծ շարժում, ապա հազարաւոր ձիաւորները երկու մասի բաժանուելով ձախ թևը թեքեց գէպի նախիջնանիկ, իսկ աջ՝ գէպի Խանարադ, մինչդեռ կենդրոնը ամենամեծ ուժը վերցրած՝ ճակատեց գէպի կիրճը, Շուշի անցնելու:

Դրութիւնը լուրջ էր, բայց ոչ յուսահատկան. Վարանդայի մարտկոցներում դիրք էին բռնել 30-աշակ զինուորներ, Խաչէնի կողմից նոյնպէս մի տասնեակ բռնել էր վերևի պատր, իսկ այնտեղ, ճանապարհի վրայ կուացած ժայռերի վրայ պտտում էին երկու խմբակներ: Մօտակայ գիւղերում գտնուում էին եւ պատրաստ օժանդակ խմբեր, որոնք, պէտք եղած գէպօրում՝ կարող էին ոչ ուշ քան 15 րոպէում հասնել: Երբ թուրքերը պատերազմական որոշ տակտիկայով իրանց թևերը պարզեցին, հրամանատարները հասկացան, որ այդ օրը հանաք չի լինելու. ուստի երկու սուրհանդակ թուրքին գէպի օժանդակ խմբերը: Ապա զեկավարներից մէկը հինգ հոգի վերցնելով՝ թուալ գէպի նախիջնանիկ գիմող թուրքերը, և Զրմախութ կոչուող թումբը գրաւելով՝ կարողացաւ շեշտակի գնդակակոծութեամբ՝ թուրքերի առաջը փակել. բայց նրանք բաժանուելով երեք մասերի, աշխատեցին շըրջապատել կուուղ հայերին. օղակը կամաց-կամաց նեղանում էր. տղերը թէն կուում էին յամառութեամբ, բայց բոլորը միասմի կը կոտորուէին, եթէ այդ իսկ րոպէին չհասնէր օգնական խումբը, Գեցցէ Դաշնակցութիւնը մակագրութեամբ դրօշակը ծածանելով: Հարուածը կուռ էր, համարձակ. թուրքերն ընկրկեցին, և չկարողացան գիմաղրել, չնայելով որ ահագին բազմութիւն էին կազմում. սկզբում նեղելով, ապա հալածելով՝ հայերը նորից բշեցին իրանց նախիկին տեղը, հանգստարանը և ամենի վահանակը մասերի ու գէպի Խամարթ արշաւեցին. բայց գիւղացիներն ու օգնութեան հասնող մարտիկները մեծ թափուկ հակայարձակում

մղում: Յիս էր մղուել և կենդրօնը. գործը բաւական յաջող էր հայերի համար. բայց մարտկոցներում դիրք բռնած խմբի մասնուող զեկավարներից մէկը ողերուելով յաջողութիւնից ու հրոսակախմբերի փախուստից, հինգ ձիաւորով դուրս թռաւ գիրքից և փախչող թուրքերի յետերիցն ընկաւ: Թուրքերը տեսնելով իրանց հետամտող վեց հայերին, նրանցից մի հարիւր հոգի դարան մտան թթենիների տակ, աննկատ մնալով: Ոչ մի ազդանքան, ոչ մի գոսոց չօգնեց. տղերը քշում էին, առանց մօտալուտ վաճանդի մասին տեղեկութիւն ունենալու: Մարսափը տիրեց բոլորին. մինչէ օգնութեան հասնելը՝ նրանք արգէն վերջացած կը մինէին: Քշում են, քշում են թշնամու յետերից՝ ձիանց վրայից հրացան պարպելով փախչողների թիկունից. բայց հէնց որ հասան և դարանակալներից 30-40 քայլի վրայ էին գտնուում, յանկարծ գոսացին թուրքերի հրացանները... մէկի ձին ընկաւ. բայց տղերը չփոփուեցին. անթիւ զնդակների տակ հետիւուալ մնացած դինուորին գաւակ առնելով՝ յետ փախան: Այդ գէպը բարաւականաշակ աղդեց գործի հետևանքին. թուրքերը սիրտ առնելով՝ «Եա. Ալիք»-ն գոտացին, ու զլիապատառ վրայ թռան: Մարտկոցի զինուորները կարծելով, որ հրամանատարն սպանուած և բանը բանից անցած է, քաշուեցին վերևի գիրքը. այդ հանգամանքից օգտուելով՝ թուրքերը խիսցին և նրանցից մի 30-40 հոգի թուան կիրճով գէպի Շուշի: Կարծես եռացրած ջուր մազուեց հայերի գլւխին... Շուշին բոցավառ՝ ալրուում էր, սուրհանդակ սուրհանդակի յետերից գալիս, Ասկերանի գրութիւն մասին տեղեկութիւններ էր թոցնում Շուշի, իսկ այստեղ գեռ պատուում են շղթան... Մի ելէքտրական ցնցում առաջացաւ բոլոր խմբապետների ու զինուորների մարմնով և պղպատէ կազմով՝ ճակատ գրին թուրքերին. հարուածը խիստ էր, անողոք. հրամանատարներից մէկը խիեց, սեպաձեւ մտաւ թուրքերի մէջ և նոր հասնող օժանդակ թուրքիկ խմբի օգնութեամբ, նրանց աջ թևը հալածեց մինչև Շէլլու. կենդրոնի հրամանատարը նոյն ձեռվ սեղմեց հակառակորդներին. Խաչէնի զեկավարը ևս հերոսաբար մաքրեց ամբողջ գիծը, և թուրքերը ծածկուեցին: Զանցաւ երկու ժամ, նրանք նորից հաւաքուեցին Հարաղաջ, բաժանուեցին երկու պատկառելի մասերի ու գէպի Խամարթ արշաւեցին. բայց գիւղացիներն ու օգնութեան հասնող մարտիկները մեծ թափով հակայարձակում

տուին և թշնամին զգալի կորուսաներով յետ մղուեց, կամ աւելի շուռ՝ փախաւ և Աղդամ ապաստանեց:

Ժամը 3-ի մօտերը հեռուից մի սպիտակ շորերով ձիաւոր սկսեց զդակը շարժել բարեկի եղանակով և ինչ-որ գոռալ. բայց ձայնը չէր հասնում. Դեկավարները դիրքից մօտ հրաւիրեցին նըրան, սակայն նա չէր վատահանում մօտենալ. երկու ձիաւորներ քշեցին Վարանդայի գիրքից և մի տասը ըռպէից յետոյ սպիտակ շորաւորին իրանց հետ վերցնելով՝ յետ եկան. ստրամնիկ էր:

— Ի՞նչ էք ուղում, — հարցրին նրան:

— Նահանգապետը Շուշի է, — պատասխանեց նա. — Հրամայել է գաւառապետին, գաւառապետն էլ ինձ ուղարկեց ձեզ մօտ նահանգապետի կամքը յայտնելու, որ բաց թողնէք անցնելու սարերից վերադարձած և Խօջալլուից վերև իջած բոչուրներին, իսկ զինուած ուժերի Շուշի անցնելը՝ արգելել:

— Յետ դառէք և յայտնեցէք գաւառապետին, նա էլ հազորդէ նահանգապետին, թէ Ասկերանի հայերն ասացին, որ եթէ նահանգապետը պատուիրած լինէր բոչուրներին կոտորել ու թալանել, իսկ զինուած խմբերին թողնել, մենք էլի՞ հակառակը կանչինք. Նրա կարգադրութիւնն ուշացած է և կարող էր բոլորովին հանգիստ լինել, որ մենք թալանի համար չենք այստեղ նըստել. Ստրամնիկը «լուսմ եմ» ասաց ու ձին նստելով հետաքաւ. մի ժամ չանցած՝ քօչի ծայրը բացուեց. ոչխարների և տաւարների հօտերով՝ լցուեցին Ասկերանն ու ճանապարհները. հէնց այդ միջոցին, որտեղից որտեղ, հալածուած թուրք ձիաւորները, մօտ 1000 հոգի, հարայ-հրոցով, աղմկելով, խառնուեցին հօտերի մէջ և սկսեցին կրակել աջ ու ձախ. Հայերն այս անգամ իսկապէս շփոթուեցին. սա մի խորամանկ միջոց չէր արդեօք, քօչի անցնելը պատրուակ բոներով, նրանցով շփոթեցնել հայերին և թուրքերին յարմարութիւն տալ Շուշի հասնելու...: Մինչև հայերը կ'ուշաբերուէին, հակառակորդներից հարիւր հոգի թուան, անցան Ասկերանի կիրճով. Իսկոյն հրաման արուեց կարել Խօջալլուի իջնող քօչի մասցըրդը և կիրճը նորից փակուեց. թուրքերը վերջնականապէս յետ փախան և այդ օրն այլևս չերեացին. Զինուորներն իրանց բարկութիւնը ցանկացան շուծել քօչուրներից, բայց թոյլ չտրուեց, թէև 18 ոչխար էլի գրաւեցին.

Թուրքերն այդ օրը թողեցին մի քանի հրացան, և երեք դիակ

մնացածը քաշել, տարել էին. բաւական շատ պէտք է լինէր, մանաւանդ Խրամորթի տակ. հասարակ աչքով կարելի էր լինում տեսնել շատերի ձիավոր լինելու. Հայերի տուած կորուսալ միայն մի ձի էր:

Ասկերանցիները Շուշուց գեռ ստոյգ տեղեկութիւն չունէին կոուի ընթացքի մասին և գիտէին, որ տափարակի թուրքերը հետեւալ օրը աւելի մեծ ուժով պէտք է վրայ հասնէին, Ասկերանը խեղգելու, և Շուշուայ հայերի հարստութեան թալանին մասնակցելու. ուստի բոլոր պատահարների առաջն առնելու համար նուրանոր խմբեր կանչուեցին, զանազան հրահանգներով տեղաւորացան բոլոր գիրքերում, սպասելով լուսարացին:

Օգոստոսի 19.

Խաչէնի թուուցիկ խումբը ևս հաւաքուել, բոնել էր Ասկերանի մարտկոցները, Խանաբաղի այգիներն ու ճանապարհի վրայ գըտնուող բլուրները. Պահակախմբերը գիշերը չհետացան դիրքերից, վախինալով, որ մի գուցէ զինուած թուրք խմբեր անց կենան, բայց ինչպէս ցերեկը, նոյնպէս և գիշերը՝ կատարեալ մեռելութիւն էր տիրում ամրող ճանապարհի կրկարութեամբ, մինչև Ղարաղաջ. Միայն այդ օրը, ինչպէս պատահեց, մի կառք աշշաւասոյը դուրս թուաւ Հասան-Աղի քարվանսարայի մօտից, Ասկերանի ուղութեամբ. Խաչէնի կողմից մի անդամ հրացան արձակելով՝ կանգնելու նշանը տուին, բայց կառը չանսաց, առաջ էր խաղում. այն ժամանակ վեց հոգի վրայ վազեցին դիրքերից և յարձակուեցին կառքի վրայ. մէջը նստած էին մի քանի թուրքեր. Նրանք յարձակուողներին դիմաւորեցին հրացանաձգութբամբ, բայց մի քանի բոպէից յետոյ ընկան ամիսնքն էլ զնդակահաւ, կառը մնաց ճանապարհի մի կողքին, իսկ ձիաները հայերը տարան:

Ժամը 10-ին մօտ Խօջալլուի կողմից դէպի մեզ իջնող մի ձիաւոր նկատուեց, որ փափախով և այլ միջոցներով աշխատում էր ցոյց տալ, թէ «ուրիշ» մարդ չէ, հրացան չարձակէր. Երկու ձիաւոր հասան նրա մօտ և միասին վերադարձան. Ստրամնիկ էր. նա ասաց, որ Շուշի արգէն հաշտուել են երկու կողմերը. հայերի թաղն աւերտած է հրդեհից. թուրքերի կողմից մարդկային կո-

ըռւստը աւելի մեծ է, բայց հայերը տնտեսապէս ուղղակի խորտակուել են: Ասաց նաև, որ այդ օրը Շէյխ-Ռուլ-Խալամին սպասում են Շուշում, հաշտութիւնը կատարեալ դարձնելու համար: Յայտնեց որ կոռուի ժամանակ նահնանգապետը մինչև վերջը թուրքական թաղումն է եղել և հայերը չէին կարողանում նրա մօտ գնալ. ապա նորից կրկնեց նահնանգապետի կամքը, որ նախընթաց օրուայ ստրաժնիկն էր յայտնել. այն է՝ պոստին ու քոչուրներին ձեռք չտալ, բայց զինուած խմբերի արշաւանքն արգելել: Նա գնաց, բայց հայերը չէին ուզում հաւատալ, թէ Շուշում հաշտութիւնն արգէն կայացել է. մանաւանդ չէին ուզում հաւատալ, որ հայկական թաղը կրակի ճարակ է դարձել:

Թիչ յետոյ ճանապարհի վրայ մի կառք երևաց. ազդանշանը արուեց և կառքը կանգ առաւ. երկու ստրաժնիկներ մօտեցան և ինչ որ գոռացին, բայց լսելի չեղաւ. աւելի մօտ գալով, ասացին որ փոստն են Եւլախ տանում: Փոստի օր էր այդ օրը, թէ ոչ, միմնյոն է, հայերը կառքը բաց թողեցին և նա առաջ անցաւ դատարկուած ինուղով:

Ժամը 11-ից ըիչ անց էր, յանկարծ Ղարաղաջի կողմից հարիւրաւոր հրացանների ձայներ բարձրացան. հեռադիտակը պարզ ցոյց էր տալիս, որ ուռենիների մօտերը հաւաքուել են բազմաթիւ ձիաւորներ, յառաջախաղ խմբերը հանգստարանով զէպի Խրամորթ գիւղն էին գնում, իսկ հանգստարանի մի ծայրում կանգնած են երկու փուրգօններ, որոնք կամ ուղմամթերք, կամ ուտեկու պաշար էին պարունկում իրանց մէջ: Կոիւը բանի գնաց, կատաղի դարձաւ, և թուրքերի շարունակ, արագութեամբ զէպի գիւղը մօտենալը ցոյց էր տալիս, որ նրանք վճռել են ինչ գնով էլ լինի, Խրամորթը վերցնել: Այն ժամանակ Ղիջ-Բաղ գիւղի մօտերից Խաչէնի 2 թուուցիկ ձիաւորների խմբերը ձիանց ականջը մտած՝ թշեցին գէպի կոռուի վայրը: Միս կողմից էլ հասան Քարագլուխ և Խանաբադ գիւղերի տեղական ուժերն ու փոկեցին հազարաւոր թուրքերի հոսանքի առաջը: Կէս ժամու չափ անորոշ մնաց դրութիւնը, թէ ո՞ր կողմը պէտք է լնկըրկի: Սակայն ահա Ղիջ-Բաղի տակից, խճուղու երկարութեամբ՝ կարմիր խաչով դրօշակը ծածանելով, գէպի Խրամորթ սլացաւ Վարանդայի և Խաչէնու մարտկոցներում զիրք բռնած մարտիկներից մի խումբ. նրանք գնդակի արագութեամբ հասան, մեծ ուժով զարկեցին թուրքերի

ձախ թերթ, մի զարկ, որ կոռուի բախտը որոշեց. Թուրքերն անկանոն նահանջով յետոս փախան, բազմաթիւ դիակներ թողնելով Խրամորթի տակ: Փախչողները վերցնելով իրանց հետ փուրգոնները, հանգստարանում մի քիչ կանգ տռան, տարած դիակները երեսի թաղելու համար, ապա ցրուեցին զանազան ուղղթեամբ, և այնուհետև էլ ոչ ոք չերևաց:

Կէսօրից յետոյ անց կացաւ մի կառք, կօգակներով շրջապատուած. զա, ինչպէս ստրաժնիկն էր ասել, պէտք է որ Շէյխ-Ռուլ-Խալամը լինէր: Յետոյ ասել էին, որ նրա վրայ հայերն Ասկերանում զնդակ են գցել. բայց դա մի ամենալիրը, պրավակատօրական սուտ է. ոչ մի հրացան չի արձակուել:

Օգոստոսի 20.

Թուրքերի յամառութիւնը տարօրինակ էր. Շուշի անցնելը նրանք իրանց համար նշանաբան էին զրել, և, չնայելով որ ամեն անզամ յետ էին մզում կորուստներով, յետոյ էլի էին յարձակւում, ուժեղացած նոր եկող խմբերով: Այդ օրը նրանք նորից գրոհեցին զէպի Ասկերան, բայց Վարանդայի ու Խաչէնի հայ խմբերը նրանց սեղմեցին երկու կրակի մէջ և հակառակորդը նորից զոհեր տալով՝ փախուստ տռաւ, Ղարաղաջի ուռենիների տակ հանգստացան թէ խորհուրդ կազմեցին, յայտնի չէ, միայն երկու ժամից յետոյ ձի հեծան, ու քշեցին զէպի Խրամորթ: Այդ գիւղը տարօրինակ բախտ ուներ. հէնց որ թուրքերը մի որեէ կէսօռաւ անյաջողութեան էին հնթարկուում, ձիանց զլուխները իսկոյն զէպի այնտեղ էին շուռ տալիս: Բայց ինքնապաշտպանութեան զեկավարները այդ միշտ ի նկատի էին աւնիցել, և զիւղը ուժեղացրել. ուստի ալս անգամ ևս թուրքերը բշուեցին, մի քանի դիակներ և հրացաններ թողնելով կոռուի տեղում:

Վարանդայի կողմի Ասկերանի շուրջը զիրքերի խմբագետներն ու զեկավարները հաւաքուած՝ զինուորական խորհուրդ են կազմել, իրանց անելիքնին պարզելու համար: Այդ միջոցին զիրքի պահապանը զուաց. Կանգնիր: Կառավարութեան ինչ ո՞ր պաշտօնեայ էր. անցել էր գետը ու երկու ստրաժնիկներով գալիս էր զէպի մարտկոցները: «Կանգնիր»՝ հրամանը լսելով՝ նա ստրաժ-

Նիկներին թողեց և ինքը մենակ առաջ անցնելով, ցած իջաւ ձիուց ու սպասեց, երկու դեկավարները դիմաւորեցին նրան երկու վիճուրներով: Սա պրիստաւ եւն էր, հայ:

Պարոններ, — ասաց նա. — հաշտութիւնը Շուշում կայացաւ: Հայ ու թուրք գրկախառնուած՝ հաշտութիւնը յայտարարեցին, արտասուեցին և պատկառելի թափօր կազմեցին, Բայց նահանգապետը խիստ բարկացել է, որ Շէյխ-Ռէլ-Խոլամի վրայ այստեղ գընդակ է գցուել:

— Շուտ է, զզուելի սուտ՝ պատասխանեցին Ասկերանցիները,

— Այսպէս, թէ այնպէս, հաշտութիւնն ընկել է. այժմ ինդրում եմ, այստեղ հանգիստ լինել, բոչուորներին ազատ բաց թողնել: Նրանց ապրանքները Խօջալուի մօտ միմեանց գլուխ թափուած՝ կը կոտորուին սովից, և պատասխանատուն հայ գիրկերը կը լինին: Շուշուայ թուրք ձիաւորները պէտք է վերադառնան իրանց տեղերը: Նրանց չկպչէք. միայն դուք կարող էք առաջ այժմ այստեղ հսկել, որպէսզի նոր-նոր խմբեր չանցնեն Շուշի և հաշտութիւնը խանգարեն: Յուսով եմ, որ ասածներս կը լսէք:

— Իսկ Շուշին, ինչ դրութեան մէջ է Շուշին, — հարցրին խօսակիցները, թէն սուրհանդակներն արդէն լուրեր բերել էին:

— Շուշին աւերուած է, — պատասխանեց պլիստաւը. — Հայ-կական թաղի ամենահարուստ մասը իրա միջի խանութիւրով՝ կրակի է մատնուել: Թուրքերը կրակը դրել են երկու տնից, բայց քամին տնէ տուն է շպրտել ու հրդեհը մինչև վերի-թօփիխանէն է հասցրել:

— Իսկ թուրքերի տներից չեն վառուել:

— Վառուել են մի 60—70 տուն. բայց մարդկային կորուստ են ունեցել:

— Շատ լաւ. հիմա դուք ինչ նպատակով էք եկել մեզ մօտ:

— Այն նպատակով, որ հանգիստ կենաք և գրէք Խաչէնցիներին, որ նրանք ևս խոհեմ գտնուեն, ու չշարժուեն տեղներից, թէ չէ՝ յետոյ ամբողջ պատասխանատութիւնը հայերի վրայ կընկի: Ես էլ կանցնեմ Խաչէնցիների մօտ:

— Մենք չգիտենք թէ Խաչէնցիք ինչ կը պատասխանեն. բայց այսքան կարող ենք ասել, որ մեզ համար այդ տեսակ հաշտութիւնն անհասկանալի է. ինչ հաշտութիւն, երբ այսօր թուրքերն աւելի մեծ ուժերով յարձակում գործեցին Ասկերանի և Խրամոր-

թի վրայ: Դրանից այս է հետևում, որ թուրքերը պարզ ասում են — Շուշին իրա տեղը, մենք մեր տեղը: Մենք էլ պատասխանում ենք. — թուրքերը եթէ հանգիստ կենան, մենք էլ հանգիստ ենք ու հանգիստ:

Պրիստաւը գնաց: Գիշերը խորհուրդ եղաւ Խաչէնցիների հետ, թէ ինչ դիրք բռնել, ու որոշուեց. — հանգիստ մնալ այն չափով, ինչ չափով որ թուրքերը կը լինին:

Խորհրդակցութեան ժամանակ էր, որ Խանաբաղի արևելեան կողմից սուրհանդակը հասաւ, թէ թուրքերը Խրամորթի տակ նը-կատում են, հրացաններ են արձակում, բայց թէ ինչ նպատակով, յայտնի չէ: Միևնոյն ժամանակ էլ Աղդամի մօտերը Ահարոն-եանների և միւմների գործարանների ամբողջ մնացած մասերը բոցավառուեցին, Դրանից էլ լաւ հաշտութիւն...:

Եթէ կոիւ է, թող լինի, — վճռեց խորհուրդը և ծրագրուեց մանրամասնօրէն, թէ յաջորդ կոիւներն ինչ եղանակով պէտք է տարուեն:

Օգոստոսի 21.

Լուսաբացին թուրքերը մի տատամսոտ յարձակում գործեցին Խրամորթի տակ. բայց դա աւելի ցոյցի բնաւորութիւն էր կրում, քան թէ յարձակման Հայերը նրանց առանց ուժեղ դիմացրութեան քշեցին և ի արիտուր՝ վասեցին Խանաբաղի մօտ գտնուող Հասան-Աղդի հրաշալի ամարանոցն ու թուրք Խօջալու գիւղը, որ բնակչութիւնից դատարկուած էր, իսկ Վարանդայի կողմից վասուեց Զհան-Բաղլար թուրք գիւղի հիւղերը: Իսկ ներքում, Աղդամի շրջանում, դեռ միտում էին հայ գործարանատէրերի միւիօնանոց շինութիւնները:

— Ինչու են թուրքերը նորանոր յարձակումներ գործում, — հարց տրուեց Ասկերանով անցնող մի ստրանիկի, որ Աղդամից էր գալիս: — Միթէ Շուշուայ հաշտութեան մասին չեն լսել:

— Լսել են, — պատասխանեց նա. — բայց ասում են: — Շուշին իրա տեղը, մենք մեր, այստեղ հաշտուել են, մենք չենք հաշտում:

— Մեղքը իրանց վիզը. ուրեմն՝ մենք էլ չենք հաշտում. — վճռեցին հայերը, և որոշեցին ոչ ոքի աղատ չթողնել, Շուշուց վերադառնող մինի նա, թէ Շուշի գնացող, մինչեւ որ կառավարու-

թիւնը խաղաղացման արդար միջոցներ ձեռք կառնէ: Ուրիշ հը-
նար չկար հարևան թուրքերի յամառութիւնը կոտրելու. միայն
ամենառուժեղ կերպով դիմագրուելն ու նրանց հալածելն էր մոռմ
մէջտեղ:

Գիշերներն Ասկերանում շատ ցուըտ է լինում. բայց հայերը
տանում էին բոլոր զրկանքները, օրերով տուն չէին տեսնում,
գիւղ չէին մտնում. ծանր, պատասխանատու գերում էին, և աշ-
խատում էին իրանց վրայ գրուած յոյսերն արդարացնել: Խաչէն-
ցիները գրաւել էին իրանց կողմի մարտկոցների և Ղարաղաջի մի-
ջև ընկած տարածութիւնը, իսկ Վարանդացիները, մարտկոցների
և Զայ-Բախչա կոչուող թթենիների միջի տարածութիւնը, մինչև
Լաշին. Ղայա, ու սպասում էին լուսանալուն:

Օպոստոսի 22.

✓ Առաւօտեան երկու կողմն էլ կազմ ու պատրաստ՝ կանգնած են. իւրաքանչիւր զինուոր իւր տեղն է և սպիտակ ֆօնի վրայ կարմիր խաչով դրօշակը Հ. Յ. Դ մակագրութեամբ Վարանդայի ու Խաչէնի գաղտնի երկու դիրքերից պայմանական «պատրաստ ենք» նշաններն են անում: Թառորդ ժամ չանցած՝ Խաչէնու ամենաբարձր դիրքից «գալիս են» նշանը տրուեց: Այդ Շուշուց վերադարձողներն էին, թուով 11 հոգի. Նրանք զգուշաւորութեամբ, չորս կողմերը դիտելով, եկան ու մտան Ասկերանի պատերի մէջ: Հայերն իսկոյն պատեցին նրանց և առանց սթափուելու ժամանակ տալու, սրով կոտորեցին բոլորին ու հաւաքեցին բուրգերից մէկի մէջ, որպէսզի միւս եկողները կասկածի տակ չընկնեն: Սպանուածների խուրջինները լիբն էին Շուշուայ թալանով.— Կնկայ կօշիկներ, «բեղիկիւներ», չիթելաներ, շալեր, սապօն, կոճակ, և այլն:



Նոյն այդ միջնորդին էլ բազմաթիւ թուրքեր երկու ֆուրգոն վերցրած՝ ներբեկից դէպի Խրամորթ ուղղուեցին. բայց հայերը մի ուժգին գրոհով վրայ ընկան և թուրքերը ֆուրգոններն իրանց միջի պարունակութեամբ հայերի ձեռքին թողնելով՝ փախան դէպի Սէլիթառ և Շէլլու:

Ծուշոց վերադարձող անհամար ձիաւարներ եկել, Խօջալուի
մօտ էին հաւաքուել, բայց չէին լրջում, մօտենալ Ասկերանին,

թէս առանձին ոչինչ չէին նկատում: Առաջուայ 11 հոգին սպա-
նուել էին առանց աղմուկի, իսկ Խրամորթի վրայ յարձակումը
շատ կարճ էր տևել և հրացանների ձայնը չէր հասել վերադար-
ձողներին:

«Գալիս են». նորից նշան տուաւ Խաչէնի գրօշակը: Ահա մի
30 հոգի կողակներով զրջապատռւած, զինավառ, պրիստաւն էլ
առաջներին, եկան ու անցան Ասկերանով: —Ձևոք չտաք. —դիբ-
քից դիբը անցաւ զեկավարների հրամանը. և թուրքերն ապահով
անց կացան, առանց նոյն իսկ զգալու, որ չորս վերսա տարածու-
թեամբ անց են կացել դիբք բռնած հայերի միջով՝ 60—70 բայլի
վրայ: Կողակները վերադարձան, և, թէ ուր զնացին, չիմացուցց
Խօջալուի մօտ ճացած թուրք ձիաւորները տեսնելով, որ իրանց
մի մասն Ասկերանն անցաւ առանց որևէ միջնադէպի, մի մեծ
մաս պոկուելով նրանցից, թուով 200 կամ 250 հոգի, պրիստաւի
առաջնորդութեամբ, սրարշաւ եկան: Հայերն այնքան սպասեցին,
որ թուրքերի վերջը գուրս եկաւ Ասկերանից, և հէնց որ ամբողջ
խումբը մտաւ օդակի մէջ, չորս կողմից գտորային կրակ բաց ա-
րին: Պրիստաւը մի քիչ կանգնեց, գէս քշեց, զէն քշեց, գոռաց,
բայց գործի լրջութիւնը տեսնելով՝ խոհեմարար գուրս թուաւ ճա-
նապարհից զէպի Խանարագ, ապա զէպի Խանքենովի ու անհետացաւ:
Թուրքերն աջ ու ձախ կողմերից կրակի Խանովիպելով, ցան-

թուրքերն աշ ու ապա զողսորց վկայու համբարձուկ, շամացան յետ քաշուել, բայց կիրճը փակուած էր խցանի պէս ու ջրանց ճակատին որոտացին դիրքապահների հրացանները: Շուռ տուբին դէպի ձախ, ցանկանալով Ալիջ-Բաղի այգիներում ապաստանել ու զիմադրել, - էլի ցանկապատերի ամբողջ երկարութեամբ հրացանների գնդակներ տեղացին ճակատներին: Շուռ տուբին դէպի, աշ, նոյնպէս կրակի հանդիպեցին. ցանկացան քշել դէպի Հառան Աղի քարվանսարան, սակայն նախօրօր հայերն այնտեղ, թրքական գերեզմանոցում դարձն էին մաել, և թուռքերին գնդակու կոծելով՝ յետ թշեցին դէպի վեր. թուրքերը նոյնիսկ ժամանակ չունեցան ուսից հրացան ցած բերել ու մի գնդակ արձակել: Զիանքը Շուռի սոված էին մնացել, թէ յօդնած էին, յայտնի չէ, բայց այլ ևս զժուարութեամբ էին յած: Ի իսկ Սէյիթտուի և Շելլուի մօտերը հաւաքուած բարձավահար գրադարձութիւն ծիաւորներ, տմարդուն օգնութեան չէին հաջուած արան հանդիսատեսի դեր էին կատարում:



Կոմիւը. կամ կոտորածը երկար չտևեց. հայերը ճարպիկութեամբ համսում էին ամեն տեղ, և բաւական յաջող գնդակ էին զցում. Երկու ժամից յետոյ ամբողջ դաշտը, ճանապարհի երկարութեամբ՝ փռուած, լցուած էր ձիանց ու մարդկանց դիակներով. Գուցէ շատերն էին փախել, յայտնի չէ, բայց միայն վեց ձիւոր նկատուեց, որ ընդհանուր կոտորածից ճողովրելով՝ քշեցին սրարշաւ դէպի Դուրքերը, Աախն-Դայի ձորով:

Դաշտը խանազուեց. արիւնոտ գործը վերջացել էր և հայերը դանդաղութեամբ՝ ընկածների հրացաններն էին հաւաքում. Հաղիւ վերցրել էին 22 հրացան, որ Ղարաղաջից ներք գտնուող այգիների բացուածքից տարածուեց զինուորական շեփորի ձախը, և ճանապարհի վրայ երեացին բազմաթիւ հետեւակ զինուորներ. Իսկոյն հայերը յետ բաշուեցին դաշտից և ծածկուեցին դիրքերում ու թթենիների տակ. Վարանդայի կողմը դարձող զինուորներից մէկը ջրադացի կողքին ընկած գետափին չաղալի ծակերից մէկում մի թուրք նկատեց, որ ցանկացել էր այստեղ աղաստանել, կիսով չափ խցկուել էր, բայց կէսը գուրսն էր մնացել. հայր Նըրան գուրս բաշեց, սպանեց դաշոյնով և նրա այնալու հրացանը վերցրաւ...: Արեան օր էր այդ օրը. մարդկանց մէջ գաղանն էր խօսում, վայրենութիւնն ամենառութեղ կերպով արտայայտուելու օր էր, և մարդիկ կատարում էին քսամնեցնող գործեր:

Թուրքերի կորուստը շատ մեծ էր. մած էր մանաւանդ նրանով, որ շատ նշանաւոր թէկեր ևս այստեղ իրանց համար գերեզման գտան, և այլ ևս աւազակախմբեր կազմել չէին կարող. Հայերի կորուստը իրանց արձակած փամփուշտներն էին. ոչ մի վիրաւոր, ոչ մի սպանուած, որովհետեւ թուրքերը դիմադրելու հնարաւորութիւն չէին ունեցել:

Հայերը հասել էին Ասկերանի նախկին դիրքերին, ձիանքը պահ տուել վերեկ հարթոցում, իրանը էլ դիրքից քիչ վերև նըստաւել. Աղդամից հասած հետեւակ զօրախումբն էին դիտում. Որտեղից էր, յանկարծ զինուորների կողքից մի հրացան պայթեց, օրից կէս բոպէ անց՝ հետեւեցին զինուորների հրացանները. Ի՞նչ էր պատահել... գու մի ասիր, ճանապարհի փոքրիկ ձորակում և թուրք թագ կացած են լինում. զինուորները հէնց որ երեւամ են, սրանց հայերի տեղ են ընդունում, թէ ինչ է թուրքերը կրակում են ու մի զինուոր վիրաւորում. հետեւանը այն է լինում, որ այդ

դժբախտներին էլ զինուորներն են գնդակի բռնում, կոտորում: Մի քիչ էլ անց, զինուորները էլ ճանապարհն ի վեր բարձրանալով, ցղթաներ կազմեցին, պառկեցին ճանապարհի կողքին ու սկսեցին սկզբում կանոնաւոր համապարկեր, ապա յաճախեցըրած գնդակներ տեղալ դէպի Վարանդայի Ասկերանը: Հայերն սկզբում կասկածում էին, թէ դէպի իրանց կը լինի ուղղած հրացանաձգութիւնը. բայց երբ գնդակներն սկսեցին նրանց կողքերի քարերին չխկ-չխկալ, կասկածը փարատուեց. իրանց տուին մօտակայ ձորը, այստեղից վեր բաշտելով՝ ձիաները հեծան, բարձրացան սարալանջը, ուր այլ ևս գնդակ բռնել չէր կարող: Բայց և այնպէս՝ էլի Ասկերանը բաց չթողեցին. մարտկոցները գտարկելով՝ Զհան-Բաղլարի մօտ պահակներ դրին, որպէսզի վերեկց արգելեն Ասկերանն անցնել:

Այս անգամ Ասկերանը փակելը զուտ ուղմագիտական տեսակէտից էր. ցանկանում էին Շուշի եղած ուժերն այնտեղ էլ փակած թողնել, որպէսզի այնտեղից վերագառնալով՝ չմիանան Աղդամի ուժերին ևսահմանագծի հայ գիւղերն աւերեն: Յոյս ունէին, որ մինչև այդ կրբերը մի փոքր կը հանգատանային, թուրքերը կը ճանաչէին իսկական թշնամուն, և, կառավարութիւնն էլ, վերջապէս, բաւական կը համարէ թափուած արիւնը...:

Ասկերանեան «յաղթութիւնները» թուրքերի վրայ, իհարկէ ձնշող տպաւորութիւն էր թողնում, իսկ հայերի վրայ, ընդհակառակը. նրանց մէջ պաշտպանուելու ոգին արգէն իւր տեղն էր գրաւել, «վախկոտ» հայն այժմ՝ բաջաբար դիմագրաւում էր հակառակորդին, ինչ թիւ էլ կազմելիս լինէին նրանք: Դրան ապացոյց՝ քաջ Խրամորթ գիւղը:

Օգոստոսի 23.

Վ երեկոյեան եկած զինուորներն Ասկերան էլ մնացին, թուրքերի ճանապարհն ապահովելու համար. բայց ինչպէս նախընթաց օրերը, այդ օրը ևս ոչ մի անցորդ չէր երևում. Օգոստոսի 10-ից գէսը հաղորդակցութիւնը միանգամայն կարուել էր, մէկ-մէկ միայն փոստատար կառքն էր անցնում: Թէկ զինուորներն Ասկերան էին գտնուում, այնուամենայնիւ հայերը վճռել էին ճանապարհը փակ պահել մինչև Շուշի այնքան ժամանակ, ինչքան որ Եւլախը փակ կը լինի հայերի համար, և իւրաքանչիւր յարձակման թուր-

բերի կողմից՝ գործել հակայարձակում աւելի ուժեղ կերպով։ Ու յարձակումներ էլի լինելու էին, որ Աղդամի չորս կողմը ընկած թուրքերը հաշտութեան մասին մտածել անգամ չեն ուզում, դրա նշանները երկում էին պարզ կերպով։ Այդ օրը մի քանի ձիաւոր խմբեր Դարագաջի մօտերը երևացին ու խկոյն անհետացան, մի քանի խմբեր Շելլու թուրք գիւղը մտան, մի քանի խմբեր էլ, մօտերեք հարիւր ձիաւոր՝ Մուղանլուի մօտ գտնուող Ամարաթի շորս կողմը տարածուեցին, փոքրիկ շրջանակում զանազան ուղղութեամբ շարժումներ գործեցին ու կէսօրից յետոյ մտան նախիջևանիկի ու Վարազարոյնի այգիները, որ խառն են թուրք գիւղերի այգիների հետ, և կտրուած հայերի կալուածքներից։

Բայց և այնպէս, որքան ցանկանում էին հայերը, որ խաղաղութիւնն ընկնէ, և նախին բարի դրացիութիւնն անեն թուրքերի հետ։ Հէնց գրա համար էլ անհանգիստ կերպով սպասում էին, թէ հրբ է զօրքը գալու. որովհետեւ ձայն էր տարածուել, թէ մեծ զօրք է գալիս, թէն բոլորը համոզուած էին, որ կոտի ծագումը խողդելու համար՝ տեղական ուժերը շատ-շատ էին։

Օգոստոսի 24.

Կատարեալ մեռելութիւն է տիրում ճանապարհի վրայ. ոչ մի կառք կամ սայլ չէր անցնում. թուրքերը վերև գալ չէին համարձակում, հայերը՝ ներքեւ անցնել. և հայերն ուրախ էին, որ այդ օրը «խաղաղ» պիտի անցնի, հրացաններ չպիտի շարժուին։ Ասկերանում գտնուող կառավարչական զինուորների վրայ վստահ, որ նրանց ներկայութիւնը թուրքերի Ասկերանն անցնելու ցանկութիւնը կամ մօտակայ գիւղերի վրայ յարձակուելու դիտաւորութիւնը կը մեռնէ, Վարանգայի կողմի զեկավարներն արձակեցին զինուորներին իրանց տները գնալու և հանգստանալու, իսկ կամաւորներին ուղարկեցին Ասկերանից հեռու գտնուող դիրքեր. միայն հրահանդ տրուեց, որ որոշ նշանը լինելուց՝ խկոյն հասնեն ցոյց տրուած տեղերը։

Առաւօտեան ժամը 10-ին Աղդամի կողմից փոշու ամպեր բարձրացնելով երկու կառքեր երեացին, շրջապատուած բազմաթիւ կողակներով։ Անշուշտ, «մեծանձն ոմն» էր. նրանը եկան ու կանգ առան Ասկերանի ստրաժնիկների հանրատան առաջ, ուր

կանգ էին առած և նախընթաց օրուայ հետեւակ զինուորների մի մասը, Նրանց կանգնելուն պէս՝ խկոյն երեք հոգի սրընթաց դուրս ընկան գէպի Քեաթուկ գիւղը. քիչ յետոյ Քեաթուկից մի գիւղացի ձին քշած հասաւ այդ հարթոցը, որտեղ զեկավարներից երկուուն էին գտնուում 12 զինուորներով և ասաց, թէ գիւղը «մեծ» է եկել ու կանչում է։

— Ինչու է կանչում. կամ ինչ մեծ է, — հարցրին նրան։

— Հայ է, եկել է մեզ մօտ և ասում է, որ Ասկերան գըտնուողը նահանգագետն է, ուղում է հայերի հետ խօսել։

Կարձ խորհրդակցութիւնից յետոյ, զեկավարներից մէկը ձի նստեց ու ճանապարհուեց գէպի Քեաթուկ, Այստեղ նստած էր մի հայ երիտասարդ, չէրքէզկան հագին։ Սովորական բարեներից յետոյ, նա ասաց։

— Գիներալ Տակարշվիլին եկել, Ասկերան է գտնուում. ես նրա մօտ ժամանակաւորապէս թարգմանի պաշտօն եմ՝ կատարում. ինձ ուղարկեց, որպէսզի հայերին կանչեն Ասկերան, խօսելու համար։ Եւ պէտք է շտապել, որովհետեւ նա շուտով կուղկորուի Շուշի։

— Գիներալը Շուշի է գնում շտապով և պահանջում է ժողովրդին իրա մօտ. Երբ, ժամանակ չի տալիս, ուրեմն, գիւղացիների ներկայանալն էլ չի լինելու, — պատասխանեց խօսակիցը։

— Ներողութիւն, գուք եթէ կամենաք, կը հացնէք, — ասաց նա ժպտալով։

— Ինչու էք հնթագրում։

— Որովհետեւ այստեղ ասացին, որ գնում են իրանց «մեծին» կանչելու, որպէսզի զործը գլուխ բերէ, Այսպէս թէ այնպէս, հարկաւոր է գեներալի մօտ գնալ, որովհետեւ նա շարունակ կրկնում էր զարմացած, թէ էս ինչ բան է. Եւլախից մինչև այստեղ թուրքերն ինձ բողոքով զնդակակոծեցին, բայց ոչ մի հայ չերեաց գանգատով. երեխ հայերը գանգատուելու տեղիք էլ չունին։

— Որքան գեներալն է զարմացել, նոյնքան էլ զարմանալ կարելի է նրա միամտութեան վրայ. հայերը իրանց տները գիշեցերեկ հակելով զուով են աւելածութիւնից պահում. տնից մի քիչ գէպի դաշտ հեռանալը՝ մահուան դատապարտուել է նշանակում, ուր մնաց թէ՝ բողոքելու համար Աղդամ կամ Եւլախ դուրս գալ։

Կարձ խօսակցութիւնից յետոյ նա ճանապարհուեց, տանելով

զեկավարի որոշումը, որ շուտով իրանք էլ կը ներկայանան Տակայշվիլուն:

Կէս ժամից յետոյ երկու զեկավարները տասը զինւոր թողնելով թթենիների տակ, իսկ իրանց հետ վերցնելով զինուորական խմբապետին ու մի ուրիշին, իջան դէպի գեներալնահանգապետը:

Թուրս գալով խճուղին, ձիանցը մտրակեցին և արշաւասոյր հասնելով գեներալին, մի 50 քայլ մնացած՝ ճարպկութեամբ ցած թուան, ու վստահ քայլերով մօտ գնացին: Նրանց գէմքերը փոշոտ և սեացած էին արկից. հագուստը՝ անպաճոյճ, որոնց վրայից գեռ նոր հանած պատրոնտաչների հետքերն էին երկում: Նահանգապետն ու նրան շրջապատող օֆիցիէները մի առանձին հետաքրքրութեամբ՝ նորիկներին էին դիտում ու զգում, որ նրանք իրանց արժանապատութիւնն իմացող մարզկանցից են. կողակներն ու զինուորները մատով նրանց ուղամական ու անդրավարտիկում ամրացրած շորերն էին ցոյց տալիս և ինչ-որ փափում:

—Պարոններ, —ասաց նահանգապետը, որոշ ժամանակ դիտելուց յետոյ.—մեծ դժբախտութիւն է պատահել. Պարաբաղում ևս հոսեց երկու հարևան ազգերի արինը. շատ մարզկանց տուն քանդուեց, շատ մարզիկ դժբախտացան երկու կողմից էլ: Սակայն բաւական է. ես եկել եմ և ոչ մի միջոց չպիտի ինայեմ խաղողութիւն հաստատելու համար: Մտէք զիւղերը, հասկացրէք զիւղացիներին, որ համարձակօրէն դուրս գան, իրանց զիւղական գործերը կատարեն: Թէ, չէ սա ինչի՞ նման է, ինքներդ ասացէք. և սա ցոյց տուաւ չորս կողմը փոռւած թուրքերի դիակները, որոնք գեռ չէին հաւաքուած, սա ինչի՞ նման է, կրկնեց զեներալը, —և սա արուել է հայերի ձեռքով, հաշտութիւնից յետոյ:

Թարզմանը ցանկացաւ գեներալի ասածը թարզմանել, բայց զեկավարներից մէկն ընդհատելով թարզմանին, ուղղակի գարձաւ նահանգապետին.

—Զերդ զերազանցութիւն, ամբողջ հոգով ուրախ ենք և շը նորհաւորում ենք ձեր գալուստը, որովհետեւ համոզուած ենք, որ դուք անշուշտ խաղաղութիւնը կը վերականգնէք. իսկ մենք թնչ ենք ցտնկանում ի սրտէ, եթէ ոչ՝ խաղաղութիւն և միայն խաղաղութիւն: Մեզ երբէք ցանկալի չի եղել և ցանկալի էլ չէ այժմ թուրքի արիւն թափելը: Սակայն հանգամանքները մեզ այնպիսի-

պայմանների մէջ են դրել, որ վաղը մեր հայերը կարող են նոյն իսկ այնպիսի գաղանութիւններ անել, որ ինքնիրս կը զգուենք. միայն թողի յայտնի լինի, որ դրանում մեղաւորը հայերը չպիտի լինին.... եսկ ինչ վերաբերում է նրան, թէ հաշտութիւնից յետոյ մենք Ասկերանում կոտորել ենք թուրքերին, այդաեղ ձերդ գերազանցութեանը թիւրիմացութեան մէջ են գցել, որովհետեւ չկայ աւելի հեշտ բան, քան ստուգելն այն փաստի, որ հաշտութիւնից յետոյ Խրամորթ գիւղի վրայ յարձակուողները թուրքերըն են եղել, և առհասարակ՝ Օգոստոսի 17 ի առաւոտից դէսը, միայն այսօր՝ միշտ նրանք են եղել աւելի բան 10—12 յարձակում գործողները, և հայերը մեղաւոր չեն, որ թուրքերն են եղել յաղթուողները:

—Այդ բոլորովին ճիշտ չէ.—ասաց գեներալին ուղևորող Աղդամի թուրք պրիստաւ իրահիմ-բէկը:—Այստեղ հայերն են յարձակուել ու վերադարձող թուրքերին կոտորել, ինչպէս և պատմեցին ձերդ գերազանցութեանը՝ կոտորածից աղաւուած թուրքերն, Աղդամում:

—Ես շատ լաւ զիտեմ, ովքեր են մեղաւոր,—վրայ բերաւ գեներալը, առանց պատասխանելու. իրահիմ-բէկին:—Հայերն երբեք աւելի քաղաքակիրթ ժողովուրդ, արեան հետ զործ չպէտք է ունենան. ես հաստատում եմ, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել: Բայց կրկնում եմ, ես եկել եմ, այժմ էլ յարձակուող չի լինի, ուրիմն ինքնըստինքեան աւելորդ է զանում և պաշտպանուելը: Թող այսուհետեւ Ասկերանում դինուած մարդ չինի. հակառակ զէպրում՝ կը պատժիմ խիստ կերպով:

—Հայերը զոհ չեն, որ տուն-տեղ թողած, ինքնաւուշաւուանութեան համար սար ու ձոր են ընկել.՝ պատասխանեցին ներկայացողները:—մեր խորին համօգմունքն է, որ անաշասութիւնը մանաւացի պէս սպասում ենք ձեզից:

—Նահանգապետը մի քիչ կանգ առաւ, ապա նկատեց.

—Համաձայն եմ ձեզ հետ. բայց դուք և թուրքերն էլ պէտք է չփանգարէք խաղաղութիւն հաստատողին. ես չեմ ցանկանում ոչ կողակների նագայիկաները գործի դնել, ոչ էլ զինուորների սուխնները: Այս բայց փոռւած զիակները խաղաղութեան մասին շատ քիչ բան են ասում:

— Զերդ գերազանցութիւն, — դարձաւ հայերից մէկը. — մեզ այդ դիակներն էք ցոյց տալիս, և մենք ամաչում ենք. բայց մըտեղից էին գրանք. չէ՞ որ գրանց մէջ նոյն իսկ Արաքսի այն կողմից մարդիկ են եղել. սառուցեցէք, և կը հաստատուի այդ. ի՞նչ ունէին արտեղ, չէ՞ որ գրանք ոչ առետրի էին եկել, և ոչ էլ հարսանիքում քէֆ անելու. ոչ, այլ արիւն, հայի արիւն թափելու, հայի կին բռնաբարելու, հայի տուն աւերելու. Մենք միայն պաշտպանուել ենք: Ի՞նկատի պէտք է ունենալ, որ մենք ամենեին չենք մեղադրում թուրք ժողովրդին, այլ նրանց խաներին ու բէկերին, որ ինչ-ինչ հովերից տարուած, ժողովրդին ծառայեցնում են իրանց նպատակներին: Թուրք բէկերն ու խաներն ազգեցիկ մարդիկ են. գրել են իրանց հալատակներին. — այս ինչ թուրին հաւաքուցէք Շուշին աւերելու, հայի հարստութիւնը թալանելու, և ամեն կողմից աւազակաբարոյ ու հլու հպատակներ թաել են զէպի մեզ: Եթէ մենք նպատակ ունեցած լինեինք թուրքերի հետ կոիւ մղելու, մենք էլ նախօրօք իւրաբանչիւր գիւղից մի քանի հոգի Շուշի կը հաւաքէինք, և գուցէ այն ժամանակ ձեր ակնարկած զժբախտութիւնն աւելի սոսկալի լինէր. բայց այդ մենք չենք արել, և մենակ հէնց այդ փաստն ապացոյց է, որ մենք չենք եղել զժբախտութիւնն առաջ բերողը: Միայն, ներեցէք համարձակութեանս, դուք կը շեղուէք, յանցաւորներին գտնել չէք կարող և խաղաղութիւնը կը տուժի, եթէ ձեր աշակիցները պլիստաւաները լինին, կամ, առհասարակ, ստիկանութիւնը:

— Ոչ, — պատասխանեց գիներալը. — իմ աշակիցներս ժողովրդի բարեմիտ ներկայացուցիչները պէտք է լինին, և ամեն ոք պատորէն պիտի կարողանայ իւր կարիքների մասին ինձ յայտնել:

— Կօմիտէտ թիբեանն աւը Ալլահ երխսրն, համսը օնըն իշխութ գը — ասաց պրիստա. Իրբահիմ-բէկը մի հայ գիւղացու, որ նոր Քառթուկ գիւղից այգին գալով՝ մօտեցել էր խօսողներին:

Այդ որ լսեցին հայերը, դարձան գիներալին:

— Ահա, ձերդ գերազանցութիւն. պ. պրիստաւը մեղադրում է կոմիտէտներին և մեզ թւում է, մի հասարակ պատճառով. որովհետեւ այդ կոմիտէտները, եթէ եղել են, ապա թոյլ չեն տուել որ թուրքերն աւերեն հայկական գիւղերը, ու իրբահիմ բէկը արտաջում է: Մթթէ հայերը չպէտք է պաշտպանուէին, որպէսզի մեղքը նրանց վրայ չընկնէր. մեր կանայք ու երեխաները ահա քանի որ

է, անտաւաներումն են ապլում, տան իրեղէնները հողի տակ են թաղել, որպէսզի աւարի չմատնուին. բայց մտէք թուրքի գիւղերը. ախտեղ էլ այդպէս է. հաւատացած ենք, որ ոչ նրանք պատ են, որովհետեւ վտանգի չեն ենթարկուած հայերի կողմից: Չէ, կոմիտէտները եթէ կան էլ, իրանք-իրանց կը չքանան, եթէ վերացուին նրանց ստեղծող պայմանները: Զերդ գերազանցութիւնն ինքներդ ասացիք, որ յարձակուողի առաջ պէտք է պաշտպանուել, մենք էլ պաշտպանուել ենք: Սակայն բաւական է, առաջ, այժմ և յետոյ՝ հայերս միայն մի քան ենք ցանկանում՝ խաղաղութիւն և խաղաղութիւն:

— Գնացէք ուրեմն և հանգիստ մնացէք. խանգարիչներն ամենախիստ պատժի կ'ենթարկուին:

— Իմ ամուսինս ոչ մի միջոց չզիտի խնայէ՝ խաղաղութիւնը վերականգնելու, — ասաց նահանգապետի կինը, որ մինչև այդ ուշագրութեամբ գիտում էր հայերին ու լսում և շարունակ ժըպտում, երբ նրանք, այդ մաշուած, փոշէթաթափ մարդիկ խօսում էին առանց — գիւղացիներին յատուկ — ստորանալու և ձեռները կրծքին ծալելու. — ասացէք ձեր կանանց և մայրերին, որ ապահով լինեն և յուսան, որ ամուսինս ամեն ջանք գործ պէտք է դնէ՝ խաղաղ դրութիւնն արմատաւորելու:

Խօսակցութեան վերջում իրբահիմ-բէկն ակնարկեց, որ հայ պրիստաւ Եարալեանը իւր կոչման բարձրութեան վրայ չի եղել թուրքերին Ասկերանով առաջնորդելու ժամանակ, որի պատճառով ամենամեծ կոտորածը եղաւ թուրք'րի: Հայերն ամենախիստ կերպով րողորդեցին այդ մեղադրանքի դէմ, առարկելով որ մեղադրականները՝ այն ևս անտեղի, չեն նպաստի խաղաղացման գործին, իսկ Եարալեանը պատասխանատու չէ թափուած արեան համար, և հայերը, եթէ ցանկանան, այդպիսի մեղադրանքներ, բայց աւելի դրական, կարող են շատ գտնել՝ թուրքերին մեղադրելու համար, մանաւանդ Շուշում կնքուած հաշտութիւնից յետոյ:

Մի քանի խօսք ևս աւելացնելով, գիներալը կառք նստեց ու ձանապարհուեց Շուշի, պատուիրելով, որ հայերը չհամարձակուեն կաչել այն թուրքերին, որոնք պէտք է գան գիւղերը հաւաքելու: Եերկայացած զեկավարները զլուխ տուին և ձի նստելով՝ ըշեցին, կարկառն անցան և մտան թթենիների տակ, որտեղ մի տասնեակ զինուորներն էին գտնւում:

Նրանք և մօտակայքից հաւաքուած մի քանի գիւղացիներն ամենայն հետաքրքրութեամբ հարցուփորձ էին անում, թնչ ասաց գեներալը, բարկացկատ է, յոյս կայ խաղաղութեան, որտեղ գնաց, ով է ուղարկել, և այն: Եւ նրանց բոլոր հարցերի գիրջը կասկածու նկատողութիւնն էր.— իսկապէս հաշտութիւն կը լինի:

— ինարկէ, կը լինի, եթէ ուղենան,— ասաց գիւղացիներից մէկը. — աւել չեմ ուզում, ինձ իրաւունք տան, հարիւր զաղախ էլ խօսք տամ, որ մի ամսումը Վարանդան էր, Խաչէնն էլ, Աղջամբասարն էլ հանգստացնեմ: Հայ մեղաւորներին էլ, թուրք մեղաւորներին էլ գառաղաջի (կախաղան) կը քաջթմ ժողովրդի առաջ, մարդասպաններին, թալանչներին որաեղ էլ լինին, կը գտնեմ, կախաղան կը հանեմ, մեացածներն էլ կը տեսնեն, որ չարագործին փրկութիւն չկայ, և բոլորը պոչները կը ծալեն:

Օրը թիքում էր. հաւատացած լինելով, որ գեներալի ներկայութիւնը կը զսպէ թուրք հրոսակախմբերին և նրանք Ասկերանի վրայ չեն արշաւի, երկու պահապան դնելով Նահատակի-Սեռին, զինուորները վերագրածան գիւղերը:

*

Տակայշվիլու գեղեցիկ բառերն ու խոստումները միայն իրեն բառեր ու խոստումներ էլ մնացին. Նրա զալը ոչ մի էական փոփոխութիւն չմացրեց տեղիս կարգերի ու դրութեան մէջ. Էլի գրեթէ ամեն օր փոքր ու մեծ կորիւներ էին լինում այս ու այն կողմերում: Օ բոստոսի 24-ին նա Ասկերան հասաւ, յուսագրեց, խոստումներ տուաւ, ապանսուլիքներ կարգաց հաշտութիւնը խանգարող կորուներին, ու գնաց Շուշի: Բայց հէնց հետեւալ օրը, 25-ին, թեթև ընդհարում եղաւ Շելլուի գլխին. 26-ին երկու մասնակի թեթև ընդհարումներ՝ Խրամորթի տակ, որ միայն մի քանի անգամ հրացան որոտալով վերջացաւ. 28-ին հարիւրաւոր թուրք ձիւորներ հաւաքուեցին Ամարաթի գլուխը, բայց ընդհարում չեղաւ. Սեպտեմբերի 1-ին թեթև ընդհարում եղաւ և հայերը խլեցին 11 ոչխար. 2-ին թուրք ձիւորներ ցոյց անելով անցան Նախիջևանիկ, Փիրջամալի ու Վարազաբոյնի դաշտերով և ծածկուեցին Աւդալ-Գելաֆլուի այգիներում, առանց հրացանաձութեան. 3-ին գաշտից թուրքերը գիրեցին մի հայ տաւարածի, յետոյ բաց թողին: Այդ բոլորի մասին տեղեկութիւն

էր տրտում Խանքենդու պրիստաւին ու Ասկերանի պահակների գլխաւորին. սակայն ոչինչ. խնդրագրերը մնում էին իրեւ մեռած տառեր, որից թուրք անհանդիստ տարբերն աւելի ու աւելի ոգեստուելով՝ աներեսանում էին: այդ ամենի հետեանքն այն եղաւ, որ գեներալի գալուց հազիւ տասն օր անց, ինըը դեռ Շուշի շանթեր թափելիս այս անձնաւորութեան հասցեին, թուրք Քերպուու քոչուորներն ու Աւդալ-Գելաֆլուեցիք Սեպտեմբերի 3-ին լրյա 4-ը յարձակուեցին Միրաջալլուուի վրայ. 5 ին թեթև ընդհարում եղաւ Նախիջևանիկի տակ, Մոսունց-Թափումը. 6-ին Աւդալ-Գելաֆլուի կուիը պատահեց, որին յաշորգեց հէնց նոյն օրը՝ Վարազաբոյնի կուիը: Խակ գեներալը դեռ սպասնում էր: Վերջապէս Գելաֆլուի աւերումից 3 օր յետոյ, Սեպտեմբերի 9-ին, նաշալնիկի պատուէրով ու Տակայշվիլու հրամանով՝ հայ աղստակալները Վարանդայից ու Խաչէնից հաւաքուեցին Աղդամ զավախների պահպանութեան տակ, հաշտութիւն հաստատելու: Վերադառնուերը երեխայական միամտութեամբ պնդում էին, որ հաշտութիւնը կատարեալ է, թուրքերն անչափ ուրախ են, և այսուհետեւ ոչ մի բան պատահել չի կարող: Նրանց ասածները լցնում էր ժողովրդի սիրտն անկեղծ ուրախութեամբ և երանի էին: տալիս, թէ երբ սէտքը է թուրքի երես տեսնեն, նրա հետ սիրալիր քաղցր զրոյցի բռնուեն:

Եւ իսկապէս հորիզոնը մաքրում էր ամպերից. թուրքերից ու մանք սկսեցին մտնել գիւղերը, մրգեղնէներ, չայ-շաքար էին, բերում, ծախում: Մուղանլուեցի յայտնի աւազակ Աւդուլ-Թեարիմը ապատօրէն մտնում էր Փիրջամալ, Վարազաբոյն և հանաբըներով ծիծաղեցնում գիւղացիներին, երբեմն էլ նկատելով, — այ հայեր, տեսնում էիք գնակս ինչպէս էր գալիս: — ինչպէս չէ՝ պատասխանում են գիւղացիքին, բայց միշտ դարանիդ փի (ճարպ) էիր կապում (փախչում էիր): Եւ երկուսն էլ սրտարաց քրքջում էին: Մինչեւ անգամ պատահեց, որ Սեպտեմբերի երկորդ կիսամսնեակում հայերն Աղդամով գէպի եւլախ, խակ թուրքերն Ասկերանով գէպի Շուշի սկսեցին գնալ ու զալ թէկ անին ծուած երկիւղն ու անվատահութիւնը չէր հեռանում գնացողների սրտից: Այդ էլ ոչինչ. ժամանակի ընթացքում կը հարթուէր. բայց «Ճելթանը» հանգիստ չէր: Նոյեմբերի 26-ին ու 27-ին թուրքերը նորից վրայ տուին Ամարորթին և ճանապարհն էլի փակուեց:

Ըստ Հայութիւնի ականքին աւելի մհծ թափով. երկիւղ կար, որ Շուշում ևս կական: Ասկերանը փակուեց, դժուար կացութեան մէջ գնելով բազարի թուրքերին, որովհետեւ նրանց համար եւլախից բաւարար պաշար չէր հասցրած. սովո՞ն անխուսափելի էր, մինչդեռ հայկական մասը մթերքներ մտնում էին շրջակայ հայ գիւղերից:

Թուրքեղը 26-ի և 27-ի յարձակումները վերսկսեցին 28-ին՝ քաջ Խրամորթ գիւղը աչքի փուշ էր գարձել նրանց համար և անպատճառ ցանկանում էին մոխրակոյտ գարձնել նրան։ Օրը մերգապատ էր. վատանգը շատ մեծ. թուրքերը 1500-ից պակաս չէին լինի և մէզից օգտուելով՝ ծածուկ, ձորն ի վեր մօտեցել էին գիւղից։ Ակառեց կատաղի կրիւը. հրացանների որոտը երբեմն խառնում, երբեմն որոտում էին ամբողջ գծի վրայ—թաւ. Գեադուկից սկսած, մինչև Ղարաղաջ. իսկ կողակներն Ասկերանի պահականոցում հանդիսաւ նստած՝ ականջ էին դնում որոտներին...:

Յամառ խիզախումսով թուրքերին յաջողուեց մի կողման
գիւղը մտնել. պարզ էր, որ գործի հետևանքը սարափելի պէտք
է լինէր, եթէ այդ խսկ միջոցին չասնէր Վարանդայի թռուցիկ
խմբի մի տասնեակը և Խաչէնի երկու թռուցիկները. Մի քանի
տուն արդէն հրդեհուած և տասից տեհլի տներ թալանուած էին,
երբ օգնութեան հասած խմբերը խրուցին թուրքերի մէջ. կըռ-
ւում էին քան քայլի վրայ, խսկ երկու տեղ արդէն ձեռնամերձ
կռուի էին մտել. Վերջապէս թուրքերը յետ մզուցին, 13 դիակ
թողնելով տների տուած, խսկ հետները տարածը յայտնի չեղաւ.
Հայերից սպանուել էին մի կին և մի ծերուսի, որոնցից մէկի
պլուխը տարել էին:

Այդ դէպքը խորապէս վրգովեց հայերին, մանաւանդ որ վը-
նասուովը քաջ Խրամորթ գիւղն էր եղել, ամենքի սիրած Խրամոր-
թը: Հայերը, մանաւանդ Խրամորթեցիք, վճռեցին անպատճառ ի-
րանց «նախուսը» տեղը բերել:

Երբ Ասկերանի կողակներին այդ դէպքից յետոյ հարցը ինչ
թէ ինչո՞ւ նրանք չեկան կռիւը դադարեցնելու՝ «իրաւունք չը
տուին», պատասխաննեցին:

Դէպքի մասին այդ օրը գիւղացիք իսկոյն խնդրագրե՞ր ներկայացրին գաւառապետին ու Տակայշվիլուն. ապարդիւն ջանքեր... ահա այդ անտարբերութիւնը տրամադրում էր հայերին ու թուրքերին՝ շարունակել անաւեր յարձակումները: Նորից մարտկոցները զբառուեցին երկու կողմերից, և ոչ ոք չարգելեց տեղի կողակները ժպտում էին հայերին, ինչպէս Աղջամինը՝ թուրքերին:

Զնայելով, որ Ասկերանը բաց էր Սեպտեմբերի կէսերից, բայց Նոյեմբերի սկզբներից Շուշի պաշար չէր մտնում, թուրքերը չէին վստահանում Ասկերանով բարձրանալ, իսկ հայերը՝ Աղդամով անցնել. մանաւանդ Գանձակի գէպերը մեծապէս ազդել էին մարդկանց սրտերին ու դրութիւնը լարել: Բայց և այնպէս, ինչ զնով էլ լինէր, թուրքերը ցանկանում էին քաղաքն ապրանք մտցնել: Եւ ահա այդ օրը Ղարադաշի մօտ Փուրգօնների սպիտակ ծածկոցներ երևացին. «Փուրգօններ են գալիս, Փուրգօններ են գալիս», կանչեցին ստրաժնիկները՝ պահականոցից: Հայերը դարան մտած այնքան սպասեցին, որ Փուրգօնները Ղարադաշից բաւական բարձրացան. դարանակալները ցանկացան վըջապատել ու կոտորել Փուրգօնչիներին, բայց այդ նրանց թոյլ չտրուեց. օդի մէջ պարպած փամփուլշտներից թուրքերը սարսափահար, թողեցին Փուրգօններն ու փախան, բոլորը թողնելով հայերի տրամադրութեան տակ: 64 ձի, 16 Փուրգօն իրանց միջի ապրանքներով կակոյն հայերը թալանեցին, որոնց մի չաղլիկ բաժինը ստրաժներուն ռաւեսին իրանց մօտ:

Այդ գէպքից յետոյ, ինչպէս և առաջ, եւ գուրգօն չելիաց,
մինչև Դեկտեմբերի 5-ը:

էլի Ղարաղաջի կողմից ֆուրգօններ երևացին, կողակների առաջնորդութեամբ. որոշ կարգադրութիւններ անելուց յետոյ, վիճակը նշանակուած դիրքերը գրաւեցին. ֆուրգօնները եկան ու մօտեցան Ասկերանի պատերին: Զինուորական խմբապե-

աը փչեց շեփորը և դարանամուտ հայերը յանկարծ բուսան ֆուլք գօնների չորս կողմին:

—Արքունական ապրանք է, արքունական ապրանք է, —ըարձրաձայն կանչեցին կողակներն ու խնդրեցին չկպչել բեռներին:

—Պէտք է ստուգել, —ասաց խմբապետը. —հայերը սովից կոտորւում են Շուշում, դուք թուրքերի համար ապրանք էք տանում, եթէ ուզում էք, անկողմնապահ կերպով տարեք երկու կողմերի համար էլ:

—Ստուգեցք, —ասաց օֆիցէրը և ծոցից ապրանքների թըղթերը հանեց:

Խսկապէս՝ ապրանքները նշանակուած էք զօրքի համար, ինչպէս փաստաթղթերն էին ասում. բայց և այնպէս, պատուեցին ըըսակները, որ լի էին հաճարի ալիւրով: Ստուգելուց յիտոյ խըմբապետը փչեց չեփորը և հայերն արագութեամբ ձի նստելով անհետացան այգիներում ու դիրքերում, զարմանք պատճառելով բոլորին իրանց կանոնաւորութեամբ:

Դեկտեմբերի 11.

Գաւառապետի օգնականն ու երկու օֆիցէր մի հարիւրակ կողակներով Ասկերան կանգ առնելով՝ յայտնեցին, որ այդ օրը գալիս է 44 ֆուրգօն, Շուշի անցնելու, իսկ Աղդամում եկել կանգ են առել 90 հայ զինուորներ, որոնք ծառայութիւնից են վերադառնում. եթէ հայերը կպչեն ֆուրգօններին, թուրքերն սպանուում են իրանց մօտ պատանդ վերցրած 90 հայերին կոտորել:

Հայերը չեին ուզում հաւատալ. բայց օֆիցէրն ասաց.

—Իրաւունք ունիք չհաւատալու. սակայն ձեր կասկածը փարատելու համար՝ ֆուրգօնների հետ գալիս է այն զինուորներից մէկը, իւր ընկերների գրութեան մասին ձեզ հետ խօսելու: իսկ մինչեւ ֆուրգօնների գալը, առելի լաւ է, ցոյց տուէք ձեր գնդակ գցելու շնորհքը:

Հայերի ինքնասիրութիւնը շոյուեց: 15 կոպէկանոց պապիրոսի մի կարդոն կպցրին մի ծառի բնի և կանգնեցին:

—Առաջ գուրք, —ասաց խմբապետը, դառնալով օֆիցէրին:

Օֆիցէրը ժամալով՝ վերցրաւ հրացանը, նշան բռնեց ու ար-

ձակեց. —չկատու. մէկ էլ, մէկ էլ, —չեղաւ. չորրորդ անգամը միայն նշանի ծայրը ըերեց: Այն ժամանակ մօտեցաւ խմբապետը, նշան առաւ, և արձակեց. գնդակը նշանի կենդրունին էր տուել. մէկ էլ արձակեց, նոյնպէս. մէկ էլ էլի կպաւ, միայն կէս դիւրմ կենդրունից հեռու: Մինչդեռ նաշանիկի օգնականը, օֆիցէրներն ու կողակները զարմացած նայում էին, միւս զիւորական խմբապետը նըշանը փոխեց, ուրիշ թուղթ կպցրաւ, և հանեց ատրճանակը. մէկ, երկն, երեք... և երեք գնդակներն էլ զարկեցին նշանին: Այդ յանդութիւնից ոգեսրուած, խմբապետներից առաջինը թռաւ իւր կրակու ձին՝ ու մտրակեց. ձիու ոտները գետին չէին կպչում կարծես. իսկ հեծեալը թռչում էր զգի տակով, կողքից կախւում, հրացան նետում ու նորից բռնում: Երբ հասաւ Ասկերանի պատերին ու երեսը շուր տուաւ գէպի օֆիցէրների կանգնած տեղը, խըթեց ձիուն, ու գաշոյնը հանեց. ձին թռած ժամանակ՝ նա դաշոյնը դնում էր ձեռքի ափին, աջ ձեռքից շպրտում, ձախ ձեռքի ափին կանգնեցնում ծայրի վրայ, և այն:

—Սուկին-սին. —փսխալով գովեցին կողակները:

Մինչ այս, մինչ այն ֆուրգօնները, թռուով ձիշտ 44, եկան հասան. չեին բեռնաւորուած այնպէս, ինչպէս հարկաւոր էք. երեք թուրքերը կասկածել էին, թէ հայերը պատանդների գրութիւնը կարող են ի նկատի չընկենալ և ապրանքները թալանել: Իւրաքանչիւր ֆուրգօնում 10—12 քսակ չայ-շարքար, գարի ու ալիւր կար: Այնակեղ էք և օգնականի ասած հայ զինուորը:

—Խսկապէս Աղդամում ընկերներ ունիս. —հարցըին նրան:

—89 հոգի. —պատասխանեց նա. —եղբայրներ, աղաչում եմ, չէ մի վաս մի տուէք սրանց. Աղդամի թուրքերն սպանացել են, որ եթէ այս ֆուրգօններին մի բան պատահի, նրանց բռնութիւն կը կոտորեն: Ընկերներս ինգրեցին, աղաչեցին, որ իրանց գրութեան մէջ մտնէք և ֆուրգօնները բաց թողնէք:

—Ո՞չ միայն բաց կը թողնենք, այլ և անց կը կացնենք մինչև մօջալու: Եթէ այստեղ հայեր չլինեին մնացած, մինք ոչինչ չէինք անի, միայն թէ իրանք, իրանք հանգիստ կենացին:

Քառորդ ժամից յիտոյ ֆուրգօնների կարավանը գուրս գաւով Ասկերանի պատերից, ուղեսրուեցան գէպի Շուշի, որոնց մինչև մօջալու միացաւ և մի տասնեակ՝ հայերից:

Դեկտեմբերի 12.

Առաւտեան եկան մի քանի փուրգօններ, երէկ յիշուած հայ զինուրներով լիքը. շրջակայ գիւղերից հայերը մեծ ուրախութեամբ, զուռնա-հաղարայով դիմաւորեցին եկողներին, որոնց երեսներին կատարեալ երջանկութիւնն էր փայլում:

Փառք Քեզ, Աստուած,—ասում էին նրանք.—ով էր կարծում, որ սուդ-սալամաթ այստեղ կը հասնենք:

—Միթէ վախենում էիք. —Հարցը նրանց:

—Էդ էլ խօսք է... Մինչև Բարդա, ոչինչ, լաւ էր. բայց Բարդից դէսը՝ շատ վատ. Ղարբանդի մօտ թուրքերը ձեռքով գըլուխ կտրելու նշաններ էին անում, ու հայհոյում: Իսկ Աղդամում... մեռել ենք, պրծել. ճրլնգ-ճրլնգ կողում էինք, թէ այստեղ դուք թուրքերին մի քան կ'անէք և այնտեղ մեր վերջը կը տանք: Նատերկիւղ էինք կրում, թէ լրբի մէկը կը դայ և սուտ տեղը կ'ասէ, թէ Ասկերանում հայերը կոտորեցին թուրքերին, նրանք էլ մեզ սրախողիսող կ'անեն, Բայց փառք Աստուծոյ. պրծանք:

Նորեկներն ու տեղացի հայերը փոխադարձ ուրախութիւն յայտնելուց յիտոյ, երկու տասնեակ ձիւորների ուղեկցութեամբ՝ փուրգօնները տարան, անց կացրին, ապա մի փոքրիկ խմբակ թողնելով Ասկերանում մնացածը հեռացան դէպի գիւղերը:

Զօրք բաւականաչափ եկել էր. կային և նոր պաշտօնեաներ, միայն դրութիւնը միշտ հինն էր մնում, հայ-թրբական ընդհարումների վերջը չէր տեսնուում, մինչդեռ հայերը կատարելապէս յոդնել էին անվերջ կռիւներից:

Դեկտեմբերի 13 - 26.

Դրութիւնը շարունակում էր լարուած մնալ. ամեն օր նոր լուրեր էին գալիս կամ Գանձակից, կամ Շուշուց, կամ հարևան գաւառներից, միշտ չափազանցրած և միշտ գրգոր:

Այդ միջոցներում հաշտեցնելու փորձեր արաւ նաչալնիկ օգնական իշխան Վաչինաղձէն, որ կարծես անկեղծօրէն ցանկանում էր դրական մի քան անել. բայց նրա բայլերը դէմ առան թրբական անհեռատեսութեանը և հաշտեցնելու ձգումները վիժեցին: Դեկտեմբերի 17-ին, այն օրը, երբ իշխանը վերջին բա-

նակցութիւնն էր անում հայերի հետ հաշտութեան մասին, թուրքերը Ղարաղաջի մօտերը դէպի Ասկերան շարժուեցին և հաշտութիւնը մեռաւ:

Դեկտեմբերի 20-ին թուրքերը նորից շարժուեցին դէպի Ասկերան, ի հարկէ, այժմ ոչ դէպի Շուշի անցնելու. այլ հէնց էնպէս. Ասկերանում գնդակներ փոխանակելը սովորութիւն էր դարձել. միայն ուշագրաւն այն է, որ միշտ ապրանքով կամ մարդկանցով կորուստ էին ունենում, բայց էլի ձեռք չէին քաշում. կարծես մի տեսակ հիւանդութիւն էր դարձել նրանց համար այդ ցուրտ ձմրանը 50—60—100—200 հոգով դուրս գալ Ղարաղաջի ուռենիների տակ, դէս քշել, դէս քշել, մի երկու ժամով կոիւ սարքել, մի քանի տասնեակ կամ հարիւրաւոր թուրքերի փամփուշտ վատնել ու վատնել տալ, մի երկու դիակ թողնել և քշել դէպի Աղդամ: Հայերն արդէն ձանձրացել էին, սակայն Ասկերանից հեռանալ չէին կարող. այնտեղի պահակախումբն ամբողջ ձըմեռն անց կացրեց ձիւնի ու ցըտի ենթակայ, բայց միշտ դիրքերում:

21-ին հայերը վառեցին Ասկերանից բարձր, Կարկառ գետի ափին գտնուող Խաջաֆ-Կուլի աղի տները, իսկ մի քանի օր առաջ՝ Խանին-Բաղի տներն էին վառել: Այսպէս փոխադարձ աւերտումը շարունակւում էր մերթ բորբոքուելով, մերթ առկայծուելով, բայց երբէք առանց հանգչելու, մինչև որ հասաւ 26-ը:

Այդ օրը, գեկտեմբերի 26-ին, յանկարծ, որտեղից որտեղ Ղարաղաջի ծայրից բացուեց փուրգօնների մի մեծ կարաւանի ծայրը: Ճիշտ է, երկու օր առաջ Աղդամից լուր էր եկել, որ մեծ ապրանք պէտք է գայ Շուշի, բայց հայերը չէին հաւատում. այսօր հաստատում էր: Ասկերանի պահակախումբն իսկոյն ուժեղացաւ մօտակայքում գտնուող թոռուցիկ երկու խմբով և դարձան 50 հոգի: Նրանք խրամատում պառկելով և Ասկերանի պատնէշները բռնելով սպասեցին փուրգօնների մօտենալուն, և հէնց որ փուրգօնները հասան կողակների պահականոցին, օդի մէջ երկու անդամ համազարկ տուին. փուրգօնչիները գլխապատճ դուրս թուշելով փուրգօններից՝ փախած դէպի ցած, իսկ փուրգօնների մի մասը կտրուելով մնաց Ղարաղաջից ներք, որտեղից և վերադարձան Աղդամ:

Ամենապարմանալին այն էր, որ, երբ հայերը օգնում կրա-

կեցին հրացանները, ֆուրդօններին առաջնորդող 150 թէ էլ աւելի կողակներն իրանց ափիցէրներով, ֆուրթկոտութեամբ մի կողմը քաշուեցին, ապա հաւաքուեցին Ասկերանի պատերի տակ առանց մատ-մատի խփելու՝ ազրանքն ազատելու համար: 116 ձի, 54 ֆուրդոն, մօտ 6000 ֆուրթ ամենայն տեսակ ապրանքներով՝ մնացին հայերի ձեռքում, որ մի կամ երկու ժամուայ մէջ անհետացան շրջակայքից վրայ հասած գիւղացիների ձեռքով: Սարաժնիկներն ու Ասկերանի «պահապան» կողակները ևս իրանց համար մի բաւական բաժին վերցրին՝ հետևեալ օրը հայերի վրայ ծախելու համար: Իսկ ֆուրդօններին ուղեկցող 150 կողակները մի զարմանալի անտարբերութեամբ հեռացան գէպը վայրից:

Դեկտեմբերի 26-ից՝

1906 թ. Յունուարի 4.

Այնուհետև դրութիւնն էլի լարուած մնաց. Վարանդայի զանազան անկիւներում ընդհարումներ շարունակ լինում էին. 28-ին աւերուած Աւգալ-Գելաֆլուի թուրքերը գիշերն այդիներում թագ կենալով առաւոտուն դէմ յարձակում են Աւգուու գիւղի տաւարածների վրայ և սպանում մի գիւղացու: Հասնում են խմբերը մօտակայքից, շրջապատում այդիները և թուրքերից սպանում 46 հոգի, որոնց գիակները մնում են տեղն ու տեղը. իսկ թէ փախչողները հետներն էլ տարել էին, յայտնի չէ: 29-ին թեթև ընդհարում եղաւ Շելլուի գլխին, առանց մարդկային կորուսի, 31-ին Ասկերան է գալիս հռչակաւոր Ֆօն-Ազարովսկին և պահակի միջոցով սպանում, որ կաւերէ շրջակայքը, եթէ թալանը չվերագրածնեն: Երեք օր անց է կենում խաղաղութեամբ: Յունուարի 4-ին համար է Ֆօն-Ազարովսկու կոչը, ուղարկած Ասկերանցիներին, ապա նոյն օրը գալիս է և ինըն ու ոմբակոծում Խանարադն ու Ասկերանը:

Այդ օրն առաւոտեան, նախ բան կողակների Ազգամից գուրս գալը, մի թեթև ընդհարում է տեղի ունենում Լաշին-Ղայի տակ, Շելլուեցիների հետ, Վարանդայի Ասկերանից մէկ և կէս վերստի վրայ. սպանում է Շելլուեցի մի թուրք, իսկ մէկը, փախչել չկարողանալով գերի է ընկնում հայերի ձեռքը: Նրան ցանկանում

են տեղն ու տեղը սպանել, սակայն արգելում են և տանում մօտակայ գիւղերից մէկը՝ հարցաքննութեան:

Յունուարի 5.

Այդ օրը Ասկերանում խաղաղ անցաւ. ոչ մի միջնադէպ չխանգարեց հանգստութիւնը. միենոյն օրը լուր եկաւ, որ թուրքերն ահազին բազմութեամբ պատրաստում են յարձակում գործելու Նախիջևանիկի, Փիրջամալ և Վարաղարոյն գիւղերի վրայ: Լուրն ըստուգելու համար գերուն հարցուփորձի ենթարկեցին: Մի խեղճ ու կրակ թուրք էր, Շելլուեցի: Դժբախտը ցնցումներով դողում էր և մեծ ջանք գործ գրուեց նրան հաւատացնելու, որ ազատ պէտք է թողնուի: Թէյ առաջարկեցին. զօռով խմեց. ձեռները գողում էին:

Նա, ինչպէս ինըն ասաց, տեղեկութիւն չունէր Ազգամի պատրաստութիւնների մասին. միայն մի առ մի պատմեց, թէ որքան դժբախտացել են թուրք աշխատաւորները, ինչպիսի սոսկալի տուրքեր են առնում բէկերը գինավառելու պատրուակով, բայց զէնքերը չեն բերում, փողերն ուտում են. տուաւ մի բանի բէկերի ու աղաների անուններ. որոնք թիւրք կոռուզներին էին դեկավարում, իսկ հաջտութիւն մասին՝ հետևեան ասաց.

— Մեր մեծերն ասում են. — կամ պէտք է հայկական գիւղերը մինչև Շուշի աւերենք և Ազգամի ու Շուշուայ արանքում օտար տարր չմնայ, կամ Շուշուայ թրքական մասն ու Մալը-Բէկլուն պէտք է աւերուեն, որ ասենք, թէ՝ Ազգամից վերև հայերինն է, մենք այնտեղ ոչինչ չունինք:

Օգոստելով դէպքից, ինքնապաշտպանութեան ղեկավարները նախկին փորձերի վրայ մէկն էլ աւելացրին. մի նամակ գրելով, տուին թուրքին, որպէսզի տանէ ու յանձնէ բաւականաչափ մարդկասէր ի.-բէկին: Ապա գերուն տալով 5 ըուրելի փող, լաւ ուտացնելուց ու խմեցնելուց յետոյ, դրին մի զինուորի գտակի, որպէսզի տանէ ու բաց թողնէ Շելլուի գլխին, որ և պատուէրը կատարեց ճշտութեամբ՝ դեռ մի բիչ էլ ներքե տանելով:

Այն գրուած նամակի բովանդակութիւնը, որ թուրքերէն չիմանալով՝ գրել էին ուռսերէն:

Մեծապատիւ պարոն

ի.-բէկ Ազգամոււմ.

Այնք հայ և թուրք հարեանների մէջ հետզհետէ աւելի է

խորանում ու լայնանում. անձնատուր եղած ամենատեսակ ստոր պրօվակացիաների՝ խաղաղութեան կամուրջ անց կացնելու փոխարէն, արիւն է՝ որ վիճն է թափւում:

Բէկ, ի նկատի ունենալով Զեր լայն հայեացքներն ու աղդեցիկ գիրքը, բարւոք ենք համարում այս նամակով աղաչել Զեզ, գուրս գալ իրեւ խաղաղութեան նախանձախնդիր մէկը և պարզել ձերայիններին շէյթանական իշխանութիւնը: Ո՞չ հայերը թուրքերին կոտորել, ոչնչացնել կարող են, և ոչ էլ թուրքերը՝ հայերին. ոչ կստորուած թուրքերի հողը կը տան հայերին, և ոչ էլ կոտորուած հայերի հողը՝ թուրքերին: Եթէ կան ուրիշ խուլ անհամաձայնութիւններ երկու ազգերի մէջ, արիւնը չէ, որ պիտի հարթէ: Ամեն օր կոխւ, ամեն օր թալան, ամեն օր սպանուածներ... մինչ երբ. միթէ մենք ստիպուած ենք այս պատմական մեծ, նշանաւոր օրերում մեզ համար միայն նախատինք վաստակելու: Ամբողջ Ռուսաստանը մի կուռ բոռնցը դարձած՝ հարուածում է բռնակալութիւնը, բիւրոկրատիային, իսկ մենք գործիք դարձած բռնակալութեանը՝ հնարաւոր ենք դարձնում նրա գոյութեան երկարատեսութիւնը:

«Հաւատացած եղէք, Բէկ, հայերը խաղաղութիւնից բացի ուրիշ բան չեն ուզում. մի լսէք պրօվակատօրներին: Նրանք հանգստութեան մասին չեն մտածում: Կառավարութեան ձեռք առած միջոցները գրական ոչ մի հետեւանք չունեցաւ, մինչդեռ բացասականը—մատներով չպէտք է հաշուել. Ի՞նչ է ցոյց տալիս այդ այն որ ժողովուրդներն իրանք պէտք է հաշտուեն, որովհետեւ ուրիշ հաշտեցնողները կուռեցնում են միայն»:

Նամակը երկար էր գրուած, վերջումն էլ աւելացրած էր, որ բէկը նեղութիւն քաշէ այդ նամակը կարդալու Ս.-բէկի, Ջ.-բէկի և մօլլաների մօտ, ու դրդէ նրանց, որ խօսեն ժողովը-դին հանգիստ մնալու մասին:

Նամակն ուղարկելու հետեւալ օրն էր, որ թրքական վեցհազարանոց բանակը արշաւեց գէպի Վարազմարոյն, որով ապացուցեց թէ իզուր են բոլոր մասնաւոր ցանկութիւնները, մինչև որ հայ և թուրք ժողովուրդներն իրանք ձեռք չմեկնեն հաշտութեան:

Դրութիւնն այդպէս շարունակուել չէր կարող. Շուշուայ թուրքերը երթարկուած էին բացարձակ սովի. հեռագիր հեռագրի յետեւ թոշում էին Բագու և Թիֆլիզ՝ իրանց մի ճար անելու, սովից ազատելու. սկսուեց հեռագրերի մի շարք, ուղղուած փոխարքային և այլ կարող անձանց՝ Ասկերանը բաց անելու համար: Բագուի թուրքերն էլ առանձին աղերսագրեր ու պահանջագիր ուղարկեցին և վերջապէս՝ Ասկերանը բացուեց թնդանօթներով ու Շուշուայ գիւղերը սմբակոծելով: Ֆուրգօններն սկսեցին սկզբում վախենալով, ապա ազատօրէն երթեեկել Եւլախից Շուշի, իսկ Եւլախից մինչև Աղգամ ճանապարհը գեռ փակ էր ու փակ հայերի համար, և, իբրև պատիժ, հայերի ապրանքները՝ եթէ պատահում էր, բերում էին Շուշի փութին ստանալով 60 կոպէկ, իսկ թուրքերից 30. ամեն տեսակ կենսական մթերքներ տարան թուրքերի համար, քաղաքը լրցրին, իսկ հայկական մասը շատ քիչ բան էր գնում. այդ պատճառով շատ անհրաժեշտ մթերքներ այդ օրուանից թուրքերի մօտ աւելի էժան էր լինում, քան թէ հայերի:

Այդպէս Ասկերանը բաց մնաց, բայց ոչ ընդմիշտ. ամպերը նորից հաւաքուեցին, հայ-թրքական ընդհարումները նորից բորբոքուեցին շրջակայրում և կիրճը նորից փակուեց մի քանի ամիս փակ մնալուց յետոյ:

Այս է Ասկերանում տեղի ունեցած գէպքերի խիստ համառու պատմութիւնը: Ժամանակի գրութիւնը թոյլ չի տալիս ամբողջի իսկական պատկերը տալու, որից պարզ կարելի է տեսնել, թէ հայերը որքան մեղաւոր էին Ասկերանը փակելում, թէ արտաքին ճարպիկ ձեռքեր ինչպէս էին նպաստում զրութիւնը միշտ լարուած պահելու Ասկերանում, գաւառներում և թրքական գիւղերում:

Որովհետեւ այս պատմութիւնը միմիայն Ասկերանի շուրջը կատարուած գէպքերի նկարագրութիւնն է, ուստի կարող է աչքի ընկնել այն հանգամանքը, որ հայերն Ասկերանից չեին հեռանում մինչև անգամ այն ժամանակ, երբ Ղարազաջում, Շելլուի գլխին կամ Խրամորթի տակ օրերով, նոյն իսկ մի երկու շաբաթով թուրք խմբեր չեին երկում: Բայց մի թեթև ակնարկ աւելի հեռուն, և Կերեայ, որ Ասկերանի փակումն ու նրա շարունակ պահպանու-

թեան տակ երկար պահելը լոկ հետևանք է եղել գաւառների այս
կամ այն ծայրերից եկող արձագանքների. որ չէր անցնում, որ
Աւդալ-Գելաֆլուի տակ, կամ Դզլալի-Բուռունում, կամ Վէյսալ-
լուի մօտ, կամ Ամարասի ձորում, կամ Դաշարի կողմերում որ և
է մի ընդհարում չլինէր կամ մասնակի, կամ մասսայական. մա-
նաւանդ շարունակ հասնող լուրերը, թէ թուրքերն այս ինչ կող-
մում ահազին պատրաստութիւններ են տեսնում յարձակում գոր-
ծելու համար, միշտ լարուած զրութեան մէջ էին պահում հայերին
և Ասկերանի պահպանութիւնը խստացնում էին, որովհետև ամե-
նահասարակ ռազմագետը, կամ հէնց տեղին ծանօթ որ և է
ոչուազմագէտն անգամ կարող էր հասկանալ, թէ Ասկերանն է
այն յաղթ գուռը, որի յաջող պահելուց է կախուած զրեթէ՝ Դա-
բաբաղի բոլոր մասերի վիճակը:



ՎԱՐՍԵԴԱՅՑ

ԽԸՆԴԻՆ

Գիւղն առհառարակ չուտ է քնում. ժամը 9-ին ամենքն արդէն անկողնում էին. ոչ ոք չէր հանուել. տարին չար էր. ամեն ըովէ մահուան ուրուականը սաւառում էր այդ կողմերում. բոլորը, բոլորն անկողին էին մտել առանց հանուելու, առանց նոյն իսկ տրեխները պոկելու:

Զնայելով, որ գիւղի հարստութիւը գետնի տակ էր, բոլոր արժէք ունեցող իրերը խոր թաղուած էին ապահով տեղերում, այնուամենայնիւ սարսափն էր թագաւորում և գիւղը քնած էր մի անհանգիստ, յուզալից քնով: Պահապանները գիւղից դուրս, գիրքերում ամրացած՝ շվալոցներով զգաստացնում էին միմեանց, նըրանց շվալոցներն էր միայն, որ անկողնում աչքերին քուն չեկող ծեր ու պառաւներին յոյս և հանգստութիւն էին ներշնչում, որովհետեւ յուսով էին, թէ պահապանները չեն քնի և թշնամին յանկարծ գիւղը խուժել, սրի ու կրակի մատնել չե կարող:

Ներքե, Շելուից սկսած մինչև Մարզլուի գլուխը՝ թուրք պահապանների կրակներն էին պլազում երկար գծով: Թուրքերն էլ էին անհանգիստ, նրանք ևս անքուն հսկողներ ունէին:

Դրութիւնը սարսափելի էր՝ սպասողական, լարուած. ամեն ըովէ յարձակման կարող էին ենթարկուել. կասկածամտութիւնը երկու կողմերի համար էլ անսահան էր, և զգոյշ, պատրաստ կանգնած լինելը՝ պարտականութիւն:

Ուրիշ կերպ չէր էլ կարելի. երկար ամիսների փորձերը ցոյց էին տուել, որ բաւական է մի թեթև անզգուշութիւն, և գիւղեր են կրակի ճարակ գառնում: Մանաւանդ այժմ, երբ թուրքերը գեռ Ասկերանի կոտորածը չէին մոռացել, իսկ հայերը՝ Շուշուայ հրդեհը: Եւ այդպէս երկու կողմերն էլ վիրաւոր զազանների նըման դէմ առ դէմ կանգնած՝ հսկում էին միմեանց:

Իսկ գիւղը՝ քնում էր խոռվայոյզ քնով...

* * *

Յանկարծ ժամը 10-ին մօտակայ գիւղից մի սուրհանդակ ձիս թոցրած՝ հասաւ գիւղը. վատ լուր էր բերել:

Դեռ ութ օր առաջ Քեաբոլու կոչուող րոշուորները սարից իջնելով, եկել, Աւգալ-Գիլաֆլուի տակ, գաշտում իջել էին ու չին հեռանում. մինչդեռ առաջները նրանք այդտեղ միայն մի օր էին կանգ առնում: Մինքենդն աւերելու մասնակցող Քեաբոլուեցոց այդքան երկար կանգ առնելը րոտորին կասկածանքի տակ էր գցել և մի ինչ-որ չար բան էր գուշակւում:

Ահա սուրհանդակն էլ ճէց այդ կասկածանքի կատարուելը յայտնելու համար էր եկել. — Քեաբոլուն միացած Աւգալ-Գիլաֆլու թուրք գիւղերի հիտ. յարձակուել էին Միրաշալու հայ գիւղի վրայ:

— Գիւղն են մտել:

— Զեն մտել, բայց կը մտնեն. շատուոր են, — պատասխանեց սուրհանդակը:

Ճէց այդ միջոցին էլ հանդիպակաց ըլրի զիսից մէկը կանչեց.

— Հայ-հարայ. հասէք... Միրաշալուն աւերեցին:

Պահապանների շվկոցներ աւելացան. բոլոր հրացանաւորները գիւղամէջ վազեցին. մեծ, փոքր տրդէն ոտքի վրայ էին, և բոլորի բերնին միայն — պէտք է հասնել — բառերն էին խաղում:

Հինգ րոպէից յետոյ երեսուն հոգուց բաղկացած խումբը հարևան գիւղից նոյնքան ևս վերցնելով՝ թռաւ գէպի վտանգուած գիւղը:

— Հասէք, ձեր գեարդանին մեսնեմ. — լուռում էր գիւղացիների իրախուսանքը՝ գէպի կոիւ վազող վինուորներին ուղղած:

* *

Աւգալ-Գիլաֆլուն գտնուում է Միրաշալուի հարաւ-արեւելեան կողմում, երկու վերստ տարածութեան վրայ: Մեր երկիւղը հայ-թրբական ընդհարման սկզբից՝ շարունակ այդ երկու աւազակաբարոյ գիւղերն էին, որ գեռ հաշտութեան օրերին պատուհաս էր շրջակայ հայ ազգաբնակչութեան համար. իսկ այժմ, որ արեան թշնամութիւն կար մէջտեղ և թրբական խոշոր ասպախմբեր միշտ այնտեղ էին կեղրոնանում ու ցրւում զանազան կողմեր, այդ երկու գիւղերը ամենավտանգաւոր կէտն էին կազմում ամբողջ Վա

րանդայի համար: Եւ ահա երկիւղը հաստատուել էր. նրանք օգտուելով Քեաբոլուցիների ներկայութիւնից, վերջիններիս և գըրսից եկածների հետ միացած, յարձակուում են Միրաշալուի վրայ՝ լինաջինջ անելու նպատակով: Գիշերային յարձակումը նրանց համար շատ նպաստաւոր էր. նախ, որ գիւղի այգիներով կամաց-կամաց, աննկատելի կերպով՝ երեք կողմից կարող էին բարձրանալ ու գիւղը մտնել. երկրորդ՝ որ գիւղը վոքրիկ, 60—70 տնից բաղկացած գիւղ էր, և յանկարծակիի բերելով պահապաններին, իսկոյն կարելի էր ներքեակ տները վառել, որ շփոթեցնելու ամենառժեղութեամբ կամաց միջոցն է:

Երբ մենք մօտեցանք Միրաշալուին, պահապաններին չը գտանք իրանց տեղերում. կամ կոտորուել էին, կամ յիտ մզուել. այդ պատճառով ոչ ոքից տեղեկութիւններ իմանալ չկարողացանք, և հնարաւորութիւն չունեցանք որոշելու, թէ թուրքերը որ տեղերն են գրաւել. միայն այգիներից, գիւղամիջից և գիւղի աջ թիերից որուառ էին հրացաններն, ու գնդակները զանազան ուղղութեամբ՝ տղագալով զալիս, անցնում էին գլխներիս վրայով: Թուրքերի հարայ-հրոցներից կարողացանք իմանալ, թէ նրանք ինչ տեղերումն են գտնուած. հարկաւոր էր նրանց զոնէ կանգնեցնել այստեղ, որտեղ կային, մինչև որ մեր ուղարկած երկու հոգին գիւղ հասնելով իմաց կը տային, որ օգսութիւնը հասել է արդէն: Այգիների կողքի թմբակները բռնելով՝ սկսեցինք հետամուտ լինել, և ճէց որ թուրքերի կողմից ձայնները բարձրանուած էին, կամ մթութեան միջից նրանց արձակած հրացաններն էին կրակ առնուած փողերի բերնին, իսկոյն համազարկերով գնդակներ էինք տեղուած: Իսկ մերոցից մի տասնեակ էլ համբերելով՝ վրայ պրծան այգիների միջով գէպի գիւղը. նրանք մէկէնսիմէկ, անգիտակցաբար, սեպաձեւ մտնուած են թուրքերի շարքերի մէջ, որ «Եա Ա՛լի» գոռալով՝ գրոհուած են գէպի գիւղը. թշնամին կարծուած է՝ թէ սրանք իրանց ընկերներիցն են, և ուշագրութիւն չեն գարցուած. և անհաւանական էլ էր, որ մի քանի ձիաւոր սիրտ անէին մտնել մի այգափիսի կրակի մէջ. բայց մերոնք հիասթափիցնուած են նրանց. այդ յանկարծակի հանգիպումից շփոթուելով՝ ճէց մէջ տեղ կանգնած՝ սկսուած են հրացանաձգութիւնը: Թուրքերն այժմ միայն ուշքի գալով, հարիւրաւոր հրացաններ են ուղղուած այդ յանգուգն ձիաւորներին, բայց անօգուտ. միայն մէկն է վիրա-

ւորում բութ մատից, յետոյ օգտուելով մթութիւնից՝ մտրակում են ձիանց և գիւղը մտնում:

Ի՞նչ էր կատարում գիւղում... սրտներնիս դողում էին. վստահ էինք միայն, որ գիւղը չեն վերցրել, որովհետև ծուխ ու բոց չէր երևում. մեզ մնում էր թշնամու ուժերը ջլատնել, նրանց ուշադրութիւնը գէպի մեզ գրաւել, որպէսզի գիւղը կարողանար ուշաբերուել:

Կէս ժամ հրացանաձգութիւնից յետոյ, կարծես թէ թուրքերը զանազան տեղերից համախմբուեցին այդիների մէջ, և մեզ պարզ լսում էինք նրանց խառն ի խուռն խօսակցութիւնները:

—Առատամ, Ա՛ռատամ,—գոռում էր մէկը, —ըէչալ գէալմազի:

Մեր հրացանները որոտացին գէպի այդ կողմը:

—Ադա, էս կողմ եկէք, հավայի գնդակ կը կաչի, —կանչում էր միւսը:

Նորից այդ ձայնի ուղղութեամբ թնդում են մեր համազարկերը:

Այս ձեռվ կոիւն էլի շարունակուեց մի ժամու չափ, ապա յանկարծ ձայները շատացան, լսուեց զանազան հրամաններ, լաւմաղալ, և մէկը բարձրածայն հայհոյում էր.

—Շնան-շան որդիներ, չասացին հանգիստ մնացէք, մի գնաք:

—Լսեցիք, լսեցիք, —կանչեց մերոնցից մէկը, —երկի վնաս շատ են կրել:

—Տղէք, էլ ցածացէք, էլ ցածացէք:

✓ Իշանք մինչև այդիների ցանկապատերը, հաղիւ այժմ մի յիսուն քայլի վրայ լինէինք. և որովհետև մարդ չէինք տեսնու- առանց նշան բոնելու, արագացրած հրացանաձգութեամբ սկսեցինք այդիները գնդակոծել ամեն ուղղութեամբ: Զայները փոքր առ փոքր պակսեցին. հրացանաձգութիւնը ևս հասաւ գաղրելու աստիճանին: Կոիւը վերջանում էր. մի քառորդ ժամից յետոյ՝ ամեն ինչ հանգստացաւ:

Լոյսը կամաց կամաց բացուեց. և առաւտեան մթնշողի միշտ պարզ երևում էր մի թանձր փոշի, որ Գիլաֆլուի բուռունից էր բարձրանում. այդ թեարգուն էր, որ բարձրացել էր տեղից: Փախչում էին նրանք, կարծելով որ հայերը հետամուտ են լինում, թէ գիւղը թալանել և թալանն են փախցնում իրանց հետ,

չգիտէինք, և սրտատրով, դողդողալով գէպի գիւղը վաղեցինք, որ մեզանից 15 ըոպէի վրայ էր:

* *

Գիւղից ներքեւ, թթինեների տակ, այսաեղ-այնտեղ արեան փոքրիկ լճակներ կային. գիակներ չէին երեսում. թուրքերը տարել էին իրանց զոհերը: Թիշ էլ բարձրացանք. ահա մէկը. երիտասարդ է. զիլին խանչալի հարուածներ... թուշը պատռած... ատամները՝ փշրած... կատաղութեան վայրկեանին հայը իւր գաղանութիւնն էր ցոյց տուել: Ահա մէկն էլ. ընկած է երկրորդ տան բակում. գրեթէ պատանի է, 18—19 տարեկան. ականջի մէկը չկայ... գըլուխը փշրած... արիւնը բերանին չորացած:

Մտնում ենք բակը. Այստեղ, զուռը շարած տախտակների վրայ, որտեղ անկողիններ են փուած եղել, երեք տեղ արեան մուգ-կարմիր զանգստածներ են երեսում... այդաեղ անշոնչտ մուռթուուներ են եղել: Բարձրանում ենք տունը. սենեակները դատար, ու... մնդուկները փշրած, ամանեղինները ջարդած, զանազան էժու... ին իրեր այս ու այն կողմ շպրտած....: Պարզ էր որ աւերիչ ձեռքը հասել էր այդտեղ:

Բակում կանգնել է տանտէրը, հրացանը ձեռքին, գոյնը թուած, ատամները կրծտացնում, լեզուն կծում է, որ չզոռայ, շրթունքները հուպ է տալիս, որ կուտակուած փղձկոցը խեղդէ....

Կամկածելու տեղիք չկար. գիւղը վնասուել է...

Անցնում ենք միւս տունը. նոյն աւերածութիւնը, նոյն գաղանութիւնները: Եւ մարդու մարմնով սարսուս էր անցնում, երբ մտածում էր, թէ ինչ կը լինէր ամրող գիւղի գրութիւնը, եթէ Դանակցութեան կազմակերպած ինքնապաշտպանութեան զինուորներն օգնութեան չհասնէին:

Գիւղը փրկուած էր. բայց վեց տուն բոլորովին կամ կիսովիմք՝ թալանուած էին: Պահապանները մօտեցան. գիւղը նրանց էր հաւատացել. նրանք իրանց պատասխանատու էին զգում, ուստի սկսեցին երդուել, որ քնած չեն եղել, այլ թշնամիք շատ լաւ ծանօթ լինելով բոլոր ծակուծուկերին, զաղոնի ճանապարհներով եկել ու ներս են խուժել, յետոյ միայն իրանք սկսել են զիմանքեր՝ միան-լով գիւղացիների հետ, մինչև որ օգնութիւնը հասել է:

—Միթէ նրանք կարող էին մեր մազին գիւղել, եթէ գոնէ-

մի հազի ձայն լսած լինէինք, — ասում էին գիշերապահները. — կարծես օձի պէս փորսող տալով են եկել:

— Քանի հոգի են սպանուել:

— Վեց. չորսն արդէն մնոել են, երկուսն էլ կը մնանեն:

— Իսկ ո՞րտեղ են դիակները:

— Եկեղեցում:

Մի բանի հոգով գիմեցինք այստեղ:

Սեղանի առաջ, մի կապերտի վրայ՝ շարուած էին չորս դիակ... դոհերը՝ խայտառակ, անմիտ վրէժինդրութեան կամ թալանի տենչով տարուած և մի գաղտնի ձեռքով շայուած աւազակների:

Մէկը մի տարեկան, օրօրոցի երեխայ էր. դաշոյնը մխուած էր նրա կրծքի երկու կողմերից. փոքրիկ թաթիկներից մէկը բերած, սեղմած էր վէրքին. միւսն էլ մի երեխայ էր՝ 2—3 տարեկան. նա մորթուած էր, երեսն արիւնաշաղախ. երրորդը մի 19 տարեկան պատանի էր, նոյնպէս դաշունահար. նրա կուրծքը դիուժանը օրոք ցածրանում ու բարձրանում էր... նա գեռ ջնջում էր. բայց այդ կեանքի վերջին նշոյներն էին. քառորդ ժամից յենդոյ նա էլ չկար: Չորրորդը մի ջանէ հարս էր՝ մորթուած երեխաների մայրը. մի մհծ վէրք ունէր ծծի տակից, մէկն էլ կրծքից նա կարծես քնած էր. գէմքը չէր ծրմուռել. մոմակերպ երեսին գեռ փայլում էր գեղեցկութիւնը. վարսերը եկել, աջ ուսով փուռել էր կրծքին և վէրքի մի անկիւնը ծածկի: Մւկնից քիչ հեռու նրա ամուսինն էր կանգնել. նա՝ որին քիչ առաջ պատահեցինք տան բակում. նա այժմ էլ իրան զապում էր. բայց աչքերում փայլում էր ինչոր կատաղութիւն, ինչոր չարագուշակ, սպանող կրակ:

Գիւղի գլխին ջուր էր մաղուել. թալանուել էր վեց տուն, սպանուել էին չորս հոգի, ծանը վիրաւորուել երկուսը, որ նոյնպէս մեռան: Աւգալ-Գիլաֆլուն, այդ գարեւոր հարկան, բայց միշտ անհանգիստ գիւղերն իրանց արեան ծարաւն էին յագեցրել Միքաշլուից:

Մենք գուրս եկանք գիւղամէջ: Վարանդայի ծայրերից եկեւ հաւաքուել էին բազմաթիւ սպառազինուած երիտասարդներ:

— Կամ պէտք է կոտորուենք, կամ մոխիր դարձնենք Աւգալ-Գիլաֆլուն, — կատաղաբար գոռում էին նրանք, բարկութեամբ հրացանի կոթը գիւղն խփելով:

Եւ հս սարսափով էի տեսնում, թէ այդ, սովորաբար խաղաղ, համբերատար գիւղացիները ներկայ բոպէում ինչքան են գաղանցել, և ինչ սարսափիներ կատարելու է ընդունակ դարձել:

Աւգալ-Գիլաֆլուն աւերել... ևս նախօրօք տեսնում էի հարիւրաւոր հայ երիտասարդների փուռած դիակները... հանար բան չէ ուժ հարիւր առան ունեցող, անառիկ դիրքերով Աւգալ-Գիլաֆլուն վերցնելը, որտեղ, բացի տեղական զինուած ուժից, գեռ Ազգամի շրջակայքից հարիւրաւոր ձիաւորներ էլ էին եկել, մտել, նոյնպէս զինուած, նոյնպէս պատրաստ: Մենք այդ հաստատ գիւղինք, որովհետեւ մեր աչքերով էինք տեսել:

✓ Բայց ժողովրդական ցասումը սահմաններ չի ճանաչում:

II

ՄեՊՏԵՄԲԵՐԻ 6-ը

Մինչեւ լուսաբաց մարդիկ խմբուած գիւղում, մտածում էին, — յարձակուել, թէ ոչ. ուզում էին մօտաւորապէս որոշել, թէ հակառակորդն ինչքան ոյժ կարող է ունենալ. գուրս եկաւ որ, ըշհաշուած ամուր գիրքերը, թուրքերը կարող են հասած օգնականներով միասին՝ կոռւի գաշտ հանել այդ երկու գիւղերում 2000—2500 հոգի. իսկ գրանց գէմ պէտք է գնար 375 հոգի, թէկ սպասում էր ծայրերից աւելի խոշոր ուժերի գալը:

Լոյմն արդէն բացւում էր. յանկարծ... ճըռ՛ո՛... ճըռ՛ո՛... և գնդակների տարափը տեղաց Միքաշալուի գլխին:

— Դէպի գիրքերը, շնւտ. — կանչեցին ինքնապաշտպանութեան զեկավարները. զինուորները գուրս վազեցին:

Աւգալ-Գիլաֆլուն ահագին ուժով երկրորդ յարձակումն էր զործում, մտածելով որ նախկին յարձակումից՝ հայերը սարսափահար եղած, գիւղն անտեր թողած կը լինին: Նրանք եկել, բըռնել էին Միքաշալուի դիմացի թփոտ բլուրը, որ տիբապետում էր մնացած բոլոր գիրքերին. գրաւել էին Աւգալի հիւսիս-արեմտեան բոլոր բարձրութիւններն ու բարերը, իսկ բազմաթիւ ձիաւորներ, ներքեսում ցոյցեր էին անում, սրարշաւ մի կողմից միւսը բշելով՝

հայերի ուժերը բաժան-բտժան անելու համար: Դրութիւնը լուրջ էր. Միրաշալուի բախտը մազից էր կախուած:

Թէկուղ արեան գնով, պէտք էր բլուրը խլել նրանց ձեռքից. հակառակ դէպքում՝ պաշտպանուելը կասկածելի էր դառնում: Մի տասնեակ գիւղի գլխաւերնում ընկած հանգստարանում ամրանալով սկսեցին ըլքի գիւղին պինդ կանգնած թուրքերին զբաղեցնել անընդհատ հրացանածգութեամբ, բաւական յաջող նշաններ վերցնելով: Եւ այդ տասնեակի գնդակների հովանաւորութեան տակ երեսուն հոգուց բաղկացած մի յանդուղն խումբ, մահն աչքի տակ առած՝ բլը ստորոտից խիզախսեցին դէպի վեր, դաշունամերձ կոռւի մտնելու: Վերեկից տեղացող գնդակները ոչ մի վնաս չտըւին դէպի վեր մազգող հայերին, որոնք երբեմն թփերի տակ կուանալով՝ համազարկներ էին տալիս և էլի առաջ խաղում: Համարձակութիւնը յաղթեց արգելքներին. ժամը 7-ին ըլուրը հայերի ձեռքին էր:

Տիրապետող դիրքը գրաւելոց յետոյ՝ հայերը տարածեցին իրանց թերը և կիսալուսնի ձեռվ շրջապատեցին թուրքերին: Սկսուեց մի կատաղի, օրհասակսն կոիւ... ինչու համար էր այդ կոիւը. ոչ ոք հաշիւ չէր տալիս. միայն կուում էին...: Հայերն այժմ պաշտպանողականից յարձակողականի էին անցել, ու շատ անգամ անխոհեմ գրոհներով ուզում էին ցոյց տալ, թէ որքան են կատաղած:

Թուրքերի ձեռքից խլուղ դիրքերում արդէն սկսեցին դիակներ երեալ. այդ արդէն ապացոյց էր, որ հակառակորդը յուսարեկ է եղել, որովհետև շատ քիչ էր պատահում, որ իրանցից ընկնողին թողնէին կոռւի դաշտում. բաշում, տանում էին. Այստեղ, այստեղ՝ դիակների թիւը շատանում էր. մի դիրքից միւսը փախչելուց՝ զոհեր շատ էին տալիս: Հակառակորդների գնդակները վընաս չէին պատճառում. նշանից շատ հեռու էին ընկնում, որով աւելանում էր հայերի ինքնավստահութիւնը: Այդ, և անպայման վրէժինդիր լինելու կիրքն էր պատճառը, որ հայերը տարօրինակ համարձակութեամբ ու արագութեամբ էին վրայ պրծնում, և արդէն տասնեակ նշանաւոր դիրքեր էին խլել թուրքերից ու նըստել այստեղ:

Կոռւի ամենաբորբոքուած բոպէին, երբ թուրքերը ջանք էին գործ դնում Գելաֆլուի բանալին կազմող Աւգալը փրկելու, իսկ

հայերը՝ ներս խուժելու, յանկարծ Միրու-Շէնի սարալանջին հայերի մի խմբակ իրանց հրացանները կախեցին Աւգալի վրայ. երբ ծուխը բարձրացաւ և հրացանները որոտացին, Աւգալի մէջքը կոտրեց... Հէնց այդ իսկ բոպէին՝ գրեթէ միաժամանակ, Գիլաֆլուի: ձախ թեռվ ընկած այգիների ցանկապատերը բոցավառուց ին Այդ երկու հանգամանքը թուրքերին վերջնականապէս յուսահատեցրեց, և այլ ևս գիւղից դուրս դիմադրելն աւելորդ համարելով՝ դուրս ընկան բոլոր գիրքերից ու վազեցին դէպի Գիլաֆլու, Աւգալը թողնելով: Հայերը դէպքից օգտուելով՝ ժամանակ չտուին ուշաբերուելու, այլ կընկակոխ՝ հետամուտ եղան և Աւգալը մտան:

Սկսուեց դժոխային գործողութիւնը... միաժամանակ հրդեհ բարձրացաւ ամեն տեղ. Աւգուուի ձորից՝ կրակ գրին Գիլաֆլուի մի ծայրում, Ղզղալի հովտից՝ միւս կողմում. հիւսիսային կողմից՝ հրդեհն արդէն հսկայական չափեր էր ընդունել, իսկ Աւգալը, բընակիներից գատարկուած Աւգալը՝ մի կրակի ծովի էր նմանում: Մարդկանց այլ ևս ճանաչել չէր կարելի. բոլորի մէջ այդ վայր կեանին միայն մի բան էր խօսում. — շատ վառել, շատ ոչնչացնել...:

Գիլաֆլուի բուռունից անթիւ սայլեր, բեռնաւորուած հարուստ բեռներով և կին ու երեխաններով՝ իրանց ծայրը բաց արին դէպի Բաղվանլար: Կին կար, որ երեք երեխայ չալակած ու գրկած էր փախչում, սայթաքելով, գլորուելով, նորից ստրի կանգնելով...: Պատերազմի այդ ոգեսրիչ հանգամանքներում անգամ մարդու սիրտ կծկում էր, հեռուից այն թշուառների վայ ու վայնասունները լսելով: Բայց այդ տարերային աւերի առաջն ովկ կարող էր բռնել սկսուել էր, պէտք է վերջանար: Եւ Աւգալը մոխեր դարձաւ. մեծ ջանք հարկաւորուեց, որպէսզի թոյլ չտրուի մզկիթը վառելու. մզկիթը փրկուեց:

Ժամը 12-ին սկսուեց Գիլաֆլուի աւերը: Բոլոր նշանները ցոյց էին տալիս, որ Գիլաֆլուեցիք մտքներով անգամ չեն անց կացրել, թէ թշնամին երբ և իցէ կը համարձակուի մտնել այդ՝ միշտ շրջակայրին սարսափ տարածող գիւղը: Մի տան մէջ սըփոց կար փռած, վրան շարած ամանեղիններ. մի ուրիշ տան՝ կաթսան էր զօլմայով լի. մի հարուստ, չքեզ տան կլոր սեղանին՝ գեռ սուրճը չէր սառել. մի այլ պարտիզում՝ գեռ թշթում էր հէշտաենը... և այդ բոլորը, իւր մանրամասնութիւններով Պօնպէան

Էր յիշեցնում, միայն այն զանազանութեամբ, որ այնտեղ վէզուվըն էր գործում, իսկ այստեղ՝ մասսայի կատազութիւնը:

Պատժուեց, զարհուրելի կերպով պատժուեց Գիլաֆլուն. այդ հարուստ, վերին աստիճանի հարուստ գիւղն այժմ աւերակ էր. թալանողները մէծ հարստութիւն բաշեցին, տարան այնպէս՝ ինչպէս Գիլաֆլուեցիք էին աւազակութիւնով թալանել, բերել հարստութիւն դիզել:

Երեք կողմից շրջապատուած լինելը և Աւգալի աւերուելլը Գիլաֆլուեցոց տունը բանդեց. փախչելու տեղը միայն ներքեկ ծայրի ձորն էր, որտեղով օգնական թուրքերի մեծ-մեծ խմբերը վաղուց արդէն տմարդօրէն փախել, դաշտ էին դռւրս եկել, գիւղը թողնելով բախտի կամքին: Հակառակորդների կողմից ոչ մի դի մարդութիւն չկար և հայերն անխնայ կոտորում էին ձեռք ընկածին: Եւ կատարուեցին այդ ժամանակ ոճիրներ. ոճիրներ, որ միայն վայրէնի գաղաններին է յատուկ....

Մի տան բակում սպանուած էին տանտէրն ու երկու ուրիշ թուրքեր. երբ հայերը պատրաստում էին կրակը դնելու, թագստարանից գուրս եկաւ մի կին, մեռելատիպ, բարձր հասակով, գրաւիչ դէմքով, մի փոքրիկ, աչքերը լայն բաց արած երեխայ զրկին:

— Միթէ որան էլ պէտք է սպանէք: — մը մնջաց մի այնպիսի ձայնով, վշտի մի այնպիսի զարհուրելի շեշտով, որ կարծեն հազարաւոր ասեղների ծայրեր էր խրում մարդու հոգու մէջ:

Ներկայ գտնուողներից մէկը ցնցուեց, փամփուշտը զրաւ էր բացանում, մի ոտ առաջ դրաւ և յարձակողական դիրք ընդունելով՝ զոռաց:

— Ո՞վ որ համարձակուի սրանց մօտենալ, նրա դիակը կը փոխի:

Այդ միջոցին մօտեցաւ մէկը, հրացանը պինդ սեղմած, զայրոյթից բերանը ծուած, ջղաձգօրէն վեր-վեր թուչող շրթունքներով և ծակող հայեացը սկեսուց պաշտպան հանդիսացողի աչքերին....

Մի վայրկեան լուսթիւն տիրեց....

— Եկեղեցում շարած այն սրախողիսող երեխաներն ու հարսը տեսամբ մէկէն օրը, Միրաշալլում, — վերջապէս կանչեց նա, խօսը դիմացինին ուղղելով:

— Տեսայ:

— Հա... տեսամբ... նրանք իմն էին, սրանք էլ իմս են... հեռու...:

Եւ կատարուեց ոճիրն այն մարդու ձեռքով, որի այրուած, խորովուած սիրալ միայն արիւն, արիւն էր փափագում. թող ջահէլ կնոջ, թող ծծկեր երեխայի լինէր այդ արիւնը. նրա ինչ հոգն էր. — արիւն եմ ուզում, սիրտս հովացնելու համար, — պըրծաւ, գնաց:

Քանի՞-քանի այդպիսի դէպքեր պատահեցին այդ սկ օրը գլժրախտ Գիլաֆլուում: Արտաւորուեց հայի անունը, որովհետեւ երեխաներ մորթուեցին... խայտառակուեց հայը, որովհետեւ կանայք գնդակահարուեցին... սոորացաւ հայը, որովհետեւ թալանով պարապեցին: Բայց ով էր եղել ուսուցիչը....

Կոռեին եկել, հասել էին և մի հարիւրակ կողակներ, որոնք աչ մի տրամադրութիւն ցոյց չտուին կուիւը հանգարաւեցնելու. իսկ երբ սկսուեց թալանը, նրանցից ութ հոգի միացան հայերի հետ և անհտուն ման գալով, սկսեցին մեծ հուանդով մնդուկներ ջարգել, կապոցներ ցրուել, զանազան թանկագին իրեր գրպաննին խոթելով: Նրանցից մէկը մի հարուստ տնից վերցրաւ մի խիստ գեղցիկ, նրբագործ փոքրիկ գորգ:

— А это для нашего команда, — сказала Ната и фытшад: Երեկի նոյն ժպտով էլ հայի խալիչէն կը ծալէր „для команда“.

Երբ հրդեհն ու թալանը գագաթնակէտին հասաւ, կողակների օփիցէրը, որ կողակներով շրջապատուած, կանգնած էր բլրի գըլխին, զոռաց:

— Армяне, назадъ!

Լաւ „назадъ“... մարդիկ կատաղութեան բոպէին Գիլաֆլուի աւերելն են երգուել, և այժմ վայրենութեան մի առանձին հաճոյք են ստանուած, հրճուած իւրաքանչիւր լուցկի թափ տալիս՝ իւրանց հարեւների գոյըը մոխիր դարձնելու... այժմ մի «նազագով» պէտք է յետ դառնան. այդ «նազագ» գոչելու ժտմանահը հիմա չէր, այլ 1904 թ. փետրուարի 6-ին....

— Փչիր «յետ». — Հրամայեց նաւ:

Կողակը մի քանի բայլ առաջ անցաւ ու «յետ» կանչեց. բայց ինչ կարող էր անել շեփորն այժմ, երբ հազարարոր անգէններ էին, տասնուհինգ տարեկանից սկսած՝ եկել, թափուել էին Աւգալ-Գիլաֆլու, և որը շալակով, որը ձիով, որն էշով, թալան էր, որ

դուրս էին քաշում: Իսկ զինուորների մեծ մասը փախչողների յետեկցն էին ընկել:

Հենց այդ միջոցին երկու ձիաւորներ թռած՝ վրայ հասան: — Ի՞նչ բանի վրայ էր, ձեր տունը չքանդուի, — կանչեցին նրանք, — Վարազաբոյն աւերեցին:

* *

Աւգալ-Գիլաֆլուեցիներից խնամուած դրսեցի օգնականները, որոնց բանաչափ անկողինները հէնց մենակ մէջիդումն էին փըռուած, այդ օգնականները գիւղացիներին մինակ թողնելուց ու գիրքերից փախչելուց յետոյ, իրանց վրէժը լուծելու համար՝ մօտ հազար հոգով շուր էին տուել Վարազաբոյնի վրայ, մտածելով որ այստեղի գիւղուած ուժերն անցած կը լինեն Միրազալու և գիւղը դատարկուած կը լինի պաշտպաններից: Եւ նրանք չէին սխալուել այստեղ միայն բան հոգի էին մնացել, որոնց թուրքերը յետ էին մղել գիւղից վերստ ու կէս հեռաւորութեան վրայ գտնուող գոմերից, վառել բոլորը և այժմ զանազան ուղղութեամբ գիւղն էին գալիս:

Սուրհանդակների բերած լուրը լսելուն պէս՝ քսանուեօթը հոգի, թէև ջարգուած, յոգնած, հետիոտն գէպի Վարազաբոյն վարգեցին, մինչեւ որ յետեկից միւս խմբերն էլ կը հասնէին:

Թուրքերը բաւական մօտեցել էին գիւղին. բայց պահապանները կամակորութեամբ կուրծք դէմ տուած՝ մաքառում էին, չնայելով որ փամփուշն սպառուելու վրայ էր: Գիլաֆլուից վաղէ-վաղ հասնող խումբը թէ տուաւ կուրղներին. սկսուց մի անհաւասար, տղամարդ կոիւ. և եթէ թուրքերը չկարողացան մտնել գիւղը մինչեւ միւս խմբերի հասնելը, այդ չնորհիւ միայն յիսունաչափ կուռղների յանդուգն, անվեհեր մըցութեան:

Գնդակների տարափը զարհուրելի էր. մանաւանդ եռագծեան հրացանների համազարկերը՝ որոնց գնդակներին միայն մահն արհամարողները կարող էին դիմագրել: Հայերը մնացել էին զարմացած, թէ որքան լաւ են զինուած թուրքերը և թէ որքան կանոնաւոր է տարւում հրացանաձգութիւնը՝ նրանց կողմից:

Հասան և Գիլաֆլուի մօտ գտնուող կողակներն ու Վարազաբոյնի հարաւ-արևելեան բլրակից մի քանի համազարկեր տուին գէպի թուրքերը, վերջին նշանով, 2700 բայլի վրայ, մեծ

«մուշկա» վերցնելով, ապա փշեցին շեփորը, երկի իմացնելու, որ կառավարութեան զօրքն է նրանց դիմաց, և... ով զարմացք. ներքե, թուրքերի կողմից ևս նոյն ձեռվ փշեցին շեփորը. մէկ էլ այս կողմից, մէկ էլ այն կողմից, և խնդիրը պարզուեց...: Մինչդեռ մի հարիւրակ կողակ հայերի կողմից, Վարազաբոյնի մօտ, թուրքերին էր աշխատում վանել գիւղի մօտից, մի հարիւրակ կողակ էլ՝ իրանց սպայի և պրիստաւ իբրահիմ-բէկի հետ, թուրքերին միացած՝ Վարազաբոյն էին ուղղում աւերել... Այստեղից կողակները համազարկ են տալիս գէպի հայերը, այստեղից էլ միւս կողակները համազարկ են տալիս գէպի թուրքերը... արի ու հասկացիր. աշխեկ հաւատ ընծայիր կառավարութեանը, թէ նա անշառ է, ու լոկ խաղաղութիւն է ցանկանում. արի յոյս ունեցիր, թէ այդ շփոթից մեղաւոր կողմը կը ճանաչուի, ու կը պատժուի: Եւ կարելի է երևակայել, թէ նրանք ինչ տեղեկագրեր կը տան իրանց իշխանութեանը:

Ժամը 4-ին կոիւը բայլորովին վերջացաւ. դաշտերը մաքրուեցին, էլ ոչ մի ձիաւոր չէր երևում. ժողովուրդը հանգիստ շունչ քաշեց, և ինքնապաշտպանութեան զանազան կողմերից հաւաքուած զինուորները հեռացան գէպի միւս կողմերը:

Այդ օրը թուրքերի կրած վնասը վերին աստիճանի զգալի էր. անձնական կորուստը չհաշուած՝ աւերուել էին ութ հարիւր աներ, և թալանուած՝ միլիօնների կարողութիւն... որտեղ պէտք է տեղաւորուէին այդ մերկ ընտանիքները. ինչնվագութիւնը է ապրէր այդ՝ մի բանի ժամուայ մէջ վերջնականապէս աղքատացած ժողովուրդը...:

Հայերից սպանուել էր Փիրջամալի տանուտէր Աւանէսը, մի կտրիճ տղայ, Գիլաֆլու գիւղում, և մէկն էլ՝ վիրաւորուել էր նոյն տեղը:

Հարուածը մեծ էր, բայց թուրքերը չպիտի հանգստանային. ուստի ուժեղացրուեց դիրքերը, հրահանգներ արուեցին պահապաններին և նորից տիրեց նախկին ջղային դրութիւնը:

III

ՅՈՒՆՎԱՐԻ 4-Ը

Միրաշալուի և Աւգալ-Գիլաֆլուի դէպքից յետոյ՝ մի քանի օր միայն լոռութիւն տիրեց. բայց այդ լոռութիւնը իւր մէջ ինչ-որ խորհրդաւորութիւն էր պարունակում: Եւ իսկապէս, 4—5 օրից յետոյ էլի սկսուեց հին երգը. — ամեն օր հրացանաձգութիւն, ամեն օր՝ սպանութիւն, թալան, աւերածութիւն: Իղուր էինք սպասում, թէ վերջապէս կառավարութիւնը իւր հեղինակաւոր ձայնը լսեցնել կը տայ երկու կողմերին էլ, — բաւական է, կը կանչէ. առանց խորութեան ազգի՝ կը պատժէ յանցաւորներին, արդարադատութիւն կը տեսնենք և ամեն բան կը վերջանայ: Բայց որտեղ... ամեն մի նորեկ պաշտօնհայ, որոնց թիւը շատ շատ էր, ամեն մի օֆիցիէր իւր շրջանում տէր ու տնօրէն էր. և գործում էր այնպէս, ինչպէս ինքն էր ցանկանում, կամ զուցէ այնպէս՝ ինչպէս հրահանգում մի աւելի բարձր տեղից: Կատարուող ոճիրների մատների արանքով նայելն աւելի ու աւելի էին հայ-թրբական յարաբերութիւնները լարում:

Հարկաւոր էր մեծ եռանդ և աչալրջութիւն, կաւառներն աւելումից փրկելու համար. Վարանդան ու Խաչնը մնացած հայութեան պատուարն էր. թուրքերն այդ բանալին փշելու ջանքերն էին անում: Դեռ անցեալ 1905-ի օգոստոսին Ասկնը բակուեց թուրքերի համար, ճակատագր ական կոիւներ տեղի ունեցան այնտեղ. սակայն հայերը պինդ կանգնեցին, մի քանի թըրքական կոտորածներ տեղի ունեցան, և այնուհետև Ասկնը բակի էլ մնաց մինչև Հոկտեմբեր ամիսը, երբ իրեւ թէ հաշտութիւնն ընկաւ ու խճուղին բացուեց Շուշուց մինչև Եւլախ՝ թէ հայերի և թէ թուրքերի համար. Բայց նոյեմբերին նորից խըզուեց հաշտութիւնը, որովհետև Միրաշալուի և Գիլաֆլուի կոիւներից յետոյ՝ փոքր առ փոքր մասնակի յարձակումները մասսայական դարձան:

Հայերի դրութիւնը պարզապէս աննախանձելի էր. տարին բերը չէր տուել, հացի պակասութիւն էր զգացում. իսկ մթերք հասցնելու Ազգամ-Եւլախեան միակ գիծը բակի էին թուրքերը հայերի համար, մինչդեռ իրանք կարողանում էին կողակների մթերք:

Կամ ստրաժնիկների օգնութեամբ՝ Ասկնը անով ազատօրէն պաշար հասցնել Շուշի, նախօրօք հայերին ուղարկուած ապրանքները Աղգամում թալանի տալով: Այդպիսի անբնական դրութիւնը հայերին ստիպեց հետևեալ որոշումը կայացնել. — եթէ եւլախը փակէ հայերի համար, թող Շուշին էլ փակ լինի թուրքերի համար:

Այդ որոշման համաձայն՝ խտացրած պահակները նստեցին Ասկնը կիրճում Վարանդայի և Խաչնի կողմից, չնայելով որ այնտեղ կառավարական պահականոցում քսանաշափ կողակներ էին դրուած տասն ստրաժնիկների հետ, ճանապարհի ապահովութեանը հսկելու համար: Հայ զինուորների այնտեղ երեալով ու 16 փուրգօն գրաւելով՝ հաղորդակցութիւնը Շուշու հետ վերջնականապէս կարուեց: Քաղաքի թրքական մասում, մի ամսից յիսոյ՝ կատարելապէս սով ընկաւ. թիւած հաց Աղգամից էին ստանում փոստվ. բայց գրանով տասնեակ հազար բնակչութեանը ինչ օգուտ կարող էր համնել: Հեռագիրները տեղալ սկսեցին դէպի Բագու Թիգրիզ և այլ կողմեր. Բագուից փոխարքային դիմեցին, Պետերբուրգ հեռագրեցին՝ Շուշուայ թուրքերի նեղ զըռութիւնը նկարագրելով, խնդրում էին վերջ գնել այս խայտառակ գրութեանը: Նորից թուրքերը խօսեցին հաշտութեան, «անկնդ» հաշտութեան մասին. և գործից կենաքից հետո «մեծամա» հայերն էլ սկսեցին խորհուրդ տալ Ասկնը բաց անելու: Բայց բոլոր մինչև այժմ եղած «հաշտութիւնների» ծանրութիւնը իրանց կաշուի վրայ զգացած գիւղացիութիւնը ոչինչ լսել չէր ուզում. շատ էին խարուել, չէին ուզում տւելուրդ անգամ ևս խարուել: Նրանք մտածում էին, այդ տեսակ սարսափելի միջոցներով միայն կըստեղծեն իսկական, անկեղծ հաշտութիւն:

Ասկնը չպիտի բացուի, թուշուն չպիտի անց կենայ, մինչև որ թուրքերը չդգան, թէ անվերջ կոիւներից ոչինչ չպիտի շահեն, բացի վեաներ կրելուց. ոչ մի արգիւնք չպիտի ստանան, մինչև որ զգգան թէ անկեղծ հաշտութիւնը միայն նախկին խաղաղութիւնը կը ծնէ, այսպէս էին գատում Վարանդան, Խաչնը, Շուշին և Ղարաբաղի միւս հայ ազգաբնակչութիւնը:

Բայց ահա գեկտեմբերի 25-ին լուր եկաւ, որ վաղն Աղգամից հարիւրաշափ փուրգօններ, բենաւորուած բացառապէս թուրքերի համար ալիւրով ու շաբարով, հարիւր յիսուն կողակների ուղեկ ցութեամբ պէտք է գայ և Ասկնը անցնէ Շուշի:

—Թէկուղ մեղ կախաղան հանեն, թէկուղ թնդանօթի բերնի դնեն, չպիտի թոյլ տանք, —վճռեցին ինքնապաշտպանութեան դեկավարները. —Ասկերանից Շուշի 26 վերսու է, Աղդամից Եւլախ երեք անգամ աւելի. Ասկերանը բաց անողը, նախ և առաջ թնդ Աղդամի մասին մտածէ:

Հետևեալ օրը, 26-ին, ճիշտ որ Ղարաղաջի մօտից ֆուրդօնների սպիտակ ծածկոցները երևացին. կարաւանը շրջապատուած էր կողակներով, և յիսունից նրանք բաւական շատ էին երեւած: Հէսց որ ֆուրդօնները մօտեցան Ասկերանի մօտ գտնուող ստրաժնիկների ու կողակների պահականոցին, հայերը մի համազարկ տուին իրանց թագստատեղից օդի մէջ, և սկսեցին կոացած այս ու այն կողմը վագել, ֆուրդօնները շրջապատելու համար: Բովէն կը լուսիկական էր. կողակների հետ որոշուած էր չընդհարուել, միայն եթէ նրանք չէղոքութիւն պահպանեն: Նրանք ֆութկոտութեամբ թագ կացան. ֆուրդօնների մի մասը, որ Ղարաղաջից շատ ուսաջ չէին անցել, թուրքերի կրակի օգնութեամբ յետ փախան, իսկ 54-ը մնաց տեղն ու տեղը կանգնած. մօտակայ գիւղերից վրայ հասան թալանչիները և բոլոր ֆուրդօններն իրանց բոլոր ընկաներով, տախտակներով, ձիաներով, երկու ժամուայ մէջ գոլորշիացան:

Հարուածը շատ ուժեղ էր. այլ ևս Ասկերանի անունն առանց սարսափի յիշել չէր կարիլ. տպաւորութիւնը մեծ էր. 150 կողակների օգնութեամբ անգամ թուրքերն անցնել չկարողացան: Այդ օրերում «Կայսեր կազակազօրի ստարշինա» իվան էրիստառվիչ Ֆօն-Ազարովսկին իջևանել էր Աղդամում. Ասկերանի գէպը մեծապէս յուղել էր նրան և նա գեկտեմբերի 31-ին թիկնապահ կողակներով Ասկերան մտնելով, սպառնալիքներ տուաւ հայ պահակներին, առաց նրանց ձերբակալել փորձելու, պատուիրեց յայտնել իրանց «աւազակ կոմիտէտին», որ թալանածն իսկոյն ևեթ վերադարձնեն, չորս օր ժամանակ տուաւ, ապա հասաւ Աղդամ և իւր հըռչակաւոր կոչն ուղարկեց՝ վերնագրութեամբ —«Կոչ Ասկերանի շըրջանի բնակիչներին»: Իսչեմ ասես, չկային այդ կոչի մէջ. և սպառնալիք, եւ խրատ, եւ մեծամեծ պատիմների խոստումներ, եւ անձնական յոխորտանք: Միայն չիմացուեց, թէ նա ինչ է ասել Ասկերանում պահապանութեան համար վաղուց ի վեր դրուած կողակներին և մշտական ստրաժնիկներին, որոնք չորս ֆուրդօնի

ապրանք թալանել և պահականոցի մի անկիւնում էին դարսել և «ձեռնտու» վներով այժմ ծախում էին հայերին, միաժամանակ նրանց քաջութիւնը, սրտոտ լինելը գովելով, նրանց մէջ թալանելու կիրքն աւելի ևս վառելով...»:

Կոչի մէջի ի մէջի այլոց գրում էր.

«Խելքի եկէք, և թող իշխանութեան պատժող աջի բարկութիւնը մեղմանայ և ողորմած լինի... ցոյց տուէք զղում ի սրտէ, թէկուղ մասամբ ուղղելու ձեր գործած չարիբը. արէք այնպէս, ինչպէս ինքս անձամբ յայտնել եմ ձեզ գեկտեմբերի 31-ին Ասկերանում, ձեր պահակի միջոցով. երեք օրուայ ժամանակամիջոցում, հաշուած այս օրուանից՝ վերադարձրէք ձեր բոլոր թալանածները, բոլոր ֆուրդօնները, բոլոր ձիաներն ու բոլոր բեռները, իսկ պակասի փոխարէն՝ ներկայացրէք փողով: Արէք այդ բոլորը ոչ ուշ քան սոյն 1906 թուականի Յունուարի 4-ի առաւատը և ձեր վճնոր յայտնեցէք Աղդամում ինձ, կամ ստիլկանապեա Թէմուր-բէկ Հասան-բէկլովին, ստրաժնիկների միջոցով: Յանձման տեղը Ղարաղաջի քարվանսարան է: Յետաձգելու մասին ինպիրը՝ կանիօրէն մերժումն եմ յայտնում:

«Իսկ եթէ չէք կամենում ձեր մեղքն ուղղել, ապա խոհեմ եղէք և նշակակած օրը ձեր կանանց, երեխաներին ու ծերերին ուղարկեցէք ապահով տեղեր, ձեր կամակորութիւնը կ'արձակէ ձեռներս: Յիշեցէք, որ այժմ իմ կողմն են ճշմարտութիւնն ու իրաւունքը, իսկ նրանց հետեւում է արտիլերիան. եթէ լսելի չէ իմ ձայնը, ապա նա ինձնից բարձր կը խօսէ:

«Փիտեմ որ ուրիշների հետ «Կորչի մահուան պատիմը» գոռացող, բայց անկիւնից առատօրէն այնպէս գործադրող, —ձեր ապօրէն դատական ատեանները ինձ մահուան վճիռ կը գրեն իմ ճշմարիտ գործերիս համար. բայց իմացէք և գուք, Ասկերանցիներ, որ ես քաղաքացի եմ, հասարակութեան ծառայ, ընտանիքի հայր. դուք միաբան կը լինէք ձեր կոմիտէտի հետ, ես չեմ ների ձեզ իմ ապագայ մահս, համաքաղաքացիներիս վիշտը և երեխաներիս ու մերձաւորներիս արտասուրը. եթէ դուք կը ստիպէք ինձ զէնք բարձրացնել, ապա ես գեռ կենդանութեանս ժամանակ այնպիսի մի հոգեհաց կը սարքեմ, որ կը զողան շրջակայ լինաները, որ արդէն ցնցուած են ձեր անիրաւութիւններով»:

Աւելացնում էր, որ ինքը հայերի դէմ թշնամական ոչինչ չու-

նի, որ ինքը հայերի մասին լաւ գաղափար ունի կազմած, որին ապացոյց՝ քսան տարի առաջ զրած իւր մի զիրքը, որտեղ հայերի մասին իւր նպաստաւոր կարծիքն ունի:

«Յիշեցէք, դրում էր նա, —որ հարիւր տարի ասաջ ուղարկան զօրքո պաշտպանում էր Ասկերանը ձեր աղատութեան համար. ուրեմն մի ստիպէք ինձ ձեր արիւնով ներկելու այդ մեզ համար իւանկազին պատերը. յիշեցէք, որ հասնում է Մկրտութեան մեծ տօնը, երբ մարդկութիւնը վերանուեց Յորդանանում՝ գէպի նոր կեանք, և թող ինձ չվիճակւի ձեղ լուանալ արեան բաղնիսում»:

Յունուարի 4-ը նշանաւոր է Թօն-Ազարովսկու կոչով, որ թէն գրուած էր Ազամում 1906 թ. Յունուարի 1-ին, սակայն Վարանդ հասաւ միայն 4-ի առաւոտեան. ուրեմն եթէ նոյնիսկ բոլոր ֆուրդօնները իրանց բեռներով մնալիս լինէին, էլի Աարագաջ տանել ու յանձնել չէր կարելի. Ո՞վ էր ուշացրել այդ կոչի տեղ համար... սորաժնիկներն ասում էին, որ իրանց էլ այդ օրն է յանձնուել. մինչդեռ եթէ ժամանակին հասած լինէր, գոնէ կարելի էր ուստասիսնել, պարզել իրերի դրութիւնը»:

Գուցէ Թօն-Ազարովսկին խսկապէս ազնիւ գիտաւորութիւններով էր առաջնորդում, և ցանկանում էր խիստ միջոցներով անապարհն ապահովել, բայց բանած ուղղութիւնն անգործնական էր: Խելքը զիմին մարդը մի քիչ մտածելուց յետոյ՝ մի տեսակ հաւատ ընծայել նրա բարեացակամութեանը՝ չէր կարողանում, որովհետեւ նա Ազամում իւր աչքովը պէտք է տեսած լինէր հայերի միլիօնանոց գործարանների խանձուած պատերը. Նրան շատ լաւ յայտնի պէտք է լինէր հայերին պատկանող ապրանքների Ազամում ամբարտելը, թուաբանական ամենահասրակ խնդիրները լուծել պիտի կարողանաւը և նրա համար գիտար չէր լինի հաշուել, որ եթէ Շուշուց հելախ 106 վերստ է, և եթէ այդ 106 վերստից գուրս գանք հայկական մասի 26-ը, թուրքերի ձեսքին քանիսը կը մնայ. և թէ ո՞րքան ժամանակ, է որ այդ տարածութիւնը հայի ոտ չի տեսել: Նա զրել էր, թէ՝ մեծ հանապարհների վրայ այդ տեսակ յանցանը կատարողները՝ պատերազմական կամ սովորական գրութիւն եղած ժամանակները խըստագոյն պատիժ են ստանում, նոյնիսկ մահուան վճռի են արժանանում: Շատ լաւ. թող նոյնիսկ մահուան պատիժը լինի. բայց այդ օրէնքն ինչու միայն Ասկերանի համար պէտք եկաւ...:

Յօն Ազարովսկու կոչի մէջ ամենախորհրդաւոր կէտը հետեւ և եալն էր.— «Մտածեցէք և այն մասին, թէ՝ երբ որ ես Ազգամից գուրս հանեմ զօրքը, ով կարող է երաշխաւորել, որ թուրքերը գուրս չեն գայ հնագանդութեան սահմանից և չեն յարձակուի ձեր զիւղերի վրայ»:

Յիշատակելու արժանի տողեր... Սեպտեմբերի 4-ին յաջորդեց Սեպտեմբերի 6 ը. արգեօք, Թօն-Ազարովսկին գիտէր, որ Յունարի 4-ին էլ Յունվարի 6-ը պէտք է յաջորդէր, արեան բաղնիս կազմելու համար պիտի ջանային «Հնագանդութեան սահմանից գուրս եկած» թուրքերը...:

Յունուարի 4-ի առաւօտեան Թօն-Ազարովսկին զօրքերը հանց Ազգամից: Մինչև Ասկերան վեց վերստ է. հասաւ, թնդանօթները կանգնեցրեց Խանաբադ հայ գիւղի գիմաց, և իւր խոստման համաձայն՝ շրջակայ լեռները գողացրեց նրանց թնդիւններով. Տումբը նետելուց յետոյ՝ հրազենները մօտ բացից Ասկերանի պատերին և չորս ոռումբ էլ պատերին զարկեց:

Իսկ ինչ էին մտածում այդ ռոպէին բլուրների շրջանների ծայրին թառած ու թամաշայ անող գիւղացիք. Նրանք էլ գողում էին... ոչ, նրանք միայն զիմնին էին թափ տալիս և ասում. — Եւլախից մինչև Ազգամ եկաւ ու ոչինչ չարաւ. իսկ այժմ...— ուրեմն այս է օրէնքը:

Յունուարի 4-ը նշանաւոր եղաւ և մի այլ հանգամանքով. այդ օրը Ասկերանի պահակները զերի էին վերցրել Շելլուեցի մի թուրքի: Խեղճը սարսափից գողում էր. Նրան ուղարկել էին Կարկառ գետից ջուր կապելու, որ ամիսների ընթացքում կտրուած էր հայերի ձեռքով. բայց փոխանակ իւր գործը կատարելու, անզգուշութեամբ չորս կողմը չէր դիտել և նրան իսկոյն թուրել էին:

Երկար հարց ու փորձերից յետոյ՝ նա բաց թողնուեց, լաւ պատիւ ստանալով. մի զիմնուոր գաւակն առաւ, Շելլուի հանգերում իջեցրեց ու վերապարձաւ: Օգուտ քաղելով դէպքից՝ Ազգամի մի ազգեցիկ և խաղաղութեան կողմնակից մարդու անունով մի նամակ էլ գրուեց և յանձնուեց թուրքին, որ իսկոյն նրան յանձնէ. Այդ քանի-երորդ անգամն էր, որ հայերը զանազան տեղերից, զանազան միջոցներով Ազգամցիների աչքերը բանալ էին ուղում նամակներով ու թուրցիկներով. այս նամակն էլ մի փորձ

էր... ովզ գիտե, գուցէ արամադրութիւն ունենային, որոնէ այս անգամ հաշտութեան աղաղակը լսելու: Սակայն Ֆօն-Ազարովսկու թնդանօթների ձայնը նրանց ուրիշ բան էր թելադրել—կառավարութիւնը իրանց կողմն է...

IV

ՅՈՒՆՈՒՍԻ 6-Ը

Դարաբաղի ձմեռն անտանելի է. մանաւանդ գիշերները. մարդու շունչ բերնին սառչում է և սառոյցը փոքրիկ լուլաներով կամկխուռմ մազ ու միրուքից: Բայց գրութիւնը տագնապալից էր: Այդ սարսափելի ցրտին՝ գիւղերի պահապանները սրթորթալով, անքուն հակում էին. հազարաւոր մարդկանց, կին ու երեխաների կեանքը նրանց զգուշութիւնից էր կախուած և նրոնք ամենայն գտաստութեամբ պարտում իրանց գիրբերում:

Դեռ երէկ, յունուարի 5-ի առաւատը, հաստատ աղբերից լուր էր ստացուել, թէ Աղդամում հաւաքուել են զինուած թուրքերի մի ահագին բազմութիւն, որոնք 6-ին պէտք է յարձակուեն կամ Վարագարոյնի, կամ Նախիջևանիկի, և կամ Խանարազի վըրայ: Այդպէս՝ կատարում էր Ֆօն-Ազարովսկու գուշակութիւնը, թէ՝ «Ք կարող է երաշխաւորել, որ իւր Աղդամից ցուրս գալուց յետոյ թուրքերը չյարձակուեն հայերի գիւղերի վրայ»...

Արեան բաղնիւսը... ահա թէ ինչն էր ակնարկում կազակացորի ստարշինան՝ յունուարի 6-ի Յորդանանը յիշեցնելով:

Վարանդան ու Խաչնի ծայրագիւղերն այն հակայ պատճէշն էր, որին թրբական հորդաների ալիքները զարկուելով՝ փշուել էին մինչև այդ օրը: Այդ պատճէշը սահմանն էր կազմում Մուշանու տափարակի թուրք ազգաբնակութեան՝ Աղդամից սկսած մինչև կուր և Արաքս գետերը, որտեղ հարիւրաւոր թուրք գիւղերն են հաստատուած: Ամեն ձիգ, ամեն ջանք հարկաւոր էր գործ դնել, լինելիք յարձակումը յետ մղելու համար: Ռազմական տեսակէտից՝ ամենակարեւոր և վտանգաւոր կէտերը հէնց այս գիւղերն

էին, որոնց մասին յիշում էր տեղ հասած լուրը: Այդ գուռը փըշրելով՝ Ասկերանը մնում էր թուրքերի ձեռքին, իսկ այնուհետեւ Խաչն ու Վարանդան, ապա միւս գաւառներն ակներև աւերի մղձաւանջին ենթակայ պիտի լինէին: Ահա թէ ինչու յարձակման պատրաստութիւնների լուրն առնելուն պէս՝ այդ երեք գիւղերի իւրաքանչիւրից վաթսունական հոգի դերբերն ուղարկուեցին, որոնց իւրաքանչիւր տասնեակի վրայ պէտք է հսկէր մի տասնապետ: Եւ՝ թէ այդ տեսակ յուզիչ լուրեր շատ էինք լսել ու սուտ էին գուրս եկել, այնուամենայնիւ, ի նկատի ունենալով Ֆօն-Ազարովսկու նախագուշակութիւններն ու այն հանգամանքը, որ իսկապէս թուրքերը 6-ին կարող են յարձակում գործել, մտածելով, որ այդ օրը, իբրև մեծ տօն օր, հայերն անփոյթ հաւաքուած կը լինին եկեղեցի, իմաց տրուեց Խաչնի ինքնապաշտպանութեան ղեկավարներին ու Վարանդայի բոլոր գիւղերի խմբապետներին, որպէսզի պատրաստի, ձեռքի տակ ունենան որոշ քանակութեամբ զինուորներ, և առաջին իսկ պայմաննին՝ մօտիկ գտնուող խմբերը ցոյց տրուած գծերով իրար հասնեն, իոկ համեմատարար հեռու գտնուողներին՝ ուղարկել սուրհանդակներ: Այդ բոլոր կարգագրութիւններն անելուց գիրբերը պարտելուց, հրահանգներ տալուց յետոյ միայն պատասխանատու, ժողովրդի համար զողացող մարզիկ հանգիստ սրտով վերագարձան իրանց տեղերը: Նրանք ժամը 2-ին միայն շորերով պառկեցին մի քիչ ննջելու: Զարգուած, յոդնած, սառած... քունն իսկոյն վրայ հասաւ:

Յանկարծ... ժամը 6-ին ինչ-որ դղրդոց ցնցեց շըջակայրը. նրան հետեւեցին գիրբապահների՝ «հասէք, հա հասէք, աղդամակները: Կարծես թէ ոչ-որ այդ գիւղեր քուն չէր տեսել. ամենքը վայրկենապէս դուրս թռան տներից և դէպի գիրբերը վազեցին:

Ի՞նչ էր պատահել. իրականանմամբ էր արդեօք սպասուող յարձակումը... բայց ո՞ր կողմի, ո՞ր գիւղի վրան են յարձակուել... պահապաններին խօ չեն կոտորել... Մեծ աշալը ջութիւն էր հարկաւոր, որպէսզի թշնամին օգտւելով՝ ցոյցեր չսարքէ, հայերի ուժերը մի կողմ գրաւէ, ու յանկարծ խուժէ այս կամ այն գիւղի վրայ, որից յետոյ դիմազրելու հնար չէր լինի:

Մթութեան միջից, ահագին տարածութեան վրայ՝ հարիւրաւոր հրացանների փողերից փոքրիկ բոցեր էին բարձրանում, որին յաջորդում էին ականջ խլացնող թնդիւնները:

Կասկածելու ոչ մի հիմք չկար. թուրքերը յարձակուել էին: Հարկաւոր էր մի կերպ շղթան պահպանել, մինչև որ լուսանար, հակառակորդի քանակութիւնն ու գրաւած դիրքերը որոշուէին, որպէսզի ըստ այնմ էլ ձեռք առնուէին պաշտպանուելու միջոցներ: Երկու կողմերից էլ հրացանաձգութիւնը երբեմն ուժեղ երթեմն թոյլ՝ շարունակուեց, մինչև որ լուսացաւ և բացուեց մի սարսափ ազդող տեսարան:

Շելու թրքաբնակ գիւղից սկսած մինչև Բաղվանլարի գլուխը, տամնուերկու վերստ տարածութեան վրայ, զինուած ձիաւոր և հետեակ թուրքերը, թուով առնուազն վեց հազար հոգի, եկել լցուել էին: Ամրող դաշտավայրը ծածկուած էր նրանցով. ձիաւորներն անկանոն կերպով խոնուած՝ իրանց արագավազ ձիանքն էին թոցնում, հարթոցը կտրելով զանազան ուղղութեամբ: Երկու կառք էլ կային այդ ահագին բաղմութեան մէջ, և անդադար դէսու դէն էին շարժում. ըստ երեսյթին՝ այնտեղ նստողներն ընդհանուր հրամանատարներն էին, որովհետեւ այս կամ այն խմբին մօտենալով՝ կառքերից մէկն ու մէկը կանգ էր առնում, մի երկու րոպէ սպասում, և էլի շարժում. պարզ էր, որ հրահանգներ տալու համար էին կանգ առնում: Իսկ ներքե, հարթավայրի ծայրին, այգիների ամբողջ երկարութեամբ՝ շարուել, անշարժ մնացել էին բազմաթիւ ու, մեծ-մեծ կէտեր. լոյսը դեռ ուժեղ չէր ու նըրանց ինչ լինելը որոշել չէր լինում. բայց հեռագիտակը ցոյց տուաւ, որ գրանք սայլեր ու փուրգօններ էին, անշուշտ հայ գիւղերի թալանները ընոնել տանելու համար:

Վեց հազարամոց զինուած բանակի տպաւորութիւնը պատկառելի էր. ձիաւորների հպարտ-հպարտ խոյանալը, կառքերի անդադրում պտայտները, բազմաթիւ գրոշակներն ու ականջ խլացնող շեա-Ալիւ-ները միայն մի բան էին ասում, - որ ունինչ չի ինայուի, Վարանդայի բախտը պէտք է վճռուի: Բայց փորձուած աչքն խկոյն կարողանում էր նկատել, որ նրանց շարժման մէջ ուազ մական ոչ մի կանոնաւորութիւն չկայ. եթէ որոշ ծրագիր, հրահանգներ տրուել էլ են, ապա կուռզները չեն հետեւում նրանց, քայլ առ քայլ չեն մօտենում նպատակին և ամեն բան կապել են երեք հանգամանքների հետ, - պատահականութեան, իրանց թուական ճնշող գերազանցութեան և հիմնալի սպառազինութեան:

Բայց և այնպէս՝ թւում էր, որ Վարազարոյնը, Փիրջամալն

ու Նախիջևանիկը դիմագրել չպիտի կարողանան, և այդ օրը նըրանց վերջին օրն է:

Այդ երեք գիւղերի առաջ ցցուած է իւր վրայի մատուռով Զախմախ-Թափիան՝ մի այնպիսի գիրք, որի պինդ պահելը նշանակում էր երեք գիւղերի կեանքը փրկել: Եթէ թուրքերը տիրէին նրան, ապա այնտեղից նրանք ամենայն հեշտութեամբ կարող էին 800—1000 քայլի վրայ Փիրջամալի գիրքի զինուորներին խեղդած պահել, 1000—1200 քայլի վրայ Վարազարոյնինը և 1800—2200 քայլի վրայ՝ Նախիջևանիկի գիրքերինը. իսկ այնուհետև վստահութեամբ կարող էին ձորակն ի վեր բարձրանալ ու Վարազարոյնը գրաւել: Այդ միաւումը նկատելի էր նրանց մէջ, որովհետեւ մի ժամկեց յետոյ իրանց ուժերի ամենամեծ մասը չպրտեցին գէպի այնտեղ. ուրեմն ծանրութեան կենդրոնը Վարազարոյնը պէտք է լինէր, որի համար թուրքերը պէտք է աշխատէին Զախմախ-Թափիան խւել հայերից: Այստեղ 12 հոգուց բաղկացած պահակ կար, նրանք պիտի կարողանային արդեօք դիմագրել, մինչև որ զրսից օգնութիւն կը համէր. տեղական ուժերը շատ փոքրաթիւ էին տաս-տասնուերկու վերստի վրայ ճակատ պահելու համար: Զախմախ-Թափիան մնում էր իւր բախտին:

Եւ ահա թուրքերի մի ստուար խումբ, Վարազարոյնի գոմերի գիրքապահներին բշելով՝ կամաց-կամաց, շղթայած ընկած ժայռերի վրայից սողալով՝ սկսեցին գէպի գագաթը բարձրանալ: Պահակախումբը կուռում էր քաջաբար. չնայելով որ իրանց մի գնդակին երեք կողմից հարիւրաւոր գնդակներ էին պատասխանում, այնուամենայնիւ նրանք չէին վհատում, և մատուցից դուրս սողալով՝ բարերի տակից հրացանները պարպում էին գէպի մօտեցող թշնամին, յետոյ կուզէկուզ միւս բարերին վազում, այնտեղից էլ զարկում, մէկ էլ շուռ գալիս միւս կողմը, աշխատելով մինոյն ժամանակ հակառակորդի գաղտնի շարժումներն ի գերեւ հանել: Սոսկալի էր այդ 12 հոգու մրցումն գէպի իրանց յառաջացող թրքական մի զօրաբաժինը, որ իրանցից առնուազն՝ գոնէ հարիւր անգամ աւել կը լինէին: Դրսից օգնութիւն եկել էր, բայց շատ քիչ. նրանցից Զախմախ-Թափիցիներին բաժին հանել չէր կարելի. մինչդեռ աղերանց փամփուշները, պարզ է, որ սպառուելու վրայ պէտք է լինէին: Այդ միջոցին թուրքերի մի այլ խումբ ըլլի արևելեան դօշովն սկսեց վեր ելնել. աղերքը շփոթուեցին, էլ

Դիմագրելու հնար չկար. և երկու կըակի միջից, հազարաւոր գընդակների տարափի տակ, նրանք սկսեցին բլրի հիւսիս-արեւելեան փեշով վազէվազ ցած իջնել: Հարայ-հրոցով, ուրախական աղաղակներով թուրքերը վեր վազեցին, գրաւեցին բլուրն ու հրացաննին կախեցին փախչողների յետեկից. բայց բոլոր գնդակներն ապարդիւն անցան. տղերքը ողջ-առողջ, հեալով հասան Փիրջամամի գիրքերը: Երեք հարիւրաչափ թուրքեր Զախմախ-Թափան պահցին իրանց ձեռքին, իսկ մնացածը հասաւ դէպի Վարազարոյն գրոհող բազմութեանը:

Պայմանները փոխուեցին. այժմ՝ թուրքերն ունէին կոիւը յաջողութեամբ վերջացնելու երեք գրաւականներ. — Թուրական, գիրքերի և մթերքի անհամեմատ մեծ առաւելութիւն, և թէ նրանք որոշ սիստէմով մղէին յարձակումը, մի ժամում Վարազարոյն կը մտնէին:

✓ Կատաղի կոիւը տեսեց մինչև ժամը 10-ը. քսանուչորս հոգուց բազկացած խումբը հազիւ էր կարողանում հայերի արձակած փամփուշտները լցնել ու հասցնել. մի վարպետ իւր օգնականով, առանց շունչ առնելու՝ փչանող հրացաններն էր նորոգում ու հասցնում կուռող զինուորներին: Հակայարձակման մասին խօսք լինել չէր կարող. մի քանի խմբակներ արդէն եկել էին միւս գիւղերից. նրանց հրահանգուեց Վարազարոյնի արևելեան բլուրը պահել մինչև արեան վերջին կաթիլը: Բայց այդ գիւղի տակուն ընկած երկճիւղ ձորը թոյլ չէր տալիս թշնամուշարժումները նկատել ու խանգարել նրանց, որ հոծ բազմութեամբ միմեանց կոխոտելով՝ երկու ձորովն էլ բարձրանում էին դէպի Վարազարոյն: Նրանք մօտեցան և մի ահեղ «Եա-Ալի»-ով վրայ պրծան: Դիրքապահներից երկուսն ընկան, մի քանիսը վիրաւորուեցին, մնացածը թողեցին ձորի բերանի երկու դիրքերն ու գիւղը մտան.... Թուրքերը գիւղի առաջին տներից միայն հարիւր սաժէնի վրայ էին....

Ով որ վկայ է եղել այդ մահանութ վայրկեանին, այժմ էլ նա կը ցնցուի, եթէ այդ բոպէի դրութիւնը վերակենդանացնէ իւր յիշողութեան մէջ: Վարազարոյնի գոյութիւնը մի մազի վըրայ էր. ինչ մազի... ամեն մի վայրկեան ծխի վեր բարձրանալու ու սրախողին երախաների ու կանանց բառաչիւններն էին էին սպասւում:

Սարերի վրայից, այծեամների պէս թոչկոտելով՝ մարդիկ էին իջնում. դրանք օգնութեան հասնողներից էին. բայց նրանց ըսպասել չէր կարելի, դրութիւնը ճակատագրական, որհասական էր:

— Տղերք, ձեզ մատաղ, քան հոգի թռղ բոնի Խաչան-Տափը. — գոռաց պատասխանատուներից մէկը, աչքերն արիւնով լցուած, զրյնը թոցը ած, բրտինը մէջքից դուրս եղաւ:

Խաչան-Տափը Վարազարոյնի ձախ թեխն է կպած, որտեղից կարելի էր գիւղի մէջ ապաստանած կուռողներին նպաստելով՝ թուրքերի ներս խուժելը ժամանակաւորապէս կանգնեցնել:

Տղերքը վազեցին: Մէկն ընկաւ... մէկն էլ վիրաւորուեց... ահա մէկն էլ... մնացածներն էլի վազում են: Բայց յանկարծ կանգառան ու պառկեցին. այդ շարժումը նկատել էին Զախմախ-Թափայի-զլիխն թառած թուրքերը. Նրանց Մօսինների անթիւ համապարկերն էին, որ տղերանցը կանգնեցրին. սակայն պէտք էր, պէտք էր հասնել... և նրանք սկսեցին առաջ սողալ:

— Վայ, վայ, — գոռալով, այդ միջոցին Վարազարոյնեցի մի 19 տարեկան պատանի, աչքերը խելագարի նման պապղացնելով՝ ընկաւ Փիրջամալի նախագուռը կազմող դիրքը. Երեկի վիրաւուել էր: Բայց ոչ, նա վիրաւոր չէր արիւն չէր երեսում:

— Վայ—նորից գոռաց նա, — փամփռւշտ, փամփռւշտ... իմը վերջացել է: Ձեզ մատաղ, մի քանի փամփուշտ... գիւղն աւերեցին... և արտասուբը շուաց նրա երեսով:

— Էստեղ, Էստեղ,— կանչեցին նրան փամփուշտ մատակարարողները և տուին 75 հատանց մի լի փամփշտաման:

Պատանին վայրենի սոտիններով վրայ թուաւ, ճանկեց փամփուշտամանն ու սլացաւ դէպի Վարազարոյն:

— Այ շան որդիներ, այ ձեր հէրն անիծած, մւր էր փախչում... մէկ-մէկ կը կոտորեմ, — բղաւեց դէպի Վարազարոյն ընկած դիրքի խմբապետը Փիր-Զամալ վազող 10-12 զինուորներին:

— Փամփռւշտ, փամփուշտ բերելու ենք ուղարկուած, — կանչեցին նրանք ու նորից վազեցին:

Արդէն ամեն տեղ փամփշտի կարիք էր զգացւում. լցնողների խումբն աւելացնելու կարիք եղաւ:

Հէնց այդ վայրկեանին լեռներից սրարշաւ հասաւ օգնու-

թեան եկող երեսուն հոգուց բաղկացած թոռոցիկ ձիաւոր խըմբերից մէկը:

Տղերք, — վրայ տուաւ նրանց ընդառաջող՝ ընդհանուր զեկավարներից մէկը. — բաններնիս վատ է. թոէք նախիջևանիկի տակով, հասէք Զրմա-Խութ. խաչէնցիք երեի ձեզ կը պատահեն. արդէն եկել են և նրանց հրացանների ձայնը լսում է. միացէք նըրանց հետ, և, եթէ կարող էք, վրայ տուէք Շելլուին. իսկ եթէ հնար չլինի, մի մեծ ցոյց արէք, և այնպիսի ձեռվ, սր Վարազարոյնի տակից թուրքերի մի մասը դէպի ձեզ գրաւէք:

Թոռոցիկ խումբը սանձերը բաց թողեց և ձիանքը սլացան:

Իսկ Զախմախ-Թափան... չէ, թէկուղ տասնեակ դոհերի գընով՝ պէտք է այդ գիրքը յետ խլել թուրքերից. հակառակ դէպում, աւելի խոնճմութիւն կը լինէք գիւղերը գատարկել կին ու երեխաններից, և կոռող ուժերը գիւղերի մէջ կենդրոնացնելով՝ այնտեղից շարունակել դիմագրութիւնը. Դուրս եկան տասնումէկ կամաւորներ:

— Կամ կը մեռնենք, կամ Զախմախ-Թափան մերն է, — ասացին նրանք:

— Այ ես ձեր ճակատի մեռունին զուրբան զնամ. — կանչեց նրանց յետեից մի ծերունի. — գնացէք, ես էլ եմ գալիս. — և սկզեց սրան, նրան աղաչել, որ իրան մի հրացան տան...

Իրացէն վեհ էր: Տասնումէկ անձնուրացներ դէպի հաւանական կորուստ էին շտապում, իրանց արեան գնով երեք գիւղերի փրկութիւնը գնելու: Նրանք հասան բլրի ստորոտին. մի բոպէ կանգ առան, ապա սկսեցին միմեանցից մի քանի բայլ հեռաւորութեամբ՝ բլուրն ի վեր ելնել.

— Ճըռ՝ ու... — խլացուցիչ դղրգոցով որոտացին թուրքերի հրացանները:

Ուշադրութիւն գարձնող չկայ. տղերը արագացնում են վերելքը:

Ճըռ՝ ու... — վերեից կրկին թնդացին հրացանները:

Ելի ոչինչ. տղերքն անվիաս են, և բարերին կառչելով՝ ցատկուում են վեր:

Նկատելի էր, որ թուրքերը բոպէաչափ վարանեցին մի այդպիսի յանդգնութեան առաջ. բայց ուշաբերուելով՝ սկսեցին մի դժոխային կրակ տեղալ վեր սողացողների գլխին. սակայն, զար-

մանալի բան. նրանց գնդակները միշտ շեղ էին զնում, և կտրիճ-ները մի տեսակ ինքնամոռացութեան մէջ ընկածի պէս՝ բարձրանում էին ու բարձրանում: Ահա ելան... բլրի մի ծայրը նրանց ձեռքն է...

— Ուռուա, ուռուա, — թնդացին նրանց ուրախական ակաղակ-ները, և բարերի տակից հրացաններն 'ի նշան վեցըրին: Թուրքերից երկուսն ընկան:

Նորից համազարկ. մէկ էլ, մէկ էլ... և երկու ախոյեաններ մնացին ճակատ առ ճակատ կանգնած: Զայտը էր թողնել, որ այդ բարացման րոպէն անցնէր, թուրքերն սթափուէին և ցրուած շղթայով՝ մերոնց պատէին: Իսկուն երեսուն հոգի, բաժանուելով երեք տասնեակների, Փիրջամալի գիրքերից օգնութեան վագեցին, մի քանի անգամ ճանապարհին հրացան արձակելով, որպէսզի թուրքերը տեսնեն, որ հայերը հասնում են: Թշնամին տատանուում էր. մէկ էլ նրանց մէջ շարժում նկատուեց. առաջին շարքերը կամաց-կամաց յետ խաղալով, խառնուեցին քամակի շարքերին, սկզբում հանդարտութեամբ, ապա մեծ փութկոտութեամբ պատեցին իջնել դէպի տափարակում և ձորի միջ գտնուող թուրքերը՝ Վարազաբոյնի թալանին մասնակցերու:

Զախմախ-Թափան այժմ մի հրաշքով հայերի ձեռքին էր. այդ հերոսական գործը նոր հոգի փչեց բոլոր գծի վրայ եղող կոռուողներին, և նրանք զգացին, որ գետ կարող են պաշտպանուել:

Մինչ այս, մինչ այն, թուրքերը Նախիջևանիկի տակից մինչև Գիլաֆլուի ձախ անկիւնը տարածուելով՝ սկսեցին զրադշնել զղթան մի կերպ պահպանող հայերին, իսկ իրանց ամենաւանդուգն խմբերն առաջ քշելով՝ «Եա Հազրաթ-Աբոս, եա Ալի» ոգեսրիչ բացականչութիւններով վրայ վագեցին, Վարազաբոյնը դրաւելու, որ իրանցից հազիւ միայն 400 քայլի վրայ էր մնացել երկիւզը մոռացած՝ մահն անարգող քանաչափ երիտասարդներ, պլուած աչքերով, յուզմունքից ջղաձգաբար ցնցուող դիմաց և հերոս կը ըերենին դէմ տուին նրանց հազարաւոր զնդակների առաջ. Դա անձնագոնութեան գաղափարի ամենավսեմ թոփչքն էր... և փառք նրանց, նրանք չընկրկեցին, երբ իրանցից երկուսն արիւնաթաւալ՝ ձորը գլորուեցին... Նրանք կրակ դարձած զնդակներ էին աեղում և առաջ խաղում, ձեռնամերձ կոռու պատրաստուե-

լով: Միւս գիրքերից օգնութեան հասնել չէին կարող, որովհետեւ թշնամին իրանց յաջողութիւնից ոգնորուելով ու խրախուսուելով՝ առաջնորդների քաջալերութիւններից՝ յարձակումն ամեն կողմերի վրայ քաջութեամբ էին տանում, կամաց-կամաց տարածուած թեերը սեղմելով:

Երկնքից մանանայի սպասողի նման, գիւղացիք աշքները յառել էին սարերին, որտեղից հեռաւոր գիւղերում գտնուող օժանդակ խմբերը պէտք է հասնէին. ըովէն տարիների երկարութիւն ունէր. իսկ թուրքերը ճնշում էին ու ճնշում:

Յանկարծ... սար ու ձոր դղրդացին... աղմուկ, աղաղակ, ցաւի և ուրախութեան ձայներ խառնուեցին միմեանց...: Երկու հարիւր հոգուց բաղկացած թուոցիկ մարտիկների խումբն էր այդ, հասել էր, և գրաւել թշնամու ձախ թեն ու այն ձորի եզրը, որտեղից թուրքերն արդէն մի քանի քայլ էր մնում՝ գիւղը մըտնէին: Հէնց նոյնիսկ այդ վայրկեանին՝ Խաչէնի ու Վարանդայի թուոցիկների մի մասը միացած՝ կեղծ յարձակում գործեցին Շելլուի վրայ: Յետապահ թուրքերը, թուով երկու հազար, արշաւառոյր դէպի այնտեղ սլացան. թշնամու ոյժերը ջլատուեցին մեծ չափով: Յուսահատուածները հերոսացան, յոգնածները կայտառացան և նոր հասած թարմ ուժերի հետ թւե-թւեկ տուած՝ «կեցէ Դաշնակցութիւնը» գոռալով, մի աննկարագրելի հակայարձակում գործեցին: Թիւրքերը սարսափած, յետ-յետ խաղացին՝ «Եան-Ալլահ, սեան քիօմագ էլա»—կանչելով: Բայց որովհետեւ նրանք ահագին քանակութեամբ թափուել էին ձորի մէջ, ուստի նահանջը շատ անկանոն եղաւ, միմեանց կոխկոտում էին, մանաւանդ որ հայերի գնդակներն շտապեցնում էին նրանց փախուստը:

Եւ սկսուեց ջարդը: Զախմախ-Թափայի գլխին նստած, հետըզնետէ 37 հոգի գարձած խումբն այժմ լաւ առիթ ունէր ցոյց տալու, թէ ինչ աստիճանի լաւ հրացանաձիգներ են իրանք: Զորից փախչող թրբական խմբերը նրանց հրացանների ոերանն էին ընկնում, և արճիճը գործում էր:

Սկսուեց մի խայտառակ, համատարած փախուստ՝ բոլոր կէտերից: Հայերը ցանկացան հետամուտ լինել, բայց արգելուեց այն ևս բաւական էր, որ գիւղերն ազատուել էին այդ անեղ բանակի ձեռքն ընկնելուց:

Ժամը երկուսին կոփւը բոլորովին վերջացաւ. դաշտը մաքըրուեց, ասես այնտեղ չէր, որ բիչ առաջ ասեղ զցելու տեղ չկար: Ինքնապաշտպանութեան զինուորները յարձակման ենթարկուած երեք գիւղերում հանգստանում էին, իսկ այնտեղ, խարոյկների վրայ խորովածների շամփուրներն էին շուռ գալիս՝ օգնական եղբայրներին կշտացնելու համար:

*

*

Թուրքերն իրանց յարձակումը գիշերն էին պատրաստել, միանալով Պարսկաստանից անցած Շահ-Սելվաններին: Զախմախ Թափայի և Վարազարոյնի գոմիրի տակ թափթփուած մսի կը-տորները, հաւի ոսկորներն ու հացի փշըրնըները պարզ ցոյց էին տալիս, որ նրանք գիշերն էին հասել այդտեղ, հանգստացել, մի լաւ կշտացել, մտածելով՝ որ հետեւեալ օրը հաց ուտելու ժամանակ չպիտի ունենան: Նրանց ներկայութիւնը բոլորովին պատահածամբ էր բացուել: Զախմախ-Թափայի արևմտեան կրծքին՝ Վարազարոյնի գիրքապահները, ժամը մօտ 6-ին, մի հանաք են անում: Նրանցից մէկը բարձրանում է մօտակայ ժայռի գլուխը, և երեսը դարձնելով դէպի գաշտավայրի թրբական գիւղերը, սկսում բղաւել ու հայոյել թուրքերին. իսկ թուրքերը, որ նրանցից մի 100 քայլի վրայ էին գտնուում, տեսնելովոր իրանց այդտեղ լինելը յայտնի է հայերին, էլ աւելորդ է ծածկուել, սկսում են հրացանձգութիւնը, իսկ նրանց մի մասը թագստարանից դուրս վազելով՝ յարձակուում են այն գիրքի վրայ, որտեղ տղերքը ցրտին չը գիմանալով, մի քարի տակ կըակ էին արել ու միս խորովելու պատրաստութիւն էին տեսնում: Այդտեղից արդէն ընդհանրանում է կոխւը:

Այդ օրը Խաչէնի թուոցիկ խմբի ցոյց տուած օգնութիւնն էական էր. Շելլուի գլխին տեղի ունեցած ցոյցը փոխուել էր լուրջ կոսւե, որտեղ Խաչէնի և Վարանդայի երկու փոքրիկ թուոցիկ խմբերը քաջերին վայել գործ էին կատարել, զոհ տալով մի զինուորի, որ գեռ հոգին չփչած՝ թուրքերը մորթել էին, ապա կուրծքը պատուելով, ջիգեարը տարել, երկի ընծայաբերելու մի որեէ գաղուած մօր, կամ հօր: Բացի այդ, հայերն այդ օրը կորուստ էին տուել. Վարազարոյնից՝ 4 տղամարդ, 2 կին, 13 վիրաւոր, որոնցից 4-ը՝ կին. Փիրջամալից՝ 3 սպանուած, 4 վիրաւոր:

Միրաշալուից՝ 1 վիրաւոր. ընդամենը 10 սպանուած, 18 վիրաւոր, որոնց մեծ մասը կուռւմ չեն եղել և վիրաւորուել են գիւղի մէջ, պատահական գնդակներից։ Ընդհանրապէս՝ ամենակատաղի կորու վարողները, մի տարօրինակ բարեբախտութեամբ, չնչին վիաս էին ստացել։

Այդ կուռւմ հայ գիւղացին ցոյց տուաւ, որ վճռական ըռպէներում գիտէ մաքառել. ցոյց տուաւ իւր հոգու արիութիւնը։ Փիրջամալ գիւղացի մէկը կաղէկաղ գալիս էր ներքեփ դիրքից։

— Ի՞նչ է պատահել, — հարցըին նրան։

— Ոչինչ, — պատասխանեց նա, — վեր եմ ընկել, ուսու ցաւում է։

Վեր եմ ընկել... Մօսինի գնդակը նրա ազդորի ոսկորը ծակել, անցել էր. իսկ նա ժպտալով՝ «վեր եմ ընկել», ասում էր։ Մի ուրիշը դիրքում տեղն ու տեղն ընկել էր և վերջին շունչն էր քաշում. — քահանային կանչեցէք. — ձայն տուին գիւղացիք ամենայն պաղարիւնութեամբ, և նորից հրացանին դիմեցին։

Իսկ ի՞նչ եղաւ թալանի համար եկած թուրքերի անթիւ արարաներն ու ֆուրգօնները... Նրանք թալանի փոխարէն դիակներով բեռնաւորուած՝ վերադարձան տափարակի թրբանակ գիւղդերը։ Ազգակիցների դիակներն էին նրանց պատերազմական աւարը։ Նրանց գոների թիւը յայտնի չեղաւ. բայց սուտ չի լինի, եթէ ասենք, որ չափազանց մեծ պէտք է եղած լինի։

Զրօրհնէքն այդ օրը մոռացուեց. շրջակայ գիւղորայքում խաչը ոչ մի տեղ ջուրը չգցուեց։ Իրիկունը երբ բոլորը հաւարուել էին գիւղերի ծայրերում, 3 գիւղերի երիտասարդութիւնն ու եկուորները մտածեցին, գոնէ այժմ կատարել մեծ տօնը. բայց նվ կարող էր երաշխաւորել, որ մի ժամից յետոյ թուրքերը նորից չպիտի յարձակուեն։ Խաչը ջուրը ցցելու փոխարէն՝ նրանց առաջարկուեց արթուն լինել և գիրքերը հսկել ամենայն զգուշութեամբ։

300 հոգուց բաղկացած թուոցիկ խումբն ու երեք գիւղերի կոռւող ուժերը պահանջ դրին հէնց այդ իրիկուն յարձակուել, Շելլուն աւերել Շելլուն աւերել մի այգպիսի պողպատէ խմբով, ինարկե, հեղտութեամբ կարելի էր. բայց մինչև Երբ միմեանց աւերէինք, միմեանց արթուն թափէինք... բաւական չէր միթէ... չէր էլ բաւական է... պաշտպանուել միտյն։

Իսկ ի՞նչ էին մտածում թուրք աղալարները, խաներն ու բէկերը, որ անգիտակից մասսային առաջնորդելով՝ մզում էին դէպի թալան ու աւեր։ Նրանք մտածում էին, որ, դեռ չնաշուած զոհերը, այդ օրուայ կոփւը երկու կողմերի վրայ առնուազն 40,000 բնստեց; 40,000 բուրլի... որով կարելի էր մի սոված գաւառ կերակրել... եւ այդ միմիայն փամփուշտները, հաշուած այն ժամանակուայ գներով; Ի՞նչ էին մտածում նրանք, երբ իրանց առաջշարիչար թափուած դիակներին էին նայում. յանուն ինչի՞ էին նրանք զոհուել. յանուն գաղափարի... գաղափարի կոփւ չկար այնտեղ. յանուն թալանի, — ուրեմն արժանի էին, եթէ այգպէս է։

Իսկ կառավարութիւնը... ի՞նչ էր անում նա այդ միջոցին։ Մէկէ օրը Ֆօն-Ազարովսկին սպառնում էր բոլորին ջարդել, իրանց գործած յանցանքների համար. իսկ որտեղ էր նա այժմ, ուր գնացին Ասկերանն ու Խանաբաղը դողացնող թնդանօթները, Իշխանաւորներն այդ օրուայ յարձակման մասին տեղեկութիւն ունէին. անկարելի էր, որ չունենային. բայց մինչդեռ Վարազարոյնի մօտ կեանքի և մահու կոփւ էր մզուում, այդ իսկ բոպէին, մի քանի կեանքի վրայ վարանդայի Դալլու-Շէն փոքրիկ, թրքական Մալլը-Բէգլուից կուչ եկած գիւղն էին ոմբակոծում։

Էլ հաւատ կը մնար, թէ կառավարութիւնը հայ-թրքական ընդհարումների վերջանալը, խաղաղութիւն տիրելն է ցանկանում։

Զանազան քաղաքական խորամանկութիւններին անձանօթ գիւղացիները շարունակ միայն մի բան են կրկնում։

— Ախր էս ի՞նչ բան է. հայերն են մեղաւոր, թող հայերին բռնին, թնդանօթի բերնին կապեն. թուրքերն են մեղաւոր, թող նրանց կապեն. եթէ երկուսն էլ մեղաւոր են, թող երկուսին էլ պատժեն. թէ չէ խաղաղութիւն ասած բանը միը կեանքում էլ չնոք տեսնի։ Մի որեւէ յանցանքի համար մի կողմին պատժում են, իսկ միւնոյն յանցանքի համար միւս կողմին շոյում իրանց անտարբերութեամբ։

Եւ այդ տեսակ ինքնաբուղի փիլիսոփայութիւններով նրանք իրանց թերահաւատութիւնն էին ցոյց տալիս դէպի կառավարութիւնն ու քինախնդրութեամբ լցուում դէպի հարեւան թուրքերը, որ չեն ուզում իրերի գրութիւնն ըմբռնել։

V

Ա Յ Գ Ի Ն Ե Ր Ը

Վ Շելլու, Ղուրդլար, Ղասմլու, Սայբանլու, Շիշ-Բարալու և Մուղանլու թուրք գիւղերի մէջ է ընկած Վարազարոյնի և Նախիջեւանիկի այգիները, խառնուած վերև թուած գիւղերի այգիների հետ երբ օգոստոսի 8-ին Աղդամի հոչակաւոր գէպը պատահեց, հայերի ոտքը կտրուեց իրանց այգիներիից և կալուածքն երը մը նացին թուրքերի տրամադրութեան տակ:

Ո՞վ ո՞ր գիւղացի է, ո՞վ ո՞ր մի բոյս է տնկել, նրան լաւ յայտնի կը ի՞նչ է, թէ ի՞նչ արժէ իւրաքանչիւր մի ծառ, որ տէրը իւրձեռքով է տնկել, ջրել, խնամել և ուրախացել նրա իւրաքանչիւր մի նոր շիւղը ելնելուց. իսկ այստեղ շիւղեր չեն այլ չորս հարիւր գեսեատին, տասնեակ տարիներ մշակած, սիրած այգիներ, որ ամեն մի ծառի տակ աղբեւրի պէս աղի բրախնք էր վազել մինչև որ նա աճել, պտուղ տալու ընդունակ էր գարձել:

Իւրաքանչիւր պատրաստի, մշակած այգու գեսեատինը վարանդայում, միջին թուով, արժէ հազար բուրլի. և որովհետեւ այդ այգիները այժմ համարեած բոլորովին ոչնչացած են, ապա ուրիմն՝ Վարազարոյնն ու Նախիջեւանիկը կորցրել են չորս հարիւր հազար բուրլի: Սովորաբար, միջակ տարիներում, մի գեսեատին խաղողի այգուց գիւղացին ստանում էր տարեկան մօտաւորապէս 250 վեդրօ գինի. եթէ վեդրօն հաշուենք մի բուրլի, ապա կը տեսնենք, որ այդ երկու գիւղերը երկու տարուան ընթացքում զրկուել են 100,000 բուրլի եկամտից. զրա վրայ աւելացնենք և՛ այգիների գինը, կը դառնայ կէս միլիոնի մի պատկուի գումար, որով բարօր կեանք կը վարէին և վարում էին գիւղացիները:

Առաջին անգամ այդ այգիների մէջ եղած շէնքսերի ու ցանկապատի ծուխը վեր եղաւ 1905 թ. օգոստոսի 18-ին, և այնուհետև սկսուեց պարբերական հրդեհածգութիւններն ու ծառեր կարտելը. Գիւղացոց թթի ծուխը բարձրանում էր. աչքերը տնկած այգիների կրակին, վշտի տակ բթացած դէմքով, նայում էին ու... լոռւմ: Ի՞նչ կարող էին անել, ում դիմէին... Ի՞նչպէս

Օգոստոսի 24-ին բանաւոր գիմում եղաւ գեներալ Տակայ-շվելուն, իսկ սեպտեմբերի 7-ին առաջին գրաւոր գիմումը եղաւ հետևեալ պայմաններում:

Մի հարիւրակ կողակներով՝ Նախիջեւանիկ գիւղն էր գալիս, կարծեմ, զինուորական նաչալնիկը: Օրը մառախլապատ էր, այդպիսի օրերում ամեն բան կարելի էր սպասել. ուստի պահապանները գիւղերից էլ ներքեւ իջած՝ դաշտի բերնով շրջում էին, երբ ներքեւց յանկարծ մի շարք ձիւաւորներ են երեսում: Պահապաններից մէկը կարծելով, որ դրանք մշտապէս այդ կողմերում պտըրող թուրք խմբերից են, հրացան արձակելով՝ ազդանշան է տալիս: Բայց իսկոյն պարզում է նրա սխալը, և ամեն կողմից կանչում են, որ գիւղը հանգստանայ, եկողները կողակներ են, վտանգ չկայ:

Քառորդ ժամից յետոյ կողակներն եկան, մօտեցան գիւղին, բայց ներս չմտան. այլ տարածուելով՝ շրջապատեցին գիւղը չորս կողմերից, ու հրամայեցին, որ ոչ ոք դուրս չգնայ. Եւ այնուհետեւ գիւղը մտնողներին բաց էին թողնում, իսկ ենել ցանկացողներին՝ ոչ: Ի՞նչ էր պատահել, ի՞նչ էին ուղղում, դեռ ոչ ոք չգիտէր: Եկաւ և նաչալնիկը, կանչեց գիւղացիներին գիւղամէջ, և սպասնաց, որ եթէ մինչկ երեք օրը բոլոր վնասակար տարբերին՝ „կօմիտէներին“ չբռնեն ու յանձնեն, գիւղն էկզէկուցիայի կ'ենթարկուի: Գիւղացիք վերջապէս կառավարութեան ներկայացուցչի երես էին տեսնում, իրանց գարգերը կը պատմէին, խրաներ, խորհուրդներ կը լսէին, դարման կը խնդրէին, բայց... նրան էկզէկուցիայի մասին են խօսում:

Էկսօրից յետոյ, կողակներին ի մի հաւաքեցին. Նրանք գիւղը մտան, սրերը հանած՝ հաջող շների յետեկից պրծան, հաւերխափեցին, երեխաներ ու կանայք սարսափեցին, գինի-արագ պահանջեցին ու մի լաւ կարմբելով՝ սկսեցին ցինիկ ակնարկութիւններ անել կանանց: Միայն օֆիցէրին գանգատուելն ու նրա նըկատողութիւնը զսպեց չափ ու սահմանից դուրս եկող կողակներին:

Ահա այդպիսի պայմաններում էր, որ գիւղի ներկայացուցիչները գլուխ տալով, փափախնին վերցրած մօտեցան, և իշխները գլուխ տալով, փափախնին վերցրած մօտեցան:

րանց խնդիրը տուին այգիների մասին: Նաշալնիկը նայեց խնդրագրին, ծալեց ու տուաւ իւր թուրք թարգմանչին:

— Իուք միշտ կարող էք գնալ ձեր այգիները. — ասաց նա:

— Ի՞նչպէս, պարոն նաշալնիկ, — պատասխանեց ոռուսիրէն իւմացող մէկը. — իսկի մեր տներում ապահովութիւն չկայ, շարունակ գնդակների, շարունակ յարձակման ենք սպասում. ուր մընաց թէ՝ այգիներում, այն ևս շրջապատուած թուրքերով:

— Թուրքերը ոչ մի բանով ձեզ չեն վիճասի, եթէ դուք հանդարտ մնաք, և նրանց հանգիստ թողնէք, — պնդեց նաշալնիկը:

Նա գեռ ասելիքը չէր վերջացրել, որ Վարազարոյնի այգիներից մէկի ցանկապատր բոցավառուեց:

— Ահա, ահա, — ուրախացած բացականչեցին գիւղացիք, որ իշխանաւորի առաջ իրանց ասածը ճշտում է. — ահա թուրքերը մի այգի ևս վառեցին:

Նաշալնիկը երեսը դարձեց ներքեւ, մի քիչ նայեց, ապա դառնալով գիւղացիներին, շեշտեց.

— Ոչ, սուտ էք ասում. այն թուրքերին է, և դուք էք վառել:

Եւ այդ եղաւ անդրանիկ «որոշենք»-ի արդիւնքը...:

Այնուհետև սկսուեցին հեռագրերի ու խնդրագրերի մի համար, ուղղած բոլոր իշխանաւորներին, պրիստափց սկսած՝ մինչև կովկասի փոխարքան: Այդ անվերջ խնդրագրերի, աղերսանքների վերջն ի՞նչ ստացուեց... շէն ու մշակուած այգիների փոխարէն՝ մի մարրած տափարակ...

Եւ այժմ աղքատատցած, սոված գիւղացին ինքն իրան հարց է տալիս. — էլ ինչու է կառավարութիւնն ասում, թէ ձեզ պահում եմ...

* *

Աւդալ-Գիլաֆլուն ամբողջապէս թաղուած էք հրաշալի այգիների մէջ: Այդ այգիները մի մի հղեմական պարտէղներ էին, ուր ջրերը կարկաչելով հօսում են, և որտեղ կարող ես ամեն տեսակ անուշ, քաղցրահամ մրգեղներ գտնել. — խաղող, թութ, թուզ, հիանալի, անուշահոտ, միծ-միծ խրձորներ, տանձ, ընկոյզ, ծիրան, գեղձ, կեռաս, «գեավալ», և այլն և այլն: Կարելի է երեւակայել, թէ ինչ հոգիկան հրճուածը էք զգում տէրը, երբ կա-

նաչ խոտի վրայ, ծառի թանձը շուաքում հստած, կողքին սամավարն էր եռում, որ թուրքի ամենասիրելի զուարճութիւնն է, — իսկ հիւրերը կապերտի վրայ ընկողմանած՝ բնութեան այդ շուայլ տուրքն էին վայելում:

Սեպտեմբերի 6-ի արիւնահեղ կոուից յետոյ, երբ Աւգալ-Գիլաֆլուն աւերուեցին, բնակիչները ցիրուցան եղած, Բաղվան-լարի գլխին էին վրաններ սարքել, և այնտեղ իրանց խղճալի դարձած գոյութիւնը բարչ տալիս: Վրաններից մինչև այգինները 5-6 վերստ է ընդամենը. բայց սարսափը, սարսափը թոյլ չէր տալիս աչքի առաջ տարածուած, իրանց գուրգուրած այգիներին այցելութեան գնալու: Այգիներն անտէր-անտիրական մնացին, և սկսուեց «ակնընդականը». Հսկայ ծառերը, որ տամնեակ տարիներով տիրոջ բարօրութեանն էին ծառայել, ձոնչալով՝ տապալում էին կացնի հարուածների տակ. պտղատու տունկերն իրանց պտուղներից մերկանալուց յետոյ, մերկանում էին և՛ ճիւղերից, ցանկապատերը կրակը լափեց, և երեկուայ գրախտը՝ այսօր աւերածութեան մի նմուշ է ներկայացնում իրանով. միայն այգիների մի մասը մնացին աղատ աւերող ձեռքերից նոյն չափով՝ ինչ չափով որ Նախիջեանիկ-Վարազարոյնինը մնացին: Թէ որքան հարուստ են եղել Աւտալ-Գիլաֆլուն իրանց մրգեղների այգիներով, գըրան ապացոյց, որ այս 1906 թուին մնակ «գեավալի» այնտերան պահուածն՝ 8,000 բեռը, իսկ տանձը, խնձորն ու ընկոյզը սպառուելու նշոյներ չէին ցոյց տալիս:

Իսկ Գիլաֆլուեցիք. միթէ նրանք դիմումներ չէին անում... ի՞նչպէս չէ. այն էլ՝ շատ անգամ, գուցէ հայերից էլ շատ: Պրիստան էլ եկաւ, նայեց, օֆիցիւներն էլ իրանց կողակիներով, նաշանիկն էլ, ուրիշ զանազան պաշտօնեաներ էլ, նոյնինքն Տակայշվիլին, Աղդամում մի բանի օր մնալուց, հիւրասիրուելուց յետոյ գնաց, նայեց Գիլաֆլուն, իսկ վերջը... հրաշալի այգիների տեղ՝ ճղակոտոր ծառեր, ամայի դաշտեր....:

Պարզ էր, որ կառավարութիւնը «ժամանակ» և «միջոցներ» չունէր քանզուեղ գիւղացիներին օգնութեան հասնելու... թէ արնատեսական ինչպիսի ճգնածամի հասան հայ և թուրք հարևանները, դրան թողղ վկայ լինեն և՛ բոլոր դժբախտութիւնների վրայ աւելացած կարկուտը, որ սրբեց-տարաւ ցորնի և գարու արտերը:

VI

ՄԵՌՆՈՂ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Հայ-թրբաքան արիւնահեղ ընդհարումն ինչով է հարուստ, եթէ ոչ՝ անթիւ, անհամար եղեռնական մահերով ու թափուած մեծաքանակ արիւնով։ Ընդերկեայ ցուրտ աշխարհին այս վերջին երկու տարիներս անժամանակ հիւրբնկալեցին և՝ հազարաւոր նոր ընակիչներ, որոնց կմախբները կամ գնդակների հարուածներով են զարգարուած, կամ դաշոյնների։ Նրանց մէջ կան ծծկեր անմեղ երեխաներ ու մատաղ աղջիկներ, ջլուտ բազուկներով երիտասարդներ ու սպիտակամօրուս ծերունիներ, որոնց յանցանքը միայն այս կամ այն ազգութեան պատկանելն է եղել. և եթէ ըորդի անունները ցուցակագրուէին, ապա կը կաղմուէր մարտիւրոսագրութեան մի զարնուրելի հատոր, որից միայն արիւն, արիւն կը ծորար։

Եւ մի է մեղաւորը այդ ծովացած, արեան. միթէ Բագուի փողոցներում սպանուած մի որեէ Բաբայել, ինչպէս տքնում են հաստատել շատերը. այդ հաստատման տակ թող ապագան իւր ստորագրութիւնը դնէ, եթէ ճիշտ է. իսկ ես անթիւ մահերից կը վերցնեմ այժմ միայն երկուսը, ցոյց տալու համար, թէ երկու կողմերն էլ ինչպիսի տղամարդիկ են շպրտել յաւետենականութեան դիրկը։ Դրանք հոչակաւոր, «մեծանձն» մարդիկ չեն թէն, բայց մեծ են իրանց մահով։

Մէկը՝ Աշոտն է,

Մի հասարակ գիւղացի՝ Վարանդայի գիւղերից, հազիւ գրագէտ, բայց օժտուած բնութիւնից խօսելու ձիրքով և ըմբռնողութեան մնձ կորովով. պարզասիրտ, գիւղանգիտական խորամանկ միջոցներից փախչող։ Նա բոլորովին հասկացողութիւն չունէր, թէ երկրագունդն արեգակից քանի անգամ էր փոքր չգիտէր, թէ պլիսաւոր Միջօրէականը ո՞րտեղով է անցնում. չգիտէր, թէ Մարքսն ինչ է բարողել, Դարվինն՝ ինչ. բայց մի բան շատ լաւ գիտէր. —որ հայ-թրբական ընդհարումներից երկու ազգերի տունը պիտի բանդուի, որ հայերը թուրքերին, կամ թուրքերը հայերին «յաղթելուց» երկուսն էլ պիտի յաղթուեն յօպող տիրող ցան-

կութիւնների, և որ ամեն ջանք, ամեն հնարաւոր միջոցներ պէտք է գործ դնել՝ խայտառակութիւնների առաջն առնելու։

Եւ նա հաշտութեան թեւուր գաղափարներով դիմուած, մանոււմ էր թուրք Դիլազարդան, Դաջար, և այլ գիւղեր, եռման հասած ոգեստութեամբ խօսում ժամերով, վիճում, քարոզում, մի զարմանալի վարպետութեամբ ապացուցում պրօվակացիայի ներկայութիւնն ու ձգտումները, տիրող կարգերի խեղդող յատկութիւնները մատնանշում։ Նա երբէք չոգնեց. այդ զաղափարով մոլուած մարդը, այդ զաղափարի «գերվիշը» իւր գծած ինքնուրոյն ուղին ունէր, որով նա քայլում էր, չճանաչուած, չմեծարուած, որին սակայն նա չէր էլ ձգտում։ Թուրքերը նրան սիրեցին, իրանց դարգերը նրան հաւատացին, և սրտաբուղիս յարդանքներով վարձատրեցին «Աշոտ-բէկին»։ մի բէկ, որի ոտներին մինչև վերջ կօշիկներն անծանօթ մնացին. տրեխներ... և եթէ կօշիկներ լինէին նրանց տեղ, գուցէ սապ չգային։

Դարաբաղի ամեն անկիւններում վասողը ծիեց. ինչ կարող էին անել մի, կամ մի քանի հայ ու թուրք Աշոտներ մի կոուի ժամանակ, երբ մարդիկ ահազին տարածութեան վրայ՝ միմեանց ոչնչացնելու հիւանդութեամբ էին վարակուած. էլ ոչ մի բժիշկ կարող էւ ճակատագրի մի տաօրինակ հանաքով՝ Աշոտնել չէր կարող. Եւ ճակատագրի մի տաօրինակ հանաքով՝ Աշոտը հրացանը ձեռքին, ինքնապաշտպանութեան խմբերից մէկի գլուխն անցած, դուրս է եկել այն թուրքերի առաջ, որոնց մէջ նու հաշտութեան մասին էր աղաղակել։

Կուիը տաք էր, երկարատև. հայերը կարողացել էին թուրքերին յետ մղելով՝ մտնել Դաջարն ու վառել. բայց օգնութեան են հասնում բազմաթիւ թուրք խմբեր, և հայերը նահանջում են, գործը վերջացած համարելով։ Սակայն թուրքերն իրանց «յաղթուեն» էժան նստացնել չեն ցանկանում ու արագութեամբ յառաջանում են։ Այստեղ, այստեղ շատանում է ընկնող հայերի թիւը. հարկաւոր է նահանջն ապահովելու եւ Աշոտը մեն-մենակ կանգնում է արշաւող թուրքերի առաջ։ Ճարպիկութեամբ արձակած գնդակները թուրքերին մի առ ժամանակ կանգնեցնում են. նահանջի մի թեր կանոնաւորում է. բայց Աշոտը դուրս գալ էլ չէր կարող. նրան շրջապատել են, իսկ ինքը կուուելու այլ ևս միջոց կարող. փամփուշները վերջացել են... նա բռնում է հրացանի ծայրից. փամփուշները զարպելով քարերին. հրացանը ժայրից, և ուժեղ թափով՝ զարկում քարերին. հրացանը փշրւում

Է Կ անպէտք դառնուում թշնամու համար: Հենց այդ բոպէին թուր քերի մի գնդակ գալիս, ցրում է Աղոտի ճակատը. և նա, փշը- րուած ճակատով՝ ընկաւ իւր փշրուած հրացանի կոսորին:

＊

Միւսը՝ Ռամուղառեցի Ալէքսակը-բէկն Է:

Մռաւէի սառնորակ աղբիւրների վրայ մնուած ու մհծացած
մէկն էր նա: Իւր ոչխարների ու տաւարների հետ միանդամ Սար-
սեանգով Մռաւէի մարմանդ արօտները ենելը նրա համար աւելի
թանգ արժէին, քան քաղաքների բոլոր ոսկիներն ու արծաթը:
Մանկութիւնից էր նա սովորել Մռաւէին ու սիրել նրան: Քանի-
քանի անգամ էր նա այդ անտառապատ լեռան կարկաչուն աղ-
բիւրների գլխին նստել, քարոտ ծերպերից այծեամներ ցած բե-
րել, ցողազարդ կանաչով ման եկել: Այստեղ, աղքատիկ վրանի
առաջ նա շատ անգամ էր ոչխարներ մորթել, սամօվարը դրել և
թուրքերի գերազոյն բէֆն արել. — աշխարհի կեանքը գառնացնող
վշտերին անծանօթ, առողջ ու անհոգ, սարերի լանջերում «քեա-
բարն» ու «չայն» ում կը տան: Տամնեակ երկար տարիներ նա այդ-
պէս էր վայելել կեանքը:

Բայց պայմանները փոխուեցին. չար ողբն իւր սկամած թե-
ւերն այդ կողմիւրում ևս տարածեց, արիւն մազելու համար: Ա-
ւերումից Ալէքսէքը բէկի հայրենի գիւղն, Ռւմուղտուն, շատ մար-
դիկ գիտապաստ ընկան, իսկ ինքը, Ալէքսէքը բէկն այդ միջոցնե-
րում գերի ընկաւ հայերի ձեռքը: Բէկը տեսել էր, թէ ինչպէս կո-
տորուեցին իւր ապգակիցները. սա տեսել էլ էր, թէ ինչպէս էին
թուրքերն իրանց ձեռքն ընկած հայ գերիներին կոտորել... այժմ
ինքը թուրք էր՝ գերի ընկած հայերի ձեռքը և զգում էր, որ փըր-
կութիւն չկայ:

Իսկ այնտեղ, իւր դէմ ու դէմ, գեղածիծաղ Մռաւն է ցցուել,
թուխ անտառներով պճնուած:

Եւ բէկը դարձաւ հայերէն.

—Ինձ բաց չէք թողնելու:

—Ռ'չ, —եղաւ պատասխանը:

— Դիտեմ, բայց նամարդ մի լինիք, թողէք վերջին ա-
ղօթս անելու:

—կարու իս:

Մահուան շէմքում կանգնած, նա չյիշեց իւր կողջն ու երեսաներին, որոնք երկու բռպէից յետոյ որբ պէտք է մնային. նա հոգու փրկութիւն չհայցեց չսկաց իւր աւերուած ծննդենիթը. նա հոգու փրկութիւն չհայցեց մարզարէներից, և նա ստորանալով՝ չուզեց ազատութիւն, կեանքի բաշխումն աղերսել թշնամիներից, մօտալուտ մահից սարսափած՝ նա չարտասուեց, չդողաց. այլ գունաթափ երեսը դարձնելով Մը-սաւին՝ կանչեց անձկութեամբ.

— է՞յ Մոռվ, Մոռվ... Էյ իմ պաշտած, սիրած Մոռվ... ամեն-
տարի քո ուխտաւորդ եմ եղել, Մոռվ. ամեն տարի քեզ հինգ մա-
տադ եմ նույիրել, Մոռվ... Էլ չեմ տեսնի քո կանաչ եայլաղներդ,
Էլ քո ծաղկիներով զարդարուած, սառն աղբիւրների ջրերով ե-
րեսս չեմ լուանայ, Էլ Սարսեանգը չեմ բարձրանայ՝ քո աննման
հովիտներում վրանս վեր թողելու... Էյ Մոռվ, Մոռվ... շատ քե-
ֆեր եմ քաշել քո դօշերում, շատ քաղցր, երջանիկ օրեր եմ անց
կացրել քո ծոցերում... մօր տեղ մայր, հօր տեղ հայր ես եղել ինձ
համար, Մոռվ... հալալ արա ինձ տուածդ, և ես էն կեանքում էլ
քեզ չեմ մոռանայ, այ իմ սրտիս սիրած, իմ ազիզ Մոռվ... մնան
բարով...

Նա վերջացրեց իւր «ազօթքը». բնութեան զաւակը, սարերի որդին, սիրահարուած բանաստեղծի նման՝ իւր վերջին երգն էր նուիրում սիրած լիռներին: Իսկ այնտեղ... արդէն հրացանն էին մեռ քաշում:

VII

g z y t s n h θ h k v

իշտահանքներ ունեցաւ ընդհալումը:

Տասնումեկի ամսուայ երկու սպառազինուած բանակների ընդ-
հարումները ինչ հետևանքներ կունենան, եթ առևտուըը կանգ-
առնի, դաշտերը չերկուեն, հաղորդակցութեան ճանապարհները
փակուեն և մէջտեղ միայն կրակն ու վառօդը, վրէժինգրու-

թիւնն ու փոխադարձ անվստահութիւնը տիրէ: եթէ խնդիրը մի փոքրիկ շրջանի, մի որևէ գաւառի վերաբերէր, էլի կարելի էր ցաւին զարման տանել. բայց երբ խնդիրն ամրող նահանգների էր վերաբերում, այդաեղ ի՞նչ դարման:

Ռւժասպառ եղաւ ժողովուրդը. նա արիւն էր ծորում, բայց ոչ ուշը չդարձրեց. նա արտասուք էր թափում, և ոչ ոք չաշխատեց նրա արտասուքը սրբել: Բողոքները մնացին բողոք, գանգատները՝ գանգատ. յանցաւորները չպատճուեցին, աւազակները կախաղանի չարժանացան և հաւատն անսահման պակասեց դէպի կառավարութիւնը:

Յոզնած, արիւնաքամ ժողովուրդն էլ հաւատ չէր ընծայում զանազան «խիստ», «անողորմ» հրամաններին, թէ մեղաւոր կողմը քարութանդ կ'անուի կառավարութեան ձեռքով. որովհետև իւրաքանչիւր այդպիսի հրաման, շատ անգամ հէնց նոյնիսկ հետեւալ օը հերքում էր գործնականօրէն: էլ ստիպուած թափօրներ կատարելն ու համբոյընները հմայք չունէին, և մարդիկ դառնապէս ժպառում էին այդ կատակերգութիւնների վրայ: Վարանդայի ժողովուրդն արդէն մի անգամ, Սեպտեմբերի 9-ին, տեսել էր այդ յուղայական համբոյընները...: Սակայն վերջապէս հարկաւոր էր, հարկաւոր էր վերջ դնել արիւնհեղութիւններին ու աւերածութիւններին: Եւ հազար ու մի միջոցներ էին մտածում, հաշտութիւնը, նախկին անձկալի հաշտութիւնը վերականգնելու:

Կարծես արդ փափագին արձագանք տալու և իրակործելու համար, այդ օրերը Գիլաֆլուի աւերակներից անցնելով Նախիջևանիկ մտաւ իշխան Վաչսաձէն, Շուշուայ զաւառապետի առաջին օգնականը: Ժողովուրդը դողում էր, և արդէն տուղանքների ու «շներ հալածելու» մասին էր մտածում. բայց զաւառապետի օգնականը իշխանաւորի արհամարհուտ վերաբերումնը ցոյց չտուաւ, խօսեց ժպիտը երեսին: Ժողովուրդը սիրտ առաւ, իւր ցաւերը պատմեց թարգմանի միջոցով և խաղաղութեան վերականգնումն ու կառավարչական արդարադատութիւն խնդիրց:

— Ես դրա համար էլ եկել եմ ու վճռել՝ անպայման խաղաղութիւն հաստատել—ասաց նա. — միայն, որքան էլ ես բարի ցան. կութիւններ ունենամ, չեմ կարող կեանքի մէջ մտցնել, եթէ ժողովուրդն ընդառաջ չգայ ինձ:

— Մենք ձեր ծառան ենք խաղաղութեան գործում, — միաբերան կանչեցին գիւղացիք:

— Թուրքերի հետ էլ խօսել եմ. նրանք մեծ տրամադրութիւն ունին հաշտուելու: Ես այժմ գնում եմ Աղդամ. այսուեղ նորից կը խօսեմ թուրքերի հետ, վաղը չէ, միւս օրն այստեղ կը լինեմ, տեղ կը նշանակենք ձեր. և թուրք ժողովրդի ժողովուելու համար, կը հաւաքուէր, և երբ ժողովուրդն իսկապէս հաշտուի, էլ միւս տարբերը հեշտութեամբ խանգարել չեն կարող:

Ճիշտ որ, երկու օրից յետոյ եկաւ իշխանը: Նրան ներկայացան ինքնապաշտպանութեան երկու ներկայացուցիչներ, ամբողջ 3 ժամ տեսեց խօսակցութիւնը, որի ժամանակ յայտնուեց, որ թուրքերը պայմաններ են մշակել ինչպէս Շուշում, նոյնպէս և Աղդամում: Վերջնական ժամադրութիւն նշանակեց գեկտեմբերի 12-ը. այդ օրը նա պէտք է զար մի քանի թուրք ազգեցիկ անձնաւորութեանց հետ:

Դեկտեմբերի 12-ին եկաւ իշխանը. Վահնաձէն, սակայն առանց թուրքերի, ընկեր ունենալով մի կազմի օֆիցիր ու մի քանի ստրաժնիկներ միայն: Թուրքերի բացակայութիւնը նա բացատըրեց, որ զեռ մարդիկ չին ընտրել, բայց մի քանի օրից նրանք իրանց բէկերով ու խաներով կը հաւաքուեն Շելլուի մօտ գտնուող Նախիջևանիկեցոց այգիները, որտեղ պէտք է հաւաքուեն և հայերը: Խնդիրնապաշտպանութեան երկու ղեկավարներն առարկում են, որ ընտրած տեղը անաջող է, կըքերը դեռ չեն հանգստացած, հայերը երկիւղ կը կրեն այստեղ իշխանը. աւելի լաւ է, թնդ թուրքերն էլ, հայերն էլ հաւաքուեն Ասկերանից ներքե գտնուող կողակների պոստը, կամ, թիչ ներքե. և թուրքերի կողմից գան ոչ թէ բէկերն ու խաները, այլ ինքը՝ ժողովուրդը: Վահնաձէն հաւանութիւն տուաւ և խոստացաւ այդպէս էլ կարգադրել:

Ի նկատի ունենալով, որ իշխան Վահնաձէի բոլոր գործերում որոշ չափով անկեղծութիւն և անաշառութիւն էր նկատում, որ ներկայ հաշտութիւնը կարող է, գուցէ, իսկապէս իրականանալ, քանի որ Ասկերանը ճնշում է թուրքերին և նրանք մեծամեծ վեաներ են ունենում անձնական և նիւթական, որ ձմեռը մտնում է իւր խիստ շրջանն ու վեցամսեայ հանգստութիւնը կարող է սովորական գառնալ, եթէ այդ ժամանակամիջոցում երկուստեք դադարեն կոտորածները, ուստի երկու ղեկավարները

ցանկալի հաշտութեան հեռանկարով առգործուած՝ հաշտութիւնը մօտաւորապէս արմատօրէն դարձնելու համար՝ պայմաններ են գնում, որպէսզի իշխանը խօսէ թուրքերին և նրանք միջոց ունենան հայերի պայմանների մասին խորհելու:

Ա). Քանի որ փոխադրութեան միջոցներն ու հաղորդակցութեան միակ ճանապարհը թուրքերի ձեռքին է, քանի որ Շուշուայ հայերը երկու անգամ շատ են, քան թուրքերը, ուստի բոլոր ըեւ ըած անհրաժեշտ կենսական մթերքների երկու երրորդականը հայերի համար պէտք է լինի, իսկ մէկ երրորդականը՝ թուրքերի Այս պայմանը նրա համար է, որ հայերի մէջ կասկած չմնայ, թէ իրանց հարեւանները մթերքներով լցնում են ամբարները, ապագայում հայերին սոված թողնելու համար: Եւ բոլոր փուրգօնները խուզարկութեան պէտք է ենթարկուին Ասկերանում՝ հայերից և թուրքերից կազմուած մի յանձնախմբով:

Այդ մասին ոչ ձեր, ոչ թուրքերի կողմից ոչ մի պայման ընդունել չի կարելի, —ընդհատեց Վաշնաձէն. —այն բոլոր ապրանքները, որ կ'ուղարկուեն ուրիշ քաղաքներից Եւլախ-Շուշի, պէտք է տեղ հասցնուին առանց նայելու, թէ՝ որն ունի է: Ես լիազօր եմ փոխադրութիւնը կարգադրելու գործում:

Եւ նա հանեց գեկտմբերի 4 թուագրով, մէկը գաւառապետ Ֆրէյլիխի, միւսը՝ գեներալ նահանգապետ Ֆլէյշերի ստորագրութեամբ: Ֆրէյլիխն ի միջի այլոց գրում էր. —«Շուշուայ կարաւանի դուրս գալու մասին Զեղ՝ առանձնապէս կը հաղորդագրուի, իսկ Եւլախից գուրս գալու մասին՝ հեռագրով հաղորդակցեցէք Զիվանշիրի գաւառապետի հետ»: Իսկ Ֆլէյշերը հեռագրում էր, որ ուղարկեց արդէն երկու հարիւրակ Սե-ծովեան գնդից, մի էսկազը գրագունների և արտիլերիայի հետ դէպի Աղդամ, Եւլախից նուշի մթերքների անարգել փոխադրութեան համար:

— Տեսնում էք, որ այդ մասին պայման առաջարկելն աւելորդ է, —ասաց Վաշնաձէն, թղթերի ընթերցումից յետոյ:

Բ. Քանի որ Շուշին է ծայրերին արձուգանք և ուղղութիւն տուողը, ուստի քանդել թէ թրքական և թէ հայկական դիրքերը, որտեղ որ կան:

— Այդ արդէն Շուշուն է վերաբերում. այստեղ խօսում են

հաշտութեան մասին և հաւանական է, որ այդպէս վարուեն, — ասաց իշխանը:

Գ. Գարնանը քոչուորները սար պիտի ելնեն. գրութիւնը կարող է վտանգաւոր դառնալ, եթէ միջոցներ չմշակուեն քոչն անցնելուց հանդիսա մնալ և արտերը չարածացնել: Ուշագրութիւն դարձնել, որպէսզի կողմակի, բոչ հետ կապ չունեցող, զինուած գարձնել, որպէսզի կողմակի, բոչ հետ կապ չունեցող, զինուած ուժեր սար չբարձրանան:

— Դա ամենահրատապ խնդիրն է, որի մասին կը խօսուի ներկայացուցիչների հետ:

Դ. Բաց թողնել բոլոր հայ գերիներին, փոխանակելով թուրք գերիներով, եթէ կան:

Ե. Թուրք բանակցող ներկայացուցիչների մէջ լինին երկու հոգի իրանց սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնից, որ պէսզի հայերը հաւատ ընծայեն բանակցութեան անկեղծութեանը: Այս պայմանը կարեոր է նրանով, որ թուրք սօցիալ-դեմօկրատները աւելի լայն և ժողովրդասէր հայեացքներ կունենան: Իսկ եթէ ներկայացութիւնը չունեցաւ ուժեղ ներկայացուցիչներ, այն թուրք կուսակցութիւնը չունեցաւ ուժեղ միջից կրթուած, լուսամանակ բանակցութեան գան ժողովրդի միջից կրթուած, լուսամիտ մարդիկ, սակայն անպայման ոչ-պօլիցիական, ոչ աւազակ և ոչ նրա ընկերը եղած երբ և իցէ:

— Լաւ է, —վրայ բերաւ իշխանը, — միայն ի նկատի ունեցէք, որ թուրք սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը եթէ զոյութիւն էլ ունի, ժողովրդականութիւն չի վայելում, և հաշտութեան խնդրում գեր խաղաղ չի կարող:

Զ. Քանի որ վիճակագրութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ թուրքերն աւազակային գործերում բնչ ահազին տոկոս են կազմում, ուստի երաշխաւորութիւն տան, որ ոչ մի միջոց չեն ինայի աւազակութիւնը խեղդելու գործում, որ և կը խստանան կատարել հայերը, հայ աւազակների վերաբերմամբ:

Է. Հայերը երաշխաւոր են թուրք ճանապարհորդների և նըրանց ապրանքների ապահովութիւնը հայկական մասում, իսկ թուրքերը՝ հայերի և նրանց ապահովութիւնը՝ թրքական մասում:

Եւ առ այժմ՝ Ը. Դադարեցնեն այն վիրաւորական վերաբերմանը, որ թուրքերը միշտ տածում են դէպի հայ ճանապարհորդներն Աղդամում, Ղարբանդ, Բարդա և այլն:

Ընթերցումը վերջացնելուց յետոյ, իշխանն ընդհանրապէս

իւր գոհանակութիւնը յայտնեց։ Խօսակցութիւնն այնուհետև բաւական երկար շարունակուեց և սիրալիր, ընտանեկան զրոյցների բնաւորութիւն էր կրում։ Գիւղացիք պատկառանքով, հեռուցհեռու նայում էին «կնեազին» և միմեանց ականջի փսփսում։ — Էս մարդը լաւ մարդ է երևում։

Վաշնաձէն ճանապարհուեց Աղդամ, վերջնական ժամանակ դնելով ամսի 17-ը։

Հայերն անհամբեր կերպով սպասում էին դեկտեմբերի 17-ին։ Վերջապէս հասաւ այդ օրը եկաւ Վաշնաձէն նոյն օֆիցիէրի և ստրածնիկների հետ։ Ելի թուրքերը չկային, իշխանն ուրախուրախ յայտնեց, որ բոլոր նախապատրաստական գործերը վերջացել են և երեք օրից յետոյ թուրք ժողովուրդն իրա բէկերով, խաներով ու աղալարներով։ Աղդամի շրջակայքից կը հաւաքուեն Ասկերանից 2—3 վերստ հեռաւորութեան վրայ գտնուող ուռենիների տակ, որտեղ և պէտք է հաւաքուեն հայերը։

Տեղի ընտրութիւնը լաւ էր։ Բայց ինչո՞ւ էր, ախր, այսքան ուշանում գործը. միթէ ելի հանդիսատես ենք հին կօմեդիաների շարունակութեանը. օր օրի վրայ ծախելով՝ դրութիւնն աւելի էր լրջանում. մասնակի, թեթև յարձակումները շատանում էին։ Մանանդ այդ դանդաղեն անհասկանալի էր թուրքերի կողմից, որովհետև Ասկերանը գեռ շարունակում էր փակ մնալ. ճանապարհով թուչուն անդամ չէր անցնում, բացի փոստից, իսկ Շուշուայ թուրք ազգաբնակչութիւնը կատարելապէս սովի էր մատնուած, և նրանք լորին ազում էին և նրանից հաց թիւելու փորձեր անում։

— Մինոյն է, — տասց հայ խօսակիցներից մէկը, — մենք Ասկերանը երբէք բաց չենք անի, մինչև որ հաշտութիւնը չկայանայ։ Որովհետև Ասկերանը բաց անել, թուրքերին պաշար հասցնել, նշանակում է մահուան դատապարտել հաշտութեան ինդիրը։

— Այն ժամանակ մենք կը բանանք, մենք, — բացականչեց օֆիցիը, կը ծրէին զարկելով. — երբ կը գոռան թնդանօթները, Ասկերանն ինքն իրան կը բացուի։

— Բացէք, — պատասխանեց խօսակիցը, — բայց մի մոռացէք, որ Աղդամը ևս բանալ է հարկաւոր։ Այն ժամանակ միան կը հաւատանք, որ կառավարութիւնն անաշառ, անկողմնակալ կերպով է վերաբերում դէպի երկու ազգերը։

Խօսակցութիւնը վերջանալու մօտ էր, և որոշում էր, թէ ամսի 20-ին ժամը քանիսին պէտք է հայերը նշանակուած տեղը հաւաքուեն, երբ մէկնիմէկ հրացանների մի խուլ որոտոց բարձրացաւ... թուրքերը յարձակուել էին Խրամութի վրայ...։

Հաշտութիւնն էր այդ, կնքում էր...։

Վաշնաձէն նայեց օֆիցիէրին, դառնապէս ժպտաց, ապա ձի նստելով՝ ճանապարհուեց գէպի Շելլու, հաշտութեան գործը թաղամարելով։ Այնուհետև էլ նա չերևաց։ Չենք երաշխաւողուած համարելով։ Այնում, բայց ստրածնիկներից մէկն ասում էր, թէ նա ծածուկ Աղուում դամից հեռացել է Թիֆլիզ, որովհետև թուրքերը վերջերում սկսել էին վատ աչքով նայել նրան։

VIII

ՊԱՏԺՈՂ ԱՐՃԱՒԱԽՈՒՄԲՅՆ

Վարանդան բացառութիւն չկազմեց. այնտեղ ևս մտաւ պատժող արշաւախումբը, իրան յատուկ բոլոր սարսափներով։ Աւելած երկիրը հեծեծաց, տնբաց «Փրկիչների» հարուածների տակ, սաթայէլեան քրբիջ յարուցանելով բարացած սրտերում։

Ինչո՞ւ էր այս պատժողական զօրամասը... միթէ ժողովուրդըն ապատամբել էր. հարկ չէր տալիս, զինուրագրութեան չէր գնում, ուռւսներին հալածեմ էին. կամ գուցէ Վարանդացիք թուրքերի վրայ անընդհատ յարձակումներ գործելով Ռուսաստանի ընդհանուր խաղաղութիւնն էին խանգարում։ թէ կառավարութիւնն անպատճառ ցանկանում էր հայ-թրքական ընդհարումներին վերտալ, բայց հայերը նենգորէն, կրկնակի ուժերով վառում էին հըրդացելով...։ Ո՞չ, զրանից ոչ մէկն էլ չկար. և եթէ կար մի որևէ յանդեկի...։ Ո՞չ, զրանից ոչ մէկն էլ չկայ. և որ հայերը կարողացել էին պաշտպանք, ապա այդ այն էր, որ հայերը կարողացել էին պաշտպանք, ապա այդ այն էր, որ ներկայ պազրումների տարում նուել. ինչպէս կարելի էր, որ ներկայ պազրումների տարում

Խաչէնն ու Վարսանդան բացառութիւն կազմեն. այդպիսի ծանր «յանցանքի» տէր լինել ու չպատճռել...

Դեռ նախ քան արշաւախմբի գալը, Վարանդայի մի քանի գիւղեր թալանի ու էկզէկուցիայի էին ենթարկուել կողակների կողմից, տեղ-տեղ մարդկային գոհեր ևս տալով. այդպէս՝ տուժել էին Քեաթուկ, Նախիջևանիկ, Վարազարոյն, Հարաւ, Միրուշին, Հաղորտի և այլ գիւղեր. բայց ժողովուրդն էլի գիմանում էր, յուսալով, որ էկուց-էլօր հաշտութիւնը կ'ընկնի և ամեն բան կը դադարի. խեղճերը կարծում էին, թէ հաշտութիւնը երկնքից պէտք է կաթի, այն էլ՝ թալանող կողակների ձեռքով:

Պատժող արշաւախումբը մտաւ Վարանդա այս ժամանակ,
երբ հայ-թրքական Հնդիարումներն այլևս սուր բնաւորութիւն
չէին կրում, կրքերը հանգստանալու վրայ էին, իսկ Թիֆլիզում,
փոխարքայի ձեռներէցութեամբ հայ-թուրք պատգամաւորների
նիստերն էին լինում՝ խաղաղութիւնն ամրապնդելու միջոցներ
մշակելու համար:

«Русскія Вѣдомости» լրագրի պատերազմական թղթակից Նանդը, որ լաւ ծանօթ է Կովկասին և վերջին զարսափներին անձամբ ականատեսչ է եղել, այսպէս է ասում.—Վարչութիւնն ամբողջ մի տարի լուռ ու մունջ նայում էր իւր առաջ խաղացուող ողբերգութեանը, յանկարծ, երբ ամեն ինչ հաճպատանալու վրայ էր, նա սկսեց կարգը վերականգնել... ազգարնակչութիւնը յոգնած էր ընդհարումներից, և միայն տեղ տեղ երեսում էին թըրքական շայկաներ: Այն ժամանակ «արշաւախմբերն» իրանք գործի կանգնեցին...»:

Վարանդայում գործող զօրամասին առաջնորդում էր մի «Հքնաղ» երրորդութիւն՝ պալկովսիկ Վիլէրն, գաւառապետ Ֆը-
րէյլիխ և հաշտաբար միջնորդ Երմօլան. ինչե՞ր կատարեցին նը-
րանք այնտեղ, ինչպէս «Խաղաղացրին» ժողովուրդը, այդ մասին
մենք չենք խօսի, Աշոտ հպիսկոպոսի և միւսների հեռագրերն
ու միւս սարսափելի նկարագրութիւններն էլ մի կողմ կը դնենք,
չենք տարուի անձնական տպաւրութիւններով, որպէսզի մեզ չը-
մեղագրեն չափազանցութիւնների մէջ: Այլ թարգմանաբար ա-
ռաջ կը բերենք սարսափներից յետոյ Վարանդա մտած յանձնա-
ժողովի կատարած քննութեան մի մասը: Եանձնաժողովը կազ-
մուել և ուղարկուել էր փոխարքայի հրամանով ու կամքով. կազ-

մի մէջ կային հայ, թուրք և սուս անդամներ, որոնց նախագահ հում էր Վէյդէնքառմը. ուրեմն քննութեան առւած արդիւնքը դուրս է եկած մի բովից, որին չհաւատալ, աւելի և՛ կասկածել, թէ փաստերը խտացրած են, չենք կարող:

թարգմանութիւնը կատարում ենք Վասիլի Կիմկովի «Правы и разстрѣлы» գրքից:

Տեղ գիւղ. Ապրիլի 5 (1906թ.)

1) Յարութիւն Մուսայէլեանց.—Առաջին կարգի վաճառական: Իրա՝ զիւղի մէջ խանութ ունեմ: Մարտի 18-ին ուրիհաղնիկ Բակլանովի հրամանատարութեամբ Խօնաշէնու պոստից մեր զիւղը մտան 16 ստրաժնելիներ, և զէնք դանելու համար խուզարկեցին իմ և Յովհաննէս Յովհակիմեանցի տունը: Խուզարկութիւնը ոչինչ չտուաւ: Ստրաժնելիները դնացին, իսկ ևս՝ գործով ճանապարհուեցի Շուշի: Իմ բացակայութեանս ժամանակ, մարտի 20-ին, մեր զիւղն է մտնում գնդապետ Վիլէրնի զօրամասն արտիլերիայով, ուղեկցութեամբ գաւառապետ Ֆրէյլիխի և հաշտարար միջնորդ Երմօլակի: Մեր զիւղում թուրքեր էլ են ապրում հայ-երի հետ մասամբ խառն, մասամբ էլ առանձին թաղում: Այդ թաղում, ի միջի այլոց, գտնուում էր եղբ. Ասլան-բէկ և Սաղդ բէկ Մելիք-Ասլանովների տունը (Սաղդ-բէկն ամառը Զանգեզուր պրիստաւ էր, որտեղ թուրքերը նրա ներկայութեամբ սրի անց-ըին Մեքէնդ զիւղի հայերին): Արշաւախմբի հրամանատարի իմ տունս ոմբակոծուեց, մի քանի ոռումբ բաց թողեցին, բայց անվնաս: Դրանից յետոյ բաց թողեցին կողակներին. սկսուեցին խուզարկութիւններ, կողոպուտ, կանանց վիրաւորանք, սակայն բացառապէս հայերի տներում: Երբ բոլորը վերջացաւ, սպաները, գաւառապետը և հաշտ, միջն. Երմօլիայի հայերի: ուստիրաստած ճաշը թողնելով՝ գնացին Ասլան-բէկի մօտ: Ճաշից յետոյ հրաման տրուեց՝ ճանապարհուել զէպի Ազոփի: Երբ արշաւախմբն արգէն դուրս էր գալիս զիւղից, Երմօլակը վերցնելով օֆիցէր Բիրիւլինին և 15 կողակ, ուղղուեցին դէպի իմ տունս, միենայն ժամանակ Երմօլակը կողակներից մէկին մի քառկ վառող տուաւ, որ Ասլանը-բէկի տնից էր վերցը-րած, իսկ թէ որտեղ էր գտնուել—չգիտեմ: Տունս մտնելով

Երմօլակը հրամայեց հաւաքել և մի տեղ՝ դարսել տնային իրերը, յետոյ վառովով ցրուեց, կերօսին շաղ տուաւ սենեակում և դուրս գալով՝ անձամբ վասից: Այրուեց իմ երկյարկանի տունս՝ իմ ամբողջ կարողութեամբ, հացի ամբարովս ու ճոթեղէնի պահսառվս, —ընդամենը՝ 8—10 հազար ըուրիշու: Ընդհանրապէս աւերածութիւններին ղեկավարում էր Երմօլակը: Երբ հրդեհն ըսկուեց, իմ աներս՝ Բաբա-Աթասը կամեցաւ հանգնել կրակը, բայց Երմօլակը հրամայեց քշել նրան, և կողակները նրան հրեցին կրակի մէջ: Բաբան հազիւ ազատուեց. Երմօլակը յետեկցն ասաց. —Հը, ի՞նչ է, շնորհի, սիրտդ ցաւում է:

2) Առաքել Շաբարեան.—տանուտէր Տեղի գիւղի հասարակութեան. ներկայ լինելով Մուսայէլեանցի հարցաքննութեանը, հաստատեց վերոգրեալը և հետեւողն աւելացրեց. —Երբ արշաւախմբին հրաման տրուեց ճանապարհուել Ազոխ և պատրաստում էին դուրս գալու, Երմօլակը վեցնելով մի օֆիցէր և մի քանի կողակներ, նրանցից մէկին Մելիք-Ասլանովի դունը մի քակ վառով տուաւ: Մելիք-Ասլանովը զնաց Մուսայէլեանցի տուն, թափեց քասկի վառողը, հրամայեց տնային իրերը հաւաքել մի սենեակ, յետոյ հէնց ինըը կերօսին թափեց իրերի և յատակի վրայ, ու լուցկիով վառեց. հրդեհն սկսուեց. մօտ վազեց Մուսայէլեանցի աներ Բաբան և ցանկանում էր հանգնել. Երմօլակը կողակներին հրամայեց քշել նրան. բայց նրանք Բաբին հրեցին կրակի մէջ: Բաբան հազիւ ազատուեց: Այդ բոլորը ես ինքս անձամբ տեսել եմ, և, իրոնւ տանուտէր, ուղեկցում էի Երմօլակին, ո. Փիցէրին ու կողակներին այն ժամանակ, երբ նրանք Ասլանը էկի քակից վերցրած վառողով զնում էին Մուսայէլեանցի տունը վառելու: Որտեղ, կամ ումից էին վերցրել վառովը, չփառեմ. բայց հաստատում եմ, որ խոզարկութեան ժամանուկ հայերի տներում վառով չի գտնուել:

* *

1) Թափուհի Քուշեանց, 30. 35 տարեկան: —Երբ արշաւախմբը եկաւ և կանայք փախան, ես էլ փախայ. կողակները վազում էին մեր յետեկց. յդի լինելով՝ ես երկիւղից ճնեցի տղայ, որ հէնց այնտեղ էլ մեռաւ:

2) Ազիզգիւլ Զաւագեանց, 50—55 տարեկան: —Կիրակի երեկոյեան մեր տուն խուժեցին կողակները, թուով 10 հոգի: Ծեծեցին իմ ծեր ամուսնուս: Տուն թափուելով սկսեցին թալանել, յետոյ ինձնից կպան՝ բռնաբարելու համար. ես թոյլ չէի տալիս, բայց կողակները ծեծեցին, վեր գցեցին և սկսեցին բռնաբարութիւնը. ես ուշաթափ եղայ:

3) Մանուշակ Փուլեանց, 35 տարեկան: —Ես չկարողացայ փախչել, որովհետեւ ծծի երեխայ ունիմ և միւս երեխաներս էլ փոքր են: Մեկ մօտ խուժեցին երեք կողակներ, ծեծեցին, տանջեցին ամուսնուս և բոլոր երեքն էլ բռնաբարեցին ինձ: Իմ ամուսինս այնքան ծեծուեց, որ մինչև այժմ էլ հիւանդ է: Դեռ այժմ իսկ ինձ վրայ կան բռնութեան հետքեր:

4) Մարիամ Ավանէսեանց, 60 տարեկան: —Ամուսին ունիմ: Ես, ինչպէս պառաւ կին, չփախայ այն ենթագրութեամբ, թէ ինձ չեն կպչի: Կողակներին բաց թողեցին. նրանք թափուեցին աղները, սկսուեց թալանը, ծեծն ու բռնաբարութիւնը. ամեն կողմերից օգնութեան ազալակներ էին լուռում, բայց իշխանաւորներն ուշագրութիւն չին դարձնում: Մեր տանը փշրեցին սենեակների կողպած դաների կողպէքներն ու թալանեցին արծաթ, շորեր և այլ իրեղէններ, յետոյ էլ բռնաբարեցին ինձ: Մեր տան կողակները 4—5 հոգի էին: Արդէն երկու շաբաթ է անցել, ուստի և բռնութեան հետքերն անհետացել են:

5) Բալախանում Չիթչեանց, 25 տարեկան: —Ծծի և ուրիշ մանը երեխաներ ունենալով ես փախչել չկարողացայ. ամենազարհութելի բռնութիւնները կողակներն իմ տանս գործադրեցին. կողակներն առանձին-առանձին խմբակներով մի քանի անգամ յարձակուեցին մեր տան վրայ. աղջիկս, 4 տարեկան նադէժգան, երկիւղից վախճանուեց. —առաջ նա առողջ էր. —իսկ Արմենակ տղաս մինչև այժմ էլ հիւանդ, երկիւղից պառկած է անկողնում: Իւրաքանչիւր խմբակ մտնում և բռնաբարում էր ինձ. այդպիսի խմբակներ 6 թէ 7 պէտք է լինէր, լաւ չեմ յիշում, որովհետեւ ես գրեթէ ուժապատ ընկած էի, իսկ կողակների զնալուց յետոյ հիւանդ պառկած էի, և այժմ էլ հիւանդ եմ:

6) Մայկօ Սարգսեանց, 16—17 տարեկան: —Ամուսնանալս երկու տարի է: ես փախչել չկարողացայ: Գիշերը մեզ մօտ եկան երկու կողակ, ծեծեցին ամուսնուս, դուրս քշեցին տնից, իսկ

ինձ՝ երկուսն էլ բռնաբարեցին. յետոյ հաւաքելով պին ունեցող իրերը, հեռացան (գէմքով գեղեցիկ է):

7) Նախշուն Նադիրեանց, 50 տարեկան: — Բռնաբարուած և թալանուած է:

8) Թամամ Սարիեանց, 40 տ. — Բռնաբարուած է կողակներից և կողոպտուած:

9) Շողակաթ Զախմախեանց, 14 տ.: Ես այն կանանց թւումն էի, որ չէին կարողանում թագնուել: Երկուշաբթի առաւօտ սանդուղներով մեզ մօտ ելան երկու կողակ, ես սենեակ փախայ և ուղում էի թագնուել, բայց նրանք ներս ընկան, և մէկը միւսի յետեկց բռնաբարեցին, ինձ կուսութիւնից զրկելով: Ես ուշաթափուեցի:

**

Տ Ե Ղ Գ Ի Ւ Ղ

1) Սիրանոյշ Եգանեանց, 40 տ. — Կողակներն ինձ բռնաբարեցին և թալանեցին:

2) Մեհրի Մովսիսեանց, 50 տ. — Ինձ բռնաբարեցին և կողոպտեցին:

3) Մարիանգիւլ Օհանջանեանց, 17 տ. — Մեր տանը միայն ծեր հայրս էր: Ներս խուժեցին 6—7 մարդ, հօրս ծեծելով դուրս արին տնից և երեք հոգի ինձ բռնաբարեցին: Ամուսնացել եմ բարիկենդանին: Բանութեան հետքեր եղել են, բայց անցել են:

4) Մարիամ Հայրապետեանց, 16 տ. — Ամուսնացել եմ բարիկենդանին: Զարչարման շաբթի երեքշաբթի օրը, ցերեկով, խուժեցին 6 կողակ. տանը ես էի և մայրս: Մօրս դուրս վռնեցին, իսկ ինձ բռնաբարեցին ամենը: Այժմ ամուսինս այդ խայտառակութիւնից յետոյ ինձ թողել է ու ծածկուել:

5) Թամամ Ապրիեանց. — Բռնաբարուած և կողոպտուած եմ գիւղում:

6) Մանուշակ Արագեանց և Բաջի Գրիգորեանց. — Բռնաբարուած ենք գիւղի յետեռում, երբ փախչում էինք:

7) Թութի Աղաջանեանց, 35 տ. կողակները յարձակուեցին ինձ վրայ փախչեռու ժամանակ և գիւղի յետեղ, կամրջի վրա բռնաբարեցին ու կողոպտեցին:

Ա Զ Ո Խ Գ Ի Ւ Ղ

1) Մարգարիտ Գրիգորեանց, 45—50 տարեկան: — Ես փախչել չկարողացայ. ինձ բռնաբարեցին և կողոպտեցին: Ամուսնուս այնպէս են ծեծել, որ նա պառկած է և չի կարողանում շարժուել:

2) Մարիամ Գրիգորեանց, 35—38 տարեկան: — Հինգ կողակ թափուեցին և մեզ մօտ: Թալանեցին տունը, սկսեցին ինձ թալանուածուր չէի լինում, պատուտեցին ներկայացրածը շորերը և ինձ բռնաբարեցին:

3) Խուրդա Վանէսեանց, այրի, — տունս թալանուած է, ես բռնաբարուած եմ գիւղի դուրս:

4) Մանուշակ Յարութիւնեանց, 28 տարեկան: Ես հաց էի թխում, յանկարծ ներս խուժեցին մի քանի կողակներ, բռնեցին ինձ ու բռնաբարեցին: Ես ուշաթափուեցի:

5) Նանս Բալասանեանց, 20 տարեկան. — Ինձ բռնաբարեցին. մենք հարսին թագցրել էինք այգիներում. երբ փախանք, նրան էլ բռնաբարեցին. իսկ ամուսնուս բռնեցին, ծեծեցին և թեւը կուրեցին: Տունը կողոպտել են:

6) Մհարնազ Հայրապետեանց. — Ինձ բռնաբարեցին այգիներում, երբ փախչում էի. տունս թալանել են:

7) Մհարնազ Բալասանեանց, 35 տարեկան. — Ես բռնաբարուել և թալանուել եմ գիւղի դուրս:

8) Բախճագիւլ Ակոբեանց, 25 տ. — Երբ ես պատրաստում էի փախչելու, կողակները բռնեցին, տուն քաշեցին և բռնաբարեցին, յետոյ կողոպտեցին: Ներկայացրածիս վրայ արծաթէ զարթեր են եղել, կողակները թալանել են:

9) Նուբար Բալասանեանց. բոլորովին որբ: — Ես Ազիզ քիրուս հետ փախչում էի կողակներից գէպի սարերը: Երկու կողակ ձանկեցին ինձ ու բիրուս սարերում և բռնաբարեցին մեզ: Իմ կուսութիւնս խախտեցին:

10) Ազիզ Բալասանեանց, 35 տ. — հաստատում է Նուբարի ցուցմունը:

11) Դաստա Թիւնեանց, 35 տ. այրի: — Ես կարողացել էի 12 տարեկան աղջկաս ուղարկել սարերը, իսկ ինքս 9 և 3 տարեկան երեխաներիս հետ՝ չհասայ: Ճաշից յետոյ ինձ մօտ խուժեցին 4 կողակ, բոլոր չորսն էւ, երեխաներիս աչքի առաջ ինձ բռնա-

բարեցին, յետոյ պահանջեցին, որ ես համբուրիմ նրանց անդամները, բաց անելով առաջիս ես զարհուրանքի մէջ էի, կողակներն ինձ սպառնում էին մորթել. ստիպուած եղայ համբուրել: Այդ բոլոր խայտառակութիւնները կատարւում էին 9 և 3 տարեկան երեխաներիս առաջ:

12) Մինա Գաբրիէլեանց, 40 - 45 տարեկան, այրի: — Վեց կողակ մտան ինձ մօտ, ծեծեցին ու բռնաբարեցին ինձ, յետոյ տունը թալանեցին:

13) Աիլազա Աւագեանց, մօտ 60 տարեկան: — Ես աղիս իւր կնոջ հետ կարողացել էի լեռներն ուղարկել: Կողակները բռնել չկարողացան: Ես, ինչպէս մի պառակ կին, տանը մնացի: Ներս ընկան 4 կողակ: Երբ նրանք ինձ տեսան, սկսեցին ծեծել, յետոյ տապալելով և անդամները բաց անելով, ուղեցին շոնէլ ինծ վրայ, բերնում: Բայց ես երեսս երկու ձեռներով փակելով շուռ հկայ: Կողակները դրանից առաջ իրանց անդամները երեսիս դնելով նըրանցով իփում էին երեսիս:

14) Անթառամ Աւագեանց, 35 տ.— Երեխաներս հիւանդ էին, փախչել չկարողացայ. եկան 4 կողակ, և տունը կողոպտելով բռնաբարեցին ինձ:

15) Սոնիչկա Զաքարեանց, 30 տարեկան: — Կողակներն ինձ բռնեցին գիւղից դուրս և բռնաբարեցին, իսկ գիւղում կողոպտել են տունս:

16) Մալակ Մնացականեանց, 40 տ.— Կողակներն ինձ բռնաբարեցին ու կողոպտեցին գիւղում:

17) Թաղագիւլ Բէլուեանց, 60 տ.— Կողակներն ինձ թալանել են:

* *

Ս Օ Ս Գ Ի Ւ Ղ

✓ Յակովը քահանայ Բաղդասարեանց, ծխական Աօս գիւղի:

Մենք իմացանք, որ կողակների առանձին զօրամաս է եւ բնացել պալկովնիկ Վիվէրնի հրամանատարութեամբ, որ այդ զօրամասը շընելով գիւղերը՝ թուրքերին էլ, հայերին էլ ներշընչում է հանգիստ մնալ, հակառակ դէպքում իսանգարողներին

խիստ պատիժ սպառնալով: Մենք շատ ուրախացանք, և երբ իմացանք, որ զօրամասը մօտենում է մոր գիւղին, իսկոյն սկսեցինք զօրքի համար հաց, միս, կեր և բնակարան պատրաստել:

Մարտի 12-ին, ժամը 2-ին մօտ, հեռուից երեաց զօրքը: Ես հաւաքեցի պատուաւոր մարդկանց, շուրջառս զցեցի, վերցրի խաչ, աւետարան, աղուհաց և ելայ գիւղից դուրս՝ դիմաւորելու: Առաջից գալիս էին զանազան գիւղերից հայեր, կողակների բեռներով բեռնաւորուած ձիանց կապը քաշելով: Այդ հայերը մեր գիւղում կանանց նկատելով՝ զարմացած ասեցին: — Այս ի՞նչ բան է. խելազարում են, ինչ է, որ կանանց թողել են գիւղում: Ախր կողակները վիրաւորում են կանանց: Այդ իմանալով՝ կանայք փառաւուստ տուին գիւղից: Առաջինը գալիս էր հաշտարար միջնորդ երմօլաեւը: Թուրքերէն լեզուով նա ասաց. — վերադաշնք, դուք արժանի չէք մեզ ընդունելու: — Յետոյ նոյն երմօլաեւը, խօսելով զօրամասի հրամանատարի հետ դարձաւ ինձ ու պատուելիներին և ասաց. « Զեր աղուհացը չի ընդունուի. ձեզ հետ ուրիշ կերպ կը վարուեն: » Մենք ծանը տպաւորութեան տակ վերադաշնք: Հայի կողակները զիւղու մտան — նրանք մի քանի հարիւր էին, — որ չկարով ազդանշան տրուեց: Կողակներն իջան ձիանց ու թըռան կանանց յետեցից. բռնում էին նրանց ձորակներում, ճանապարհներին, անտառում, — ամեն կողմից սարսափելի աղաղակներ տարածուեցին. կանանց կողակները բռնաբարում էին, պոկում էին նրանց գլխազարդերը, զարդարանըներն ու միւս արժէքաւոր իրերը, որ նրանք շտապով վերցրել էին աներից: Այդ բոլորը տեսնում էին և՛ օֆիցէրները, և՛ գաւառապետը, և՛ հաշտարար միջնորդը, բայց ոչինչ չէին անում, որովհետև կողակներին իրաւունք էր տրուած: Գիւղից դուրս, կանանց թւում բռնաբարուել է 16—17 տարեկան աղջիկ Կոլիս Յարութիւնեանցը: Որովհետեւ ոչ բոլոր կանայք կարողացել էին փախչել, ապա մնացողներին ինձ մօտ հրաւիրեցի և ասացի. « Բանի որ ես կենդանի եմ, կը կանգնեմ ձեր պատիւր պաշտպանելու: իսկ երբ որ ինձ կը սպանեն, այն ժամանակ ոչնչացէք և դուք: » Ինձ մօտ հաւաքուեցին քսանի չափ կանայք, բայց դուրս եկաւ, որ աներումն էլի մնացել են, նրանցից ոմանք պառաւներ էին. մտածել էին, թէ իրանց վրայ յարձակումն լինել չի կարող, միւսները չէին հասել երեխաները տանելու, կամ հիւանդ են ունեցել: Երբ մթնեց, կողակներն սկսե-

շին թափուել տները, կողովուել, ծեծել և բռնաբարել տներում մնացած կանանց: Բոլոր կողմերից օգնութիւն էին կանչում տը-դամբարդիկ, կանայք, —մի խօսքով՝ կատարեալ դժոխք: Իշխանաւորները լսում էին դժբախտների հեծեծանքները, տեսնում էին և իմանում, թէ ինչպիսի խայտառակութիւններ են կատարում, քայլ առաջը չէին առնում: Գիշերուայ ժամը 12-ին մօտ՝ ինձ հեռուից ձայն տուին: Ես հարցրի, ինչ է պատահել: Պատասխանեցին, որ կողակները ծեծել են Աւանէս Հայրապետեան Գրիգորեանցին, որ Աւանէսը մեռնում է, գնամ հաղորդելու: Ես իջայ դէպի Աւանէսի տունը և նրան գտայ ուշաթափ դրութեան մէջ. լեզուն կարուել էր, հազիւ էր շունչ քաշում, ձախ երեսը քնքատեղում կապտած էր, կոկորդի շորս կողմով վիզն ուռած էր, կոկորդի երկու կողմից կարմիր բծեր կային, աչքերը կարմիր էին և շուռ եկած: Աւանէսի մայր պառաւ նուրբարը հետևեալը պատմեց: «Երբ կողակներն սկսեցին տները խցկուել, Աւանէսը կանգնեց դռանը, հսկելու, իսկ ինձ առաջարկեց փակուել տանն ու ներսից հսկել: Յանկարծ շները հաջեցին: Կողակները բակն էին մտել: Աւանէսը (պահեստի զինուոր) կէս-ռուբերէն, կէս-թուրբերէն իմնդրեց կողակներին՝ չդիպչել իրանց: Այդ ժամանակ լսուեց ուժեղ, չոր զարկի ձայն, իսկ զարկից յետոյ՝ Աւանէսի «վայ, մեռայ»՝ աղաղակը. դրանից յետոյ կարճ ժամանակ խրիոց. էր լսում և բոլորը դադարեց: Մի քանի րոպէից յետոյ կողակներն ուղղուեցին դէպի մեր տան դռները և սկսեցին դոռով բաց անել. մերջապէս գռները թռան և նրանք ներս ընկան, ներսը կրակ չըկար, և նրանք չնկատեցին, որ առաջներինը պառաւ է: Զնայելով աղերսանքներին, գլորեցին նրան և մէկը մեւսի յետեկից՝ ըըռնաբարեցին: Դրանից յետոյ մօտ 70 տարեկան պառաւը մի ժամու չափ ուշըի չի եկել: Պառաւի պատմածը լսելու և Աւանէսին հաղորդելու հասր չունենալով, որովհետեւ նա ուշաթափ դրութեան մէջ էր, ես յետ դառայ: Առաւօտեան իմաց տուին, որ Աւանէսը մեռել է: Այն ժամտնակ գնացի գաւառապետ Ֆրէյլիխի մօտ, որտեղ և երմօլաեւն էր: Աւանէսի մահը նրանց յայտնեցի, որին պատասխանեց նա.—«դէն, ինչ կայ. մեռել է—թաղեցէք»: Զօրամասը մնաց մեզ մօտ մինչև ժամը 2-ը հետևեալ օրուայ և մինչև դուրս գալը աղգաբնակչութեանը բաղմաթիւ ծանր վիրաւորանքներ հասցրեց: Կողակները մի աղջիկ էլ բռնաբարեցին, մի

տասնուերկու տարեկան, կաթուածանար ալջիկ, Նորաթ Մուսայինանց անու. նով: Նրա պապ Մուսան, 70 տարեկան ծերունի, գրկելով թոռանը, ուզում է հեռացնել գաղանացած կողակներից, բայց նրանը տապալում են ծերունուն, սարսափելի կերպով ծեծում, կոխ տալիս կօշիկներով. ծեծից նա ներքին արիւնոսութեան է ենթարկում. նա այժմ հիւանդ է, և առանց լուրջ օպէրացիայի, ինչպէս բժիշկներն են ասում, մահն անխուսափելի է: Անդամալոյժ Նորաթի կուսումիւնը կողակները խախտում են պապի աչքի առաջ:

Այդքանն էլ բաւական է, մի գաղափար կազմելու համար, թէ պատժող արշաւախումբն ինչպէս էր «խաղաղացնուած» Վարանդայի ապստամբներին, 12 տարեկան անդամալոյժ «խառնակիչ» աղջիկներին ու 70—75 տարեկան «զինուած» պառաւներին. դա մի վանդալական արշաւանք, մի Զինգիպիսանեան վոհմակ է եղել և ոչ ըրիստոնեայ կառավարութեան կրթած զօրագունդ: Եթէ դրան աւելացնենք և նոյնչափ այլասեռուած ոստիկանուութիւննը, էլ պատկերը պակաս կողմ չի ունենայ: Արժէ բերել և՛ Սօսեցի մի պառաւի ցուցմունքը: Նրա անունը նորաթ Գրիգորեանց է, 70—75 տարեկան, սպանուած Աւանէսի մայրը: Նա պատմում է.—ինձ բռնաբարեցին 5 կողակ: Սենեակը մութն էր. կողակները լուցկի թափ տուին, որ շուտով մարեց. ինձ տեսնելով, նրանք բռնեցին և միմեանց յետեկից բռնաբարեցին: Կէս գիշեր էր. իմ որդի Աւանէսը բոլորովին առողջ մարդ էր. նրան զարկել էին քունքից և խեղդել: Կողակների գնալուց յետոյ, Աւանէսը գտնուեց բակում, աղբակոյտի վրայ: Իրը նրան սենեակ բերին, քունքի կողմը կապտած էր, աչքերը՝ կարծես դուրս ընկած և արիւնալից, փրփրախառն արիւն էր գալիս, վիզն ուռած էր, լեզուն՝ կապուած: Նա մինչև մահը չուշաբերուեց և մեռաւ հետևեալ օրը, զօրքը գուրս գալու ժամանակ: Մինչեւ այդ՝ զինուորականներից երկուսը երկու անգամ եկան, նայեցին Աւանէսին և ասացին, որ կաթուած է ստացել, իսկ ծեծուելը բացասում էին: Պրիստաւ Ֆատը երեք անգամ եկաւ և ամեն անգամ վախեցնում էր ինձ, որ ես կողակների մասին ցուցմունք չտամ, թէ նրանք են արել, հակառակ դէպրում՝ կը սպանէ ինձ: Իսկ երբ Աւանէսը մեռաւ և ես աղաղակ բարձրացրի, նորից մօտ վազեց ֆատը, ապտակ զարկեց ինձ և ստիպեց լոել»:

Այդպէս՝ իւր զաւակի վրայ արտասուել անգամ արգելում էին, սգի ձայները ապտակներով լսեցնելով:

Սօսում ամեն տեսակ լրբութիւններ գործելուց յետոյ զօրքն անցնում է Գիշի, ձարտար, որտեղ նոյն բաշիբուղուկութիւններն են շարունակում, իւրաքանչիւր ծուխ 5.-ական ոռութիւնի տուգանքի ենթարկում այն պատճառով, որ, իբրև թէ՝ հայերը ծմեռը յարձակուել են թուրքերի վրայ...:

Վայդէնբառումի նախագահութեամբ՝ յանձնաժողովի քննութիւնը ցոյց էր տուել որ կողակներին խրախուսում էին այդ գըֆոխային գործերը կատարելու՝ պալկովնիկ Վիվէրնը, գաւառապետ Ֆրէյլիխն ու հաշտարար միջնորդ Երմօլաեւը։ Այդպէս էլ ներկայացրել էին փոխարքային։ Բայց ինչ եղաւ, պատժուեցին նրանք... ինչ միամիտ հարց... ինչու պատժուէին, ինչ էր նրանց յանցանքը, որ պատիժ էլ ստանային։ Նրանք միայն տեղափոխուեցին ուրիշ տեղեր, գուցէ շուտով աւելի նշանաւոր պաշտօն ու շահանշաններ ստանալու, իսկ Վիվէրնը մնաց իւր քաջագործութիւնները Խաչէնում ևս շարունակելու։

«Յանցաւոր» Վարանդան խաղաղութց արդեօք, — դրան թող պատասխաննեն նրանք, որոնց բոյրերն իրանց աչքի առաջ բռնաբարուեցին։ Նրանք՝ որոնց պառաւ մայրերը պղծուեցին։ Նրանք՝ որոնց աղջիկները լլկուեցին։ Վարանդան յանկարծակիի եկաւ. և լաւ կը լինէր, որ նա մեռնէր իւր պատիւն անբիծ պահելով, քան այդքան խայտառակութիւն կը էր մի կառավարութիւնից, որին իւր որդիներն է տուել ծրայիլու, որի համար շատ անգամ իւր արիւն է թափել։ ~~առաջաւած չտառավարութիւն~~
այ Տաւելից որ խարշաչ լից

•IX

ՄԵՐ ՀԱՐԵԿԱՆ ՆԵՐԸ

Վարանդան կծկւում էր ցաւից. հառաջանքները երկինք էին բարձրանում. և այն ժամանակ, երբ ձարտար գիւղացի Սառա Յարութիւննանը, նորածին երեխան կողքին, ինքը ծննդկան, ան-

կողնում պառկած՝ բռնաբարում էր կողակների ձեռքով, Սադղ-բէկ Մելիք. Ասլանովը փոխանակ զգացուելու իրանց հարկանների վշտից, ընդհակառակը, առաջնորդում էր ոճագործներին՝ հըր-ճուանքով, հրճուում էր նրա հետ և շրջակայ խանութիւնն ու բէկութիւնը, առանց մտածելու, կամ գուցէ իսկի իրանց հոգն էլ չէր, որ այդ հարուածները նոյն ձեռքերով իրանց ազգի գլխին ևս պիտի անդրագառնան, առանց մտածելու, որ հայերի դժբախտանալը իրանց համար բախտաւորութիւն չպիտի բերի։ Շատ անցաւ արդեօք Վարանդայի մարտից, երբ նոյն Վիվէրնը իւր արշաւախմբի թնդանօթներին էր նշան գրել Բաֆրավանդը, Մօլլա-Ղարան ու Բօյ-Անմէղլուն։ Բաֆրավանդում կողակների ձեռքով հրդեհուած աների աւերակները փաստորէն ապացուցեցին, որ Սադղ-բէկերն իգուր էին բերկում, որովհետև այսօր մեզ, վազը՝ ձեզ։ այ Տաւելից

Իսկ ինչ արին հայերը, երբ ոմբակոծում, աւերում էին այն գիւղերը. նրանք ևս Սադղ-բէկի նման առաջնորդում էին Վիվէրնին... երբ թնդանօթի առաջին հարուածները թնդացին, Դաշնակցութեան ներկայացուցիչներից մէկն իսկայն սուրհանդակ ուղարկեց ոմբակոծուող գիւղերի շուրջը գտնուող հայ գիւղերի ինքնապաշտպանութեան մարմնին, որ նրանք երբէք, ոչ մի դէպում պատժողներին չպիտի մօտենան, որովհետև հայերը թուրքերի հետ ոչինչ չունեն, երբ նրանց կողմից յարձակումն չկայ։ Անա ինչպէս էին հայերը պատասխանում Սադղ-բէկերին ու նըմաններին։

Պատժող արշաւախմբերն իրանց սխրագործութիւններով՝ Շուշուայ և գաւառների լնդհարումները վերսկսելն ստեղծեցին. դա անուրանալի փաստ է. մերթ այս, մերթ միւս կողմերը շոյելով՝ կրքերը վառւում էին։ Բայց թուրք հրապարակախօսներն ու առաջաւորներն ինչ էին ասում. նրանք սովորաբար միայն երկու բառ գոչում էին բարձրաձայն։ «Հայերն են մեղաւորը»։ Իսկ երբ հայերը թէ գրաւոր և թէ բանաւոր բողոքում էին այդ մեղադրանքի դէմ և տքնում իսկական յանցաւորը ցոյց տալու, որին թուրքելը գործիք էին հանդիսացել, նրանք փոխարքայի մօտ յայտարարում էին։ «Հայերն են մեղաւորը. նրանք իսկի հաւատարիմ հպատակներ էլ չեն կառավարութեան համար. ոռումք են գործ ածում, նահանգապետներ, գաւառապետներ են սպանում. իսկ

մենք... մենք գառնուկներ ենք, մենք մի գարադովոյ էլ չենք սը-պանելու. «Դաշնակցութիւնն է բոլոր յանցանքների պատճառը. թուրքերը պէտք է կոտորեն հայերին, որպէսզի ժողովուրդն ու-ժեղ կերպով կուտէ Դաշնակցութեան դէմ ու նրան վերջ զնէ». այդ էլ հոչակաւոր Աղաւի օրգան «Իրշաղն» էր ասում: Ոչոք թուրք հրապարակախօսներից կամ ազգեցիկներից քաջութիւն չու-նեցաւ իշխանաւորների երեսին զարկելու, թէ՝ գոնը էր մեղա-ւորը, դուք»: Մինչև անգամ այն ժամանակ, ինչպէս նանդն է ա-սում, երբ կառավարութեան զօրքի ձեռքով նրանց ինչոր երկու գիւղերն էին աւերում, թուրք հրապարակախօսների խորհրդով և Շէյխ-ու-լիսլամի ջանքերով՝ արգելուեց այդ մասին իրանց լրա-գրերում յիշելու, որպէսզի ուուները չըրգումն...: «Որպէսզի ուուները չգրգոււեն», այդ մի քանի բառերը պարզ ցոյց են տալիս այն ո-ղորմելի քաղաքականութիւնը, որին թուրք առաջարկուներն են հետեւել:

Այս, ամբողջ երկու տարուան ընթացքում նրանք երբէք քա-ղաքացիական արիութիւն չունեցան յանցաւորների ճակատին ի-րանց մեղադրականը դրոշմելու: Դեռ նախ քան ընդհարումները, թուրք ղեկավարները ցոյց տուին իրանց պաշտօնը. — մէկին տա-պալել, նրա գերեզմանի վրայ իւր պալատները կառուցանելու հա-մար, — չինայելով նոյն իսկ քծնելն ու շողոքորթելը: Դրան ապա-ցոյց այն ստոր ուղերձը, որ Աղիկեօզալ-Բէկովներն ու Վէզիրով-ները ամենանպատակօրէն ներկայացրին կովկասի չար-հրեշտակ, հոգեառ Գալիցինին, ամեն սըրութիւն ուոնհարուլ, ամենասուրը զգացմունքներ կոխսկոտող, ամեն մի թարմութիւն սպանող, ա-մենքից ատուած այդ աստիճանաւորին, երբ նրա վրայ Թիֆլիզի մահափորձը կատարուեց: Ռւղերձ ներկայացնել մի սատրապի, ո-րի բանութիւնների տակ կովկասին ազգերն են հեծել, «որի կա-պակարութեան եղանակը, որի քաղաքականութիւնը հող պատ-րաստեց հայ-թրբական ընդհարումը բռնկելու կամար», — աւելի քան տղեղ և վիրաւորական է հետեւանների համար:

Կոստի սկզբից մինչև վերջը, հաշտութեան բոպէներում, թուրքերը միշտ մի քան էին կրկնում. — Շէյթանի տոնն Աս-տուած քանդէ, բոլորը նրա արածն է: Ո՞վ էր այդ շէյթանը, որի վզին էին կապում ընդհարումների մեղքը. թուրքերն իմանում էին, որովհետև շարունակ անիծում էին: Բայց եթէ գիտէին, հա-

պա ինչու երկրորդ, երրորդ անգամ, տասներորդ անգամ ենթարկում էին նրան, յարձակուելով հայերի վրայ, և ոչ մի անգամ հրապարակօրէն, ճակատ առ ճակատ չկանգնեցին շէյթանի դէմ՝ նրան իւր յանցանքները թուելու: Դրա պատասխանը թուրք ա-ռաջաւորների կիսալումն մէջ չպէտք է որոնել արդիօք:

Վերջացնում ենք մեր այս մի քանի գլուխները, աւելացնելով ամենախորին համուզունքով, որ հայ-թրբական ընդհարումն այսքան մեծ ծաւալ չէր ստանայ, եթէ կառավարութեան պաշտօնիաները մատների արանքով չնայէին թագու տեղի ունեցած ա-րինհեղութեանը, տեղն ու տեղը խեղդէին ոճիրը, յանցաւորնե-րին պատժէին, և ցոյց տային ազգաբնակչութեանը, որ կառա-վարութիւնը կողմնակալ չէ այս կամ այն ազգութեանը, և եթէ սենատօր կուզմինսկու մեծադղորդ քննութիւնը չբաւականանար մուկ ծնելով:

Բայց ճանանգի կառավարչութիւնն այդպէս՝ չարաւ. նա ամեն տեղ տարօրինակ դիր էր խաղում. 13 ամսուան ընթացքում «կը-սուին» մամնակցողներից ոչ որ չբռնուեց և դատաստանով չպատ-ժուեց. ոչ մի տեղ կոտորածը չնախատեսնուեց ու առաջը չառ-նուեց:

«Ոչ իրա ժամանակին ուղարկուած զօրամասերը սովորա-բար ընդհարումների տևզն էին հոտնում և ձեռնարկում գաղարե-ցնելու կոտորածն այն ժամանակ, երբ նրանց մամնակցութիւնը կարող էր ազգաբնակութեան խաղաղ մասին աւելի վնաս պատ-ճառի, բան օգուտ»:


«Գիներալ-ճանանգապետների և զօրամասերի շատ կամ թիշ ինքնազլուխ հրամանատարների կարճ ժամանակնեայ երկիր կառա-սավարելու ժամանակաշրջանը նշանաւորուած է միայն՝ հարուսա-րնակչութեան տեղերում՝ վլատակներով, և օրէնքի կատարեալ վերացմամբ, օրէնք, որին փոխարինեց «ըստ հայեցողութեանը»: Կոտորածը չգաղարեց և թնդանօթներն առաջուայ նման աւերում են գլխաւորապէս անմեղներին»: (Ստարօսէլսկի):

Ստարօսէլսկին մեղ համար գուցէ հեղինակաւորութիւն չէ. հեղինակաւոր է միայն ճշմարտութիւնը, որ նրա բերանով է խօ-սում: Աւ մենք էլ նրա տեղ պնդում ենք, որ յամենայն դէպու ար-մատական խաղաղութիւն հաստատողները «հայատեաց» Ալֆան-ներն ու «թրէատեաց» Գալաչչապովները չպիտի լինին, այլ ինքը.

հայ և թուրք ժողովուրդը, որ վերջապէս կը դգան, թէ որտեղից
է գալիս հարուածը և այս կամ այն կերպ՝ ոյժ չեն տայ հարուա-
ծող շաղկին:

Դալի-Ալիներին, կախաղանի համար վնասը ուղղող Դալի-Ալիներին աղատ կացուցանելը խաղաղութեան համար տոգորուող Բահաթրեաններին Օրենքուրդ աքսորելը երբէք գրաւական չեն երկու ազգերի մէջ համերաշխութիւն և հաշտութիւն հաստատելու:

Այդ լաւ պէտք է իմանան մեր հարեանները և նրանց մըտքի գեղավարները: Ա ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԱԿՐՈՒՅՑ ԵՎ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԱԿՐՈՒՅՑ



Լ Ա Յ Ո Ե Ն Տ Ե Ս Ե Լ

1. Բախումաներ և տղբաններ. Ա տպագրութիւն . 15 կոպ.
2. Գեշինսկի. — Հաց, լոյս և աղատութիւն 12 »
3. Ֆեղորօֆից. — Ինչպէս են ժողովուոմ և ծախս, ժող, փողերը 5 »
4. Կարմաղիկ. — Նոր լեռան քարոզը 2 »
5. Զերնով. — Գիւղացին և բանուորը 15 »
6. Պերներովին. — Աղպային հարցը և սօցիալ-դիմոկրատ. 5 »
7. Պանալինի. — Գիւղացիներին 5 »
8. Ե. Թափշան. — Արհեստակցական միութիւններ. 15 »
9. Եօվոսօրդիկ. — Ինչ է իրաւական պետութիւն 15 »
10. Ե. Կարասյ. — Հողացին հարցը Նոր Զերմանդիայում 2 »
11. Ժան Փորխ. — Բուրժ, սիփ, և նրա ապագայ ցրաւուոմը 5 »
12. Ա. Արիկան. — Դիմոկրատիական բնարութիւններ 12 »
13. Կոր Կառուսիկ. — Աղգութիւնների հարցը Ռուսաստանում 3 »
14. Ա. Անորդնեան. — (Դարբիր) — Աղատութիւնն ճանապարհին 80 »
15. Ֆ. Լանայ. — Մահմանազրութիւնն էութեան մասին 5 »
16. Ա. Ե. — Ինչպէս կարելի է լուծել հողացին հարցը 12 »
17. Վահաբի Վահաբիզ. — Ինչ է ժաղավրդականութիւնը 2 »
18. Ա. Զատարեան. — Վիճակ տեղ, զիւգական ազգար. 25 »
19. Եղիշեա Գրիգոր. — Ժողովրդ-օրհնադր, գաշ. Զւիցերիայում 20 »
20. Գոհանին. — Ավ Բնչակ է ասպաւմ 7 »
21. — Մի Պրուց հոգի մասին 5 »
22. Լ. Շոշո. — Աղքարային ծրագրի հարցը 7 »
23. Ա. Կոմիտաս. — Կոստիքացիա 15 »
24. Շառագելք-ազնուկ ձեր իրաւունքներից. 1 »
25. Լ. Պետրոս. Երկու ծրագրի 20 »
26. Ա. Վահակ. Կոմմանիրակ, հիմքերը Արհման. 12 »
27. Անգիկ. Գիւղացիական հարցը Ցարանիայում. 7 »
28. Մյասլ Յանանինուան. — Քաջնակց, և նրա հուկասակորդ. 50 »
29. Ժ. Գոյ և ա. Լուսարդ. — Տնտես. զարգ. և Սօցիալիզմ. 5 »
30. Կառուրժակի. — Աղպային հարց. Աւտոմոմիու և Գլուկոցիա 7 »
31. Խորամանի կարգեր. 10 »
32. Միքայ. Յաղումանուան. — Գորդեան անգույցը 20 »
33. Հրամանագույն կուսաների համար 1 »
34. Զերու. — Խառներուային կուի թէօրիայի շարքը 10 »
35. Լ. Շիշի. — Եւսովագույն ծրագիրը 12 »
36. Ա. Հակոբան. — Ինչ է կարգեր են հարկաւոր ժաղովրդին 10 »
37. Ա. Շահամ. — Ակցիքալիքը և դիմոկրատիզմ 30 »
38. Արտարիա. — Վասակյարը. 4 »
39. Արմարիա. — Այս քանի զլուխ հայ-թքքակ. Ընդհար. 25 »

Պատրաստուում են աղպագրութիւնն համար մի շարք ուրիշ գրքեր:

Գիմել թիվին ս. Փարոս», Երեմանեան հրապարակ:

» Երևան Ա. Օհանջանեանին:

» Բագրի Աստրուզնիկ:



ՀՀ Ազգային գրադարան

NL0412095

